

չխօսել ձևն է: Կը բերեմ, կըբերեմ, կ'բերեմ, կբերեմ ձևերից ճիշտը՝ կըբերեմ, կ'առնեմ ձևերն են (կ'երկարի, կ'երևայ, կ'ողջունէ): Առանձին են գրվում օժանդակ բայերը, հարադիրները:

ՏՈՂԱԳՍՐՁ.— Պատկանում է տողադարձի ընդունված կարգը, որ մենք շարադրել ենք ըստ Բաղրատունու, Այտրեյանի ու Այվազյանի: Մի նրկու ավելացում է կատարում:

1. Տողադարձի ժամանակ ընդունված կարգի համաձայն բաղաձայնը միանում է ն, մ, լ, դ, օ, ւ ձայնորդներին՝ շաղա-կրատել, մա-քրել, պա-տուել, եր-կտորդ, բայց Աբեղյանը ճիշտ ձևը համարում է՝ մաք-րել, երկ-րորդ ձևերը: Հիմա էլ այդ է ընդունված:

2. **Ձգ, գբ, ստ, սսլ, սկ, շտ** կապակցություններում լավող, քայց չգրվող ը-ն տողադարձի ժամանակ գրվում է՝ ըգ-դուշանալ, ըշ-տա-սլել, ըս-կիզբ, ըգ-բոսանք: Աբեղյանն ավելի լավ է համարում այդ տիպի բառերը տողադարձել՝ սպա-նել, պգու-շանալ, շտա-սլել ձևով:

3. Լավ չէ՝ աշակեր-տըն, պիտի գրել՝ աշա-կերտն:

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ XX ԳԱՐՈՒՄ

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արևելահայաստանում, ինչպես ասվեց, տարածվում էր հյուսիսարևմտյանը, Լեռնի վկայությամբ՝ հայ հեղափոխական կուսակցությունները հյուսիսարևմտյան ընդունեցին: Բայց վերջինիս հետ տայածվում էր նաև վեժազրույթունը, որ այլ ուղղություսն ուներ: Հյուսիսարևմտյանը վ-ի գործածությունը սահմանափակում էր՝ թողնելով միայն դասական կիրառությունը, իսկ վեժազրույթունը հյուսիս ճանապարհներն էր փակում, թողնելով, որ գործածվի իբրև ու-ի և իւ-ի բաղադրիչ: Եթե արան ավելացնենք նաև ոչ միասնական գրությունը, որ ունեն բառակազմում յ, և-ն, քառամիջում և, է, օ, օ ձայնավորները, և, շ, գ, իս, ղ բաղաձայնները, պարզ կդառնա, թե որքան խառն է եղել ուղղագրության վիճակը, որի դեմ բողոքում են ժամանակի մտավորականները: Հողվածներ են տպագրվում առանձնապես հյուսիսարևմտյան դեմ:

«Արօր»-ի 1910 թ. № 1-ում կարգում ենք. «Արօր»-ի խմբագրությունը ի նկատի առնելով այն խառնաշփոթ գրությունը, որ տիրում է ներկայումս վ հնչյունի գրութեան եղանակի մեջ՝ երկար խորհրդածութիւնից յետոյ որոշեց.—ամեն տեղ, որ լավում է վ հնչյունը գրել վ, այսինքն գրել «վարդ», «վնաս», «նավ», «թիվ», «Ավետիս», «հիվանդ», «յավելված», «Բարվա» և այլն: Միայն եվ հնչյունի համար սովորական (ոչ գլխագիր) գիրը գործածելիս գրել «և», այսինքն գրել՝ և, դե, երևել, բայց, նվրոպա, նվա, նվ: Ներկա համարում զետեղված Ստ. Մալխասյանցի հորվածում («Մի հնչյունին մի գիր») բացատրված են մեր ուղղագրության գիտական և գործնական հիմունքները: Խմբագրությունը որոշեց «Արօր»-ում զետեղել նաև ավանդական գրութեամբ հորվածները:

Մալխասյանցի այս հորվածը 1910 թ. Թիֆլիսում լույս տեսավ նաև առանձին գրքուկով «Մի հնչյունին մի գիր» խորագրով:

Դրանով սկսվեց ուղղագրական մի նոր բանավեճ, որ վեժագրության և հյուսիսարևմտյան պայթար էին անվանում: Հյուսիսարև-

Քյան սկզբունքներին ծանոթացանք, այժմ տեսնենք, թե ինչ բա-
կըգրություններ էր սրաշտպանում Մալխասյանցը:

1. Կեղուն հարատև շարժման ու փոփոխությունների մեջ է, փոփոխ-
վում է նրա թե՛ քերականական, թե՛ հնչյունային կազմը: Կազմ
կրիսի, որ հնչյունային փոփոխությունները միշտ ունենան իրենց
գրային արտահայտությունը, ինչպես եղել է մեր լեզվի պատմու-
թյան մեջ (այսպիսի հետզհետե դարձավ այսօր): Անկանոն երե-
վույթ է (anomalia) մի հնչույթին (Վ) երեք գիր տալ, մի հնչույթին
մի գիր է պետք: Այս բանը նկատի ունենալով՝ որոշ բանասերներ
որոշեցին բաղաձայնական ու-ի փոխարեն և գրել՝ լեզի, թաղի,
թի, դրել: Սրա պաշտպանները (Պ. Աղայան, Ն. Աղունց և ուրիշ-
ներ) այդ տառը կոչեցին ոչ թե վրև, այլ փոքր Վ: Մարդասեր և
մշուսները մերժեցին այս առաջարկը, պնդելով, որ և-ն ձայնավոր
է և առանձին դործածություն չունի: Հին հնդկակաները դրում են,
որ հայերենում յոթ ձայնավոր կա, դրանցից մեկը և-ն է: Այս տառը
հաճախ է ձեռագրերում հանդիպում իւ տառակապակցության փո-
խարեն (հիսիս, հեղէ):

Եթե ու-ի իւ-ի մեջ և-ն բաղաձայն լիներ, կկարդայինք՝ ուվ, իվ
(սուրբ>սովոր, իւր>իվր, կուսք>կովսք, հիւր>հիւր): Այս ար-
տասանվել է eu (ալեր>ալուր) և հետագայում փոխվել իւ-ի
(այլիւ): Նշանակում է և-ն ձայնավորական տառ է և բաղաձայնա-
կան ու-ի փոխարեն չի կարելի գրել, նրա փոխարեն պիտի գրել
բաղաձայն վ տառը:

Բնութագրական է, որ վեզագրության և հյունագրության կողմ-
նակիցները հյունի դիրքային արտասանության պատկերը լրիվ շեն
ներկայացնում: Հյունագիրները նշում են հյունը այն դիրքում, ուր
նա բաղաձայնական հնչում ունի (թև, թիւ, աւալ) և շեն նշում նրա
ձայնավորական հնչումը (ալիւր, բեր), իսկ վեզագիրները նշում են
այդ տառի ձայնավորական հնչումը (հարիւր, ջուր), լուսն նրա
բաղաձայնական հնչման մասին:

2. Եթե աշակերտները ընտելանան և-ն փոքր վ կոչելուն, ավելի
կշիռով են՝ բուր դիրքերում և-ն վ կարգալու: Այդ դեպքում նրանք
կգրեն և դրում էլ են՝ բուրուին (բուրովին), կու (կով), արել
(վարել), մաս (վնաս) և դա նրանից է, որ կարելի է գրել՝ ամենե-
րին, քնուին: Եթե գրում են հաւ, թիւ, ինչո՞ւ չգրեն կու (փոխ. կով),
ևթ կարելի է գրել աւաղ, աւաղ, աւան, ինչո՞ւ չգրել՝ աղ, աղ, ան
և այլն: Մյուս կողմից՝ քանի որ ու-ն և իւ-ն մնում են իբրև ձայնա-
վոր, մարդիկ կշիռով են միութիւն, աղիւս, ճիւն բառերի ընթերցու-
մը, որովհետև դրանք կարող են կարդացվել նաև՝ միութիւն, աղիւս,

ճիւն: Ուրեմն ու-ն կկարդան ուվ, իւ-ն՝ իվ, որովհետև սովորել են,
որ և-ն բաղաձայնի նշանն է: Աղայանի նորամտածության հետևան-
քով կարիք է զգացվում ստեղծել ու հնչույթի և իւ երկհնչյունի հա-
մար նոր տառեր, այբուբենից հանվում է վ տառը, զրկվում ենք և-ի
ձայնավորական (Ֆրանսերեն U) հնչյունի գրից:

Եթե ունենք՝ ղարել, վանք, վան, վաղել, ժով, նաւավար, ինչո՞ւ
չունենանք՝ ավան, Աղվանք, ավաղ, թիվ, պարծվածք, ջե՞՞ որ ներկա-
յումս երկու շարքի հնչյուններն էլ (ւ և վ) նույնն են:

Անդրադառնալով վ-ի գործածության անցյալին, Մալխասյան-
ցը նշում է, որ դեռ Ժ—ԺԱ դարերից գրչության մեջ հանդիպում
են՝ քվիս, ուվս, քազավոր, Դավրի, աղվէս, դվար գրքային
ձևերը, որպիսիք հանդիպում են նաև Մխիթարյանների դործերում՝
«Գիտակ բիզանդեան», «Տարիթերթ» և այլն: Կրակորական սեռի
բայերը վ-ով է արտահայտում Մայաթ-նովայի Լրգերի հրատա-
րակիչ և ծանոթարող Գ. Ախվերդյանը, խորեն Կտեփանեն ավելի
առաջ է դնում «Հայկական աշխարհ»-ում, ուր Վ լուսն, վ է գրում:
Մալխասյանցն այնուհետև վկայակոչում է Մ. Մարգարյանի վերջը հի-
շատակված հոբելանը, ուր նա մերժելով հյունագրությունը, կողմ է
վեզագրությանը: Թեև 1909 թ. «Նոր դպրոց»-ը ժամանակավորա-
պես ընդունեց հյունագրությունը, բայց ուսուցիչները գանգատվում
էին, որ աշակերտները շփոթում են և-ն և վ-ն, դրում են՝ որու
(փոխ. որով), ծուի (ծովի), հուն բառը կարդում են հովն, ձիւ-ն՝
ձիւն, առուի-ն՝ առովի և այլն: Ահա թե ինչու «Արոր»-ի խմբա-
գրությունն ընդունել է վ-ի գրությունը, բոլոր դեպքերում Վ հնչույ-
թը գրում է վ տառով (վան, նալ, հով, հավ, լուսված, գրովել և
այլն), այսինքն մի հնչյունի համար ընդունել է մի գիր:

3. Մալխասյանցը առաջարկում է իբրև բացառություն եվ տա-
ռակապակցության փոխարեն օդտագործել և միացյալ գիրը, օտար
բառերի ու հատուկ անունների ՅՎ-ը արտահայտել եվ տառակա-
պակցությամբ (Եվրոպա, Եվա, Երևան): Խ տառը պիտի պահել
ու-ն և իւ-ն կաղմելու համար, մեկ էլ Ֆրանսերենի Ա-ն արտահայ-
տելու (Հագր, Գումա, Գրան (Հիգո, Դիմա, Դիբան):

4. Գիտական չէ Աղայանի հիմնավորումը, թե՛ վ-ն երկար
տառ է, պիտի ընտրել և-ն:

5. Ժխտ են ոմանք, թե նուրբ տարբերություն կա՝ նաւ և վան,
աւստուած և վնաս բառերում հանդիս եկած բաղաձայնական ու-ի,
և-ի և վ-ի միջև, նաւ և աղնիլ բառերի և-ն ավելի փափուկ է, քան
վնաս և վան բառերի վ-ն, բայց դա այդ տառերի դիրքից է բխում,
և-ն ձայնավորին նախորդելիս կոշտ է արտասանվում: Այդ արտա-

սանտիֆիկացիոնը, սակայն, այն որակին չի հասնում, որ տարբեր հնչյուններ լինեն: Տարբերությունը, ուզում է ասել, հնչյունային է և ոչ թե, նորագույն տերմինով ասած, հնչյութային: Մեր շատ տառեր հնչման գիտնական տարբերություններ ունեն, բայց մնում են իրեն միևնույն հնչյունի (իմա՝ հնչյութի) գծանշանը:

6. Առարկում են, որ եթե վ-ն ընդունենք, ստիպված կլինենք բառի արմատը այլ կերպ գրել, հոլովված ձևը՝ այլ (կատու—կատվի, ձու—ձվի): Դա ճիշտ է, բայց ո՞ր լեզվում չկա այդ երևույթը: Հայերենում հնչյունափոխություն չկա՞ (սեր—սիրել, հավիտեան—հավիտենական, օր—ալուր և այլն), ռուսերենում՝ беры—бежишь, отец—отец և այլն, ֆրանսերենում՝ avoir—avoir, vivre—vif և այլն:

7. Հայերենի ավանդական ուղղագրությունը պահպանելով՝ մենք անկարող կլինենք արտահայտել ու-ն հաջորդ ձայնավորի հետ (լուի-ն պիտի ասենք՝ լվի): Քանի որ իւ-ն պիտի նշանակի թե՛ ու, թե՛ իվ, միշտ էլ կչփոխվի: Ինչպիսիք է Կարգը Дыюор, Дю-лю բառերը: Եթե գրենք դիուօր, հայր կկարգա Դիվուօր: Բայց եթե իւ-ն և ու-ն մեան սոսկ ձայնավորներ, այն ժամանակ Դիուօր-ը կկարգան Դյուուօր, լուի-ն՝ Лун, Գունայ-ը՝ Дунай: Այն ժամանակ թիւ երեսիդ-ը չեն կարգա՞ թիվ երեսիդ:

8. Կարիք չկա փոխել ո—օ, յ—ի, ե—է, յ տառերի ուղղագրությունը, դրանք բարդ չեն: Ժիշտ է, վ-ով գրությունն անսովոր է, բայց դա ժամանակավոր է, հետո սովորական կդառնա:

Մալխասյանցը վերջում գրում է, թե արեւմտահայ և արեւելահայ լեզուների միջև եղած վիճը վ-ի ուղղագրությունից չէ:

Նկատենք, սակայն, որ գոնե այս հարցում Մալխասյանցն իրավացի չէ: Ուղղագրական յուրաքանչյուր փոփոխություն միասնաբար պիտի ընդունվի ամբողջ հայության կողմից: Եթե մի մասն այդ փոփոխությունը չի ընդունում, շարժի կատարել: Ոչ միասնական գրությունը իր հերթին պատճառ է դառնում մեր ժողովրդի երկու հատվածների իրարից հեռացման ու օտարացման:

Վեվագրությունը մերժելով մերժում են Միխիթարյանները: 1910 թ. «Հանդես ամսօրեա»-ում լույս տեսավ Զ. Գ. Մենեվիչյանի «Հայերենի քննական հարցերի մասին» խորագրով հոդվածը (էջ 113—114): Գրում է, թե «նորակներ ու զգվանք» է զգացել «չիմարական հայերենով գրուած» «Արօր» ամսագիրը ձեռքն առնելիս: Սրտարեկ տեսնում է, որ այդ «չիմարական» հայերենը պաշտպանում է ուսումնական Մալխասյանցը: Ինչ որ շարին մեր թղթամիները, ասում է նա, մենք ենք անում, հոնքը շինելու տեղ աչքն ենք հանում: Թող

կոտրէ գրիչը եւ անուր բրիչը «Արօրը», հրկորող համարը տպագրուվելու ատեն «Արօր»-ի խոփը կոտրվի: Թող վիճելի լինեն բայերի խոնարհման ձևերը՝ գտնուի, գտնուի, թե գտնվի, հրկոման ձևերը՝ թի, թվի, թուի, բայց ոչ «անշարժ կալուածք» դարձած դարատր արմատական բառերը:

Այս «անշարժ կալուածք» մտքի դեմ է հանդես գալիս Մալխասյանցը 1910 թ. «Մշակ»-ի № 96-ում՝ «Անշարժութեան կոթորիւն» խորագրով, ուր գրեթե նույն մտքերն են, ինչ նախորդ գրքույկում: «Վ-ի և լ-ի ուղղագրության հաստատուն կանոնը մեղադրում ընդվեց այն օրից, երբ Դ. Աղայանը հանդէս եկավ իր վնասակար չինագրութեամբ», ստեղծեցին օփօր վ», բայց տեսնելով, որ լ-ն ամեն տեղ վ կարդալու պատճառով մարդիկ ու-ն կարդում են ով, իւ-ն՝ իվ (բուն>բովն, տուն>տովն, բուն>բովն, արխն>արիվն, անկխն>անկիվն), բարոյեցին ու և իւ տառերի փոխարեն նոր տառեր հնարել, դուրս դրեցին Մալխոցի վ-ն: Եթե մեր ու-ի փոխարեն գրենք, օրինակ, սուսերեն y-ն, իւ-ի փոխարեն՝ յօ, կունենանք հետևյալ գրությունը՝ սկուր (կօւր) սուամահ (սուամահ) է լինյւմ, նրան յշարկիւն ու (օւ) է դարձնյւմ: նմյլ լայիլյլ յղղաւորյթեան»: Այս շարիքի դեմ կովելու համար հանդես եկավ վեվագրությունը, «նա մի հակադեղ է փենագրութեան դէմ», գրում է Մալխասյանցը: Շարունակելով նախորդներին նման լ-ն ձայնավոր համարել, պնդում է, թե չի կարելի ձայնատր փուլ գրել, բայց բաղաձայն վ կարդալ (թեև գրում է, որ հին հնչումը փոխվել է), հիշատակում, որ հնում էլ լ-ն վ են կարդացել, որի համար թաւացման նշան են օգտագործել: Մալխասյանցն այս հոդվածում հակասութեան մեջ է ընկնում: Մի կողմից, գրում է, թե լ-ն ձայնավոր է և չի կարելի ձայնավոր լ գրել, բաղաձայն վ կարդալ (ստիպարճի ոչ մի լեզվում ձայնավորը բաղաձայն չեն կարդում), մյուս կողմից, վկայակոչելով Հյուսիսային, գրում է, որ բաղաձայնական ու-ն, լ-ն և վ-ն կարդացվում են v: Հյուսիսային իր քերականության մեջ նույնիսկ գրաբարի բառերում ու-ն, լ-ն, վ-ն տառագրուած է v-ով, եթե v են հնչում (Vahan, vuas, thagavor, avan, anvaver, astvac, nver, nvagem, griv, tiv, բայց՝ hlupatos, glut, tun, anun, araur (արաւր արօր), aurhnem «սուրհնամ» և այլն): Վկայակոչում է պրոֆ. Մառնի, թե նա վ-ն արտահայտում էր v, լ-ն՝ w տառերով, բայց նշում, որ այդ երկուսն էլ արդեն մի հնչույթ են, նրանց տարբերությունը վերացել է, մի տառով պիտի արտահայտել էլ ուր մնաց Մալխասյանցի նշած ձայնավորական լ-ն եւրոպա, բոգուոր, լաւ բառերում:

Մալխասյանցը հակասութիւնն է տեսնում այն բանում, որ հայերեն բառերը եւրոպական գրերով արտահայտելիս հետևում ենք հնչյունային դրութեանը, իսկ հայերեն գրերով արտահայտելիս՝ ավանդական:

Իր «Հայոց լեզուի ուղղագրութիւն» հոգովածում՝ Մենելիշյանը տրտնջում է, որ «Արորի» խնամքը չկարողացավ կոտրել» և II համարն էլ լույս աւետավ նույն ուղղագրութեամբ: «Մեկ հնչյունին մեկ գիր»-ը սխալ վարդապետութեան է, պրոս է նա, քիչ լեզուներ կան այդ սկզբունքով: Արգի հունարենի մի ի հնչյունը հինգ ձևով է արտահայտվում, գերմանացիք ֆ հնչյունը երկու տառով են արտահայտում, ֆրանսիացիք ֆ հատ է ունեն, հնչյունից շատ հետո է անգլիացիների գրութիւնը: Շատ էլ ցանկալի է հնչյունային գրութիւնը, բայց իրականում հնարավոր չէ, դա տեսական մի վարդապետութիւնն է, որ դժվար է իրագործել լեզուների դարգացման ընթացքում: Այնուհետև Մենելիշյանը շարադրում է հետևյալ կանոնները: 1. է և ու տառերից հետո վ կամ ւ տառերը շեն լինում: 2. Ս-ից հետո պարզ բառերում միշտ ւ է լինում, վ չի լինում: Կան միայն զավարս, զավին ձևերը: 3. Ածանցված և բարդ բառերում վ-ն պահպանվում է (նաւավար, մանկավարժ, անվախճան, անվճար, լուսավառ): 4. Ե-ից հետո պարզ բառերում միշտ ւ է լինում, ոչ՝ վ (թեւ, սեւ), բացառութեամբ՝ օթեվանք, դայեվանք բաղադրութիւնների: 5. Ի տառից հետո միշտ ւ է լինում՝ ոչ վ (աթնիւ, հաշիւ, լրիւ, հովիւ): 6. Ըվ և ըւ ձևերը պաշտպանելի չեն, հայերենում այդ հնչյունի համար կա ու տառը (նուագ, սուագ, նուէր, Աղուանէ, ոչ՝ սըրվակ—սըրուակ, նվէր—նըւէր և այլն): 7. Սբբ իւ-ին հաջորդում է մի այլ ազմատական գիր, կարգացվում է՝ քիւ, բիւ, նիւ: Հոգը ւ-ի վ հնչումը չի փոխում՝ անիւք, բիւք, ազնիւք և այլն: Եթե աշակերտը ուլ-ը ուլլ, կուն կուլն է կարգում, նրան պիտի բացատրել, որ բաղաձայնից առաջ ու-ն Ա(ու) է կարգացվում: 8. Ո տառից հետո միշտ գրվում է վ տառը (կսվ, հով, մով, սսվ, ծով): Չպիտի թույլ տալ ավանդական ուղղագրութեան շեղումներ, հիմա յուսամ-ը հուսամ են գրում, վաղը ցիւ-ը ձիւ կղրեն: «Կղատապարտեմք նւերն ալ, նվերն ալ, իմնանք հաստատուն նուէրի վրա: Փոխանակ «մէկ հնչյունին մէկ գիր» ըսելու, կառաջարկենք մէկ հայու մէկ լեզու»: Մենելիշյանը հոգովածի վերջում Աղայանի առաջարկը շարիքների փոքրագույն է համարում, իսկ Մալխասյանցինը՝ դատապարտելի: Իր հաջորդ հոգովածում՝ «Ուղղագրական թիւրիմացութիւն» խորա-

գրով, Մալխասյանցը վկայակոչում է Ժէ դարի ֆրանսիացի քերական Պօլսոյնայի գրութիւնը՝ «Մի հնչյունին մի գիր»: Ըստ այդ քերականի՝ յորաքանչյուր հնչյուն պիտի արտահայտվի մի առանձին գրով, չպիտի գրվի մի բան, որ չի արտասանվում: Յորաքանչյուր գիր մի հնչյունի նշան պիտի լինի, միևնույն հնչյունը տարբեր գրերով չպիտի արտահայտել: Ըստ Գրոտի, կանոնավոր է այն զրութիւնը, որի յորաքանչյուր տառը համապատասխանում է մի հնչյունին: Բուր լեզուների գրութեան կեսից ավելին հնչյունային է, որնրի ստեղծման ժամանակ էլ գրութիւնը հնչյունային է լինում: Մալխասյանցի կարծիքով՝ միայն հետագիւց, պահպանողական ուժերն են սրղելում անցնելու հնչյունային ուղղագրութեան, նրանք են կառչած ավանդական գրութեանը: Թեև քիչ հետո այն հարցին, ին ինչու են քաղաքակիրթ սուղերը պահպանում ավանդական ուղղագրութիւնը, պատասխանում է.

1. Կան լեզուներ, որոնց գրութիւնից խոսակցականն ալքան է հեռացել, որ փոխել գրութիւնը, նշանակում է անհասկանալի դարձնել անցյալի դրականութեան ու մշակութիւնը: 2. Կան լեզուներ էլ, որոնց բառերի արտասանութիւնը կղժվարանա, եթե ուղղագրութիւնը դարձնեն հնչյունային, որովհետև շատ են նրանց նրբերանգները: 3. Մի շարք լեզուների շատ բառեր հնչմամբ նույնն են և միայն գրութեամբ են իրարից տարբերվում: Եթե գրութիւնը հնչյունային դառնա, շիտթ կստեղծվի: Բանավորում այդ բառերը տարբերվում են իրարից առոգանութեամբ, շեշտով, գրավորում՝ ոչ: 4. Որոշ լեզուներում միևնույն հնչյունի տարբեր գրութիւնը հատկացված է օտարազգի բառերին կամ արվում է ստուգաբանական որոշակիութեան մտցնելու համար: 5. Եվ վերջապէս, լեզուներ էլ կան, որ պահպանում են ավանդական ուղղագրութիւնը հնամուկների, շովիտիստների ստոճատով (օրինակ՝ հունարենը):

1876 թ. Գերմանիայի ուսուցչական ժողովը որոշեց թևիկացնել, հեշտացնել ուղղագրութիւնը, բայց Բիսմարկը 1880 թ. փետրվարի շրջաբերականով արգելեց այդ փոփոխութիւնը, որ արգեն տարածված էր: Նոր ուղղագրութեանը դեմ են նաև ուս պահանջակիւնները, նրանք էլ հետևում են ավանդապահ անգլիացիներին ու ֆրանսիացիներին: Գիտնականները տրտնջում են, որ Գերմանիայում, Յրանսիայում, Անգլիայում հեշտ չեն զրազեւ դառնում, 6—8 տարի պրագիտութիւն են սովորում: Նշանավոր սանսկրիտագետ Վիլյամ Ջոնսը նկատում է, թե անգլերենի ուղղագրութեան անկատարութիւնը հասնում է անհեթեթութեան և գրեթե ծաղրելի է: Այնուհետև Մալխասյանցը վկայակոչում է ֆրանսիա-

կան հանրագիտարանը, որ դրված է. «Յրանսիական արդի ուղ-
ղագրությունը ոչ մի ընդհանուր կանոնի չէ հեթ-արկված, նա ոչ
հնչական է, ոչ ստուգաբանական, ոչ համեմատական է և ոչ տրա-
մարանական: Իր էությունը նա անկանոն է և կամայական: Ինչ կող-
մից էլ նայելու լինենք, այդ ուղղագրությունը լի է դժվարություն-
ներով և վաղուց է զգացվում նրա ռեֆորմի կարիքը»: Հանրագի-
տարանի հոդվածագիրը ցավում է, որ երեխաներն այնքան շատ
թանկագին ժամանակ են կորցնում գրագետ դասնալու համար:
Ուղղագրության բարելավումը, ասում է նա, ազգային բարիք կլի-
նի, կհեշտացնի ֆրանսերենի սարածմանը այլ երկրներում⁵:

Այս շեղումների վիճակը մեզ ասում է՝ մի՛ դաք մեր ետևից,
մեր վիճակում կընկնեք, եղրակացնում է Մալխասյանցը: Մյուս
կողմից, պետք է հաշվի առնել, որ մեր ուղղագրության համակար-
գը հնչյունային է, այդպիսին է եղել, այդպիսին էլ պիտի պահպան-
վի:

Բառամիջում վ, ֆ և գրելու համար գրողը պիտի բառակազ-
մությունն իմանա: Միայն է համարում ձայնավորանախորդ ու-ն
միշտ ըլ կարգալը, սրուակ, Աղուանք, արչուիա բառերը ընք կար-
գում՝ սըրբվակ, Աղբվանք, այնբլվիա, ալ՝ սըրբվակ, Աղվանք, արչ-
լուիա, Իսկ քաղածախից առաջ էլ միշտ չէ, որ ու է. կան բառեր,
որ այդ դիրքում ու-ն վ է կարգացվում (Գունայ > Գըվնայ, տուն-
չեան > տըսընքան): Սրանք են Մալխասյանցի առարկումները:

«Արոր»-ի խմբագիր Սեդրակ Մանդինյանը իր բաց նամակում՝
ուղղված Մենեվիլյանին, գրում է, որ եթե Մենեվիլյանը մերժում
է վեվամուլությունը, ապա տրամաբանական է, որ խոտելի պիտի
համարի հյունամուլությունը, որ արդեն շատ խոտն է աղճատել ու
խառնակել մեր լեզուն: Հյունամուլները շտապիցին Մենեվիլյանին
իրենց կողմնակից հռչակել: Վեվամուլությունը տակավին «Արոր»-ի
սահմաններից դուրս չի եկել, իսկ հյունամուլությունը երեսուն տա-
րի է որպես համաճարակ ախտ հետզհետե ավելի է ավերումներ
դործում մեր լեզվում: Ինչպե՞ս է, որ Մենեվիլյանը երեսուն տարի
նւլ, Աստած, անան, յոզած, քի, ըլի է կարգացել ու չի նողկա-
ցել, իսկ «Արոր»-ի մի անգամ ազտագործած եվ-ից նողկանք է
զգում:

Իր պատասխանում Մենեվիլյանը վիրավորվում է, որ իրեն
հյունագիրների կողմնակից են համարում: Ո՛չ նւլ, ո՛չ գուլառ,
բնականը, սովորականը, ավանդականը ու-ն է, եթե ուզում ենք մի-
օրինակյալ հայերեն ուղղագրություն ունենալ: «Փոյթ տանենք
Մալխասյանն ու Աղայանցը հաշտեցնելու Մեսրոպայ և Սահակայ

գրատախտակին առչւն⁶): Մենեվիլյանը զարմանում է, որ քաղա-
տը, եւ, շնոհիլը դրելը հետադիմական է, «անշարժութիւն», իսկ
քաղալոր, եվ, շնոհիլը դրելը՝ առաջադիմական: Զեղը—զեղը, սէր—
սեր, պետ—պէտ, յանգ—հանք, յով (սհո՞, դիպի ո՞ւր) և հով, յող
(անամ) «անհոգ նստիլ» և հող բառազույգերն առաջ տարբեր էին
հնչում, այժմ միասեակ են և միայն գրութայն կարելի է տար-
բերել միմյանցից, նշանակում է պիտի պահել ավանդական ուղ-
ղագրությունը: Մալխասյանցի ուղղագրությունը սխալ է, եւ սկը-
սունկ Հայաստանի» հետևողն է: Վկայակոչելով Բագրատունուն, ֆե
լպիտի ւ-ն վ հնչել, ռամիկն է այդպես հնչում, հմտաները պիտի
զգուշանան ռամկանալուց, եղրակացնում է՝ կամայականությունը
լեզուն կործանման կմատնի:

Հարցը, սակայն, սրանով չի սպառվում, շարունակվում է բա-
նավեք: Նշենք կարծիքներից ամենակարևորները: Հոդվածագիր-
ներից մեկը՝ Արտ. Ստամբուլյան (Յդեսիա, հայկական դպրոցի ու-
սուցիչ), բողոքում է, որ ուղղագրությունը քառասյին վիճակում է:
Ցավում է, որ կորչում է մեսրոպյան աստվածապարթև ու դարերով
դործադրված կարգը և պահանջում ամուր պահել հինը, ընթ կարիք
կա ուղղագրությունը վտնել, այդ զնպքում պիտի վ-ն պահել, ո-
րովհետև ւ-ի հետ շատ դժվարություններ են կապված: Պատմում
է, որ ո և է տառերն անցնելուց հետո աշակերտները ու-ն ով են
կարդում, մութ-ը՝ մովր, իւղ-ը՝ իվղ, առիւծը՝ առիվծ, սկիւռ-ը՝
սկիվո: Մանավանդ որ այդ դպրոցի երեխաները դպրոցից դուրս
հայերեն չեն խոսում, հայերենը նրանց համար օտար լեզու է:
Օտար շրջապատի հայ դպրոցների համար լավագույնը որքան
հնչյուն, այնքան տառ սկզբունքն է:

Մի այլ հոդվածագիր՝ Մկր. Նավասարդյան⁶, գտնելով, որ մեր
ուղղագրությունը շատ դժվար է իր նույնահնչյուն ե—է, հ—յ, ո—օ,
վ—ւ կրկնակի տառերով, այ, եա, եօ, ոյ, իւ, ու երկրաբարաներով,
առաջադրում է. 1. Բառասկզբի յ-ի փոխարեն գործածել հ (հահախ,
հանցանք, հանձնել, Հակոբ, Հովսէփ, Հովհաննէս և այլն), բառա-
վերջի համար յ-ն չգրել (վրա, քահանա, հսկա, խաղա, երթա): 2.
Բառամիջում գրել ե, իսկ է-ն պահել միայն բարդ և ժանցավոր
բառերում (օրենք, ասպարեզ, քարեղեն, շահանա և ամենաէական,
մանրէաբան): 3. Բոլոր բառերից, այդ թվում նաև օտար, հանել օ
տառը և դրել ո: Օ-ն պահել բառակզբում (օր, օդ, օրինակ, օգ-
նութիւն) և օ-ով սկսվող բառերի բարդված ու ժանցված ձևերում
(անօդ, իւրօրինակ, փոխօգնութիւն): Գրել ծանօթ, առաւտ, պաշ-
տոն, Լոնդոն, Գլադստոն: 4. Բաղաձայնական ւ-ի փոխարեն բոլոր

ղեկավարում գրել Վ տասը (Տավատ, լավ, հավ, հաշիվ, արված) 5. Ճիշտ է նկատում «Աղբիւր»-ում նիկ. Տեր-Ղևոնդյանը, որ ունի ձայնավոր է, ինչպես ա, օ, ի, է ձայնավորները Այս երկուստ ձայնավորի փոխարեն գոյածածել նրա մի բաղադրիչը՝ ա-ն և գրել՝ րեմն, ընդունել, անուշ, կարկատ, արխ, ար և այլն՝ 6. Վերացնել դիտատառերի պակասը և ձևերը, օգտագործել փոքրատառերի միայն մեծացրած ձևերը (խորեն, կորին, արշակ, վահան, դուրդեն)։ Շփոթութիւնից խուսափելու համար օգտագործել Ա. Արամյանյանի առաջարկած Տ առաք, որը տարբերվում է ա-ից։ Հեշտացնենք դրագիտութեան տեխնիկան, որ այն հեշտ տարածվի հայ ժողովրդի մեջ, եզրափակում է հոգվածագիրը։

«Արոր»-ի 1910 թ. № 5-ում վեճագրութեան «արտարանութեամբ հանդես է գալիս Ա. Նաղարեթյանը։ «Ի՞նչ է ուղղագրութիւնը» խորագրով այդ հոգվածում նախ դիտողութիւն է արվում Մենելիշյանին, որ փոխանակ դիտականոթեն ապացուցելու վեճագրութեան սխալը, անիծում ու հաշտում է։ Ուղղագրութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսակետից մտավորականութեանը հոգվածագիրը բաժանում է չորս խմբի՝ ա) ընդհանրապես դեմ են բոլոր տեսակի բարեփոխումներին, բ) հաշտվում են ներկա քառային գրութեան հետ և դեմ են նոր փոփոխութեաններին, գ) կողմ են վեճագրութեանը, դ) պահանջում են ուղղագրութեան արմատական բարեփոխութիւն։ Հոգվածագիրը, չգիտես ինչու, անտեսում է հիւնադիրներին։ Ուղղագրութեանը, ասում է նա, պիտի հարմարվի լեզվի վիճակին և ոչ հակառակը։ Այնուհետև, օգտվելով Յա. Գրոտի գրքից, ներկայացնում է եվրոպական լեզուներում ուղղագրութեան վիճակը, նշանավոր լեզվաբանների առաջարկները ուղղագրութեան վերաբերյալ, որոնք տեսականորեն հանդում են այն եզրակացութեան, որ լավագույն ուղղագրութեանը հնչյունայինն է, բայց իրականում դա շատ դժվար է իրագործել, ինչպես երևում է գերմաներենի, ֆրանսերենի, անգլերենի, ռուսերենի ուղղագրութեան պատմութեանից։ Հոգվածի վերջում հեղինակն անգրագետնում է և տառին, Աշխարհագրում ա-ն սոսկ նշան է և ոչ թե տառ, ասում է նա։ Գուցի իր սեփական հնչյունը, այբուբենում ավելորդ տեղ է զբաղեցնում, ոչ մի բառ չունենք, որ ա-ով սկսվի։ Դա օժանդակ նշան է ու և ի կազմելու համար։ Ինչու Վ հնչող ա-ն Վ տառով չփոխարինենք, ինչու երկու տառ պահենք միևնույն հնչյունի համար՝ Վ-ն կարող է իր գիրքային տարատարատարութեանը ունենալ, ինչպես ռուսերենի В-ն (Вор, Кровь)։ Այն կանոնը, թե երբ պետք է Վ հնչյունը ու տառով արտահայտել, երբ՝ և և երբ՝ Վ, վաղուց

խախտվել է։ Ռուսաստանի ուղղագրական 1885 թ. որոշեց ամեն կերպ պահպանել ընդունված, հաստատված ուղղագրական սովորույթը, շեղվել նրանից միայն այն դեպքում, երբ շեղումը քննադատը և և սովել է դրական հետևանք, հին սխալ է և անհետևողական։ Այդպես էլ հիւնագրութեանն է սխալ և անհետևողական։ Վ-ն կենդանի է, հակառակ անկենդան ա-ի, ուստի նա էլ պիտի մնա։ Փակագծերի մեջ ասենք, որ այս նաղարեթյանը 1912 թ. «Մշակում» տպագրված իր հոգվածում գովում է «Ընկեր»-ի նախաձեռնութեանը, որ ունի հանել է գործածութեանից, բառակցի յ-ի փոխարեն և գրել Այդ հոգվածը արտատպագրված է «Ընկեր»-ի 1912 թվականի № 31-ում, բայց հյունագրութեամբ, թեև ինքը վեճագրութեան կողմնակից է, հոգվածում կան լեզվի, գործածում, հովանաւորութեան, գումարակին, հրապարակ և այլն։

1911 թ. «Էմինյան ազդագրական ժողովածու»-ի 8-րդ հատորում Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտութիւն» հոգվածում առաջարկում է բարբառների նկարագրութեան համար կիրառել «մի հնչյունին մի դիր» սկզբունքը, գրել՝ էրեկ, օսկի, վօտ, վօսկի, հավ, թագավոր, Բառավերջի յ-ն չգրել, բառակցի յ-ն արտասանել յ և ոչ՝ հ։ Սա, իհարկե, բարբառը նկարագրելու միակ միջոցն է։ Բարբառի հնչյունը ճիշտ արտահայտելու լավագույն միջոցը յուրաքանչյուր հնչյուն մի տառով արտահայտելն է։ Սակայն ուղղագրութեան այս սկզբունքը Աճառյանը չի կիրառում գրական լեզվով գրելիս։ Իր անունը գրում է «Հրաչեայ» ձևով։

«Մշակ»-ի 1910 թ. 47, 60, 68 և 118 համարներում լույս է տեսնում մի նոր առաջարկութեան «Ալբուրների ընթացում» խորագրով (հեղինակ՝ Լ. Մարկոսյան)։ Գտնելով, որ մեր ուղղագրութեանը մի շարքի տեսանքն իստանկութեան է, ինքն էլ իր հերթին է խառնում գրութեանը։ Պահպանողականութեանը, ասում է նա, ու-ի անդարձ անկումն է ողբում, Աղայանը քառորդ դար է ա-ի արտասանութեան է փառաբանում, բայց նրա դեմ ահեղ սպառնալիք է վիթխարի վ-ն։ Ամենանպատակահարմարը «մի հնչյունին մի գիր» սկզբունքն է, բայց ոչ Մարխասյանցի վեճագրութեանը։ Վ-ն երկար է, մեծ, շատ տեղ է զբաղում, իսկ ա-ն կարճ է, փոքր, քիչ տեղ է զբաղում, ուստի պիտի ու-ի և ի-ի փոխարեն նոր տառեր ստեղծել։ Հոգվածագիրը սրանով չի բավարարվում, հենվելով հնչյունային գրութեան սկզբունքին՝ առաջարկում է փոխել նաև և—յ, ե—է, օ—օ տառերի գրութեանը (№ 60)։ Ամենուրեք, որ լավում է և, գրել և տառը, բառակցի համար յ-ն չգրել։ 3-ն պահել սոսկ իրական կիսաձայնի տառ և գրանով կազմել յու (իւ), յա (եա), իյ, որ կարո-

դանանք որեւ տասներկն 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000.

1. Ամենուրեք Վ հնչյունը գրել և տառով, վ-ն պահել իբրև նրա մեծատառը, որովհետև և-ի մեծատառը (Վ) շփոթվում է ի-ի հետ, ն-ը պահել հին ձևով (և, ն)։ 2. Հ հնչյունը միշտ գրել Ռ տառով, յ-ն պահել միայն իբրև կիսաձայնի արտահայտություն (դոյական, այր), բառակերպի համը յ-ն գրել։ 3. ՎՕ հնչյունակապակցությունն արտահայտել 10 տառակապակցությամբ (ո-ի փոխարեն), օ հնչյունն ամենուրեք գրել օ տառով։ 4. Ու սլարգ հնչյունի համար օգտագործել օ տառը, իսկ 10-ն կտղմել յ-ով, որեմն յո-ն կարգալ իւ (յու)։ 5. Յէ նրկհնչյունը գրել և տառով։ Ամենուրեք, որ լսվում է օ հնչյունը, գրել է տառը (հրէկ, Ծրէան, Եղկէլի, Կէրէրով և այլն)։ Մարկոսյանը մոռացել է, որ եթէ գրենք անլրէս, անլրանէլի, ան-օղօֆ, կմթաղնենք բառի կազմությունը։ Վերջում հոգվածագիրն առաջարկում է ստեղծել ուղղագրական մի մարմին, որի վճիռը պարտադիր ընդի բոլորին։

«Մշակ»-ի նույն թվի № 70-ում «Ուղղագրութեան խնդիր» խորագրի տակ հոգվածագիրը (Մարուխան) մեթո՞ւմ է թե՛ հյուսա-գրությունը, թե՛ վե՛վագրությունը։ Ասու ձևից կազմվել են առուի,

առուով և մյուս ձևերը, Լրք գրում ենք՝ առվի մթազնում ենք բառի արմատը։ Նույնը և անան (կամ անվան), ասուած (աստված) ձև-վերում։ Օտարազգի հին անունների ուղղագրությունը պահպանել, իսկ նոր անուններում Վ-ն արտահայտել վ տառով (վարչակա, Մոսկովա)։ Մյուսը է՝ Մարխասայանցի ստաջարիք՝ և գրել իւ-ի փոխա-րեն (Չագօ, Պանա)։

Հնգվական հարցերում շատ ավելի արմատական փոփոխու-թյուններ էր պահանջում «Ընկեր» շարաթատերերը, որի խմբագիրն էր փիլիսոփայության դոկտոր Սեդրակ Թառայանը։ Հանդես գալով ժողովրդի (ոսմկի) անունից՝ նա նախնայաց ուղղագրությունը և աշխարհաբար գրական լեզուն գործածությունից ուղում է հանել։ Մինչև 1906 թվականից իրար հետևից հետևողականորեն տպա-գրում է հոգվածներ գրաբարի ուղղագրության, այլև աշխարհաբար գրական լեզվի դեմ, առաջ քաշելով ռամկի լեզու, ռամկի խոսք ըս-կրթությունը, ծայրահեղության հասցնելով՝ «Գրիք այնպես, ինչպես խոսում ես, խոսիր այնպես, ինչպես գրում ես» սկզբունքը։ Որոշ հոգվածագիրներ գրություն հարցում ոչ մի բացառություն չեն հան-դուրժում և պահանջում են լրիվ փոխել ուղղագրությունը ըստ ար-տասանության (1911 թ., №№ 14, 18, 32, 41, 43 և այլն)։

«Ընկեր»-ի № 18-ում «Ուղղագրութեան հարց» հոգվածում (Արտ. Օհանջանյան) դարձյալ նշվում է, թե մեր ուղղագրության դժվարությունը բխում է նրանից, որ այնպես չենք գրում, ինչպես ասում ենք։ Գրում ենք յետո (յիէսվօյ), բարեգործ, բուր, ոգ, օձ, յարկ, յարգ, կարդում ենք՝ հետօ, բարեգործ, բուր, օց, հարկ, հարգ։ Հարկավոր է հետևել էսպերանտո լեզվի հիմնադիր Զամեն-հոֆին և կատարել նրա երկու կանոնը՝ գրել այնպես, ինչպես ար-տասանվում է և տողադարձն ազատել կանոններից։ Այս հոգվածի տակ գրված է խմբագրության հայտարարությունը։

1. Ուղղագրությունը հեշտացնելու նպատակով թույլ տալ թղղ-թակցին ազատ լինել։ 2. Ուն հետզհետե՛ փոխարինել օ-ով, որտեղ ուն վօ է հնչում, գրել 10 կամ վօ։ Նույն թվականի № 32-ում մի այլ թղթակից առաջարկում է բոլոր դեպքերում օ-ն գրել օ տառով, Վ հնչյունը՝ վ, և հնչյունը՝ և, իւ-ն՝ յու, Էա-ն՝ յա, Էօ-ն՝ յո տառե-րով։ Վօ հնչյունակապակցությունը (ո տառը) գրել վօ տառակա-պակցությամբ, բառամիջի ոչ տառակապակցությունը, որ կարգաց-վում է ույ, փոխարինել ույ տառակապակցությամբ, համը յ-ն վերացնել։

№ 32-ում նույն Արտ. Օհանջանյանը «Նոր ուղղագրութիւն» հոգվածում առաջարկում է.

1. օ հնչյունն արտահայտել միայն օ տառով,

2. v հնչյունը՝ Վ՝ տառով, իսկ u-ն թողնել ու, իւ կապակցութիւններում,

3. որտեղ և է լավում, գրել և տառը, յ-ն թողնել իբրև կիսաձայն,

4. իւ, եա, եօ երկհնչյուն տառակապակցութիւնների փոխարեն գրել յու, յա. յո տառակապակցութիւնները,

5. բառամիջի ոչ տառակապակցութեան փոխարեն գրել հընչման համաձայն ուչ տառակապակցութիւնը,

6. դուրս գցել և չգրել բառալեզուի համը յ-ն: Իր առաջարկի համաձայն՝ հողվածադիրն էլ գրում է՝ սովորում է, դպրոցներում, ստարախօս, վօր, դժվար, շուտով, թօղնել, բողօքները. վօշ, դա, տա, բարենօրօգում, բարեփօխութիւնը:

Թերթիս № 41-ի «Բամակաբար լեզու» հոդվածում, որ անստորագիր է և ըստ երևույթին խմբագիր Ս. Թառայանին է, գրված է, թե՛ 1. այսպես կոչված աշխարհաբար լեզուն այնքան էլ մատչելի չէ ժողովրդին, մեր լեզվի համար նոյ շքուն է սկսվում. 2. ուստի պիտի թողնել գրական աշխարհաբարը և անցնել բամակական լեզվին, ինչպես մի ժամանակի թողեցին գրաբարը, անցան աշխարհաբարին, 3. աշխարհաբարը դեն չենտել, այլ օգտագործել նրա ձևերը բամակական լեզվում, ինչպես գրաբարն օգտագործվում էր աշխարհաբարում: Աշխարհաբարը թարմացնելով ու նորոգելով՝ առաջ տանել գեպի բամակականը, այսինքն աշխարհաբարը բամակական դարձնել: Բերելով քաղվածքներ Ահարոնյանից, Թումանյանից և Փափազյանից՝ ձգտում է ջուլց տալ, որ նրանց գրվածքների լեզուն անհասկանալի է ժողովրդին: «Ընկերք» այսօրվա «Հյուսիսափայլն» է, հայտարարում է նա: Բայց ժողովրդական լեզուն, ուսկորեն քարոզողը ը հողի փոխարեն օգտագործում է և հողը բոլոր գեպքերում: Օրինակ, գրում է՝ սպաշտայաններն վերջն հաղթեցին, ընթերցանութիւնն շատերին մատչելի դարձաւ, խօսմբողջովին շինք վերացնում աշխարհաբարն, նորօգելով առաջ բերենք բամակաբարն, ինչպէս խօսում է բամիկ ժողովուրդին» և այլն: Մի ձև, որ խորթ է բանավոր արտահայտութեանը, ժողովրդական խոսքին հատկապես: Հողվածք գրված է, նախորդ համարում արված առաջարկութեան համաձայն՝ եօր, ժողովրդին, բօրոր, դժար, վրա, կողմից, ամբողջովին, վօր, քանօր, հարկաօր, փօրձէր, եօրօգում և այլն:

Հետաքրքիր է, թե Թառայանը ո՞ր բամակական է հիմք ընդունում, չէ՞ որ շատ են մեր բարբառներն ու խոսվածքները, ո՞ր բարբառն է աշխարհաբար գրական լեզվի փոխարեն առաջ քա-

շում: Մեր բազմաբարբառ ժողովրդի միութեան միակ միջոցը միասնական գրական լեզուն է, քայքայել այդ միասնական լեզուն և հետևել բարբառներին, կամ բամակական լեզվին, նշանակում է բանդել այդ միութեանը: Հակառակը պիտի ասեք Թառայանը՝ բարձրացնել ժողովրդի կրթական մակարդակը, գրույիտութեանը՝ մեծացնելով զարգացման և ուսումնական այլ օջախների ցանցը: Այլ բան է գրական լեզուն հարստացնել ժողովրդական կենդանի խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցներով, այլ բան՝ գրական լեզվի փոխարեն ստեղծել նոր, բամակական լեզու, որ սխալ է:

43-րդ համարում «Մետափի մօռացած տառեր» հոդվածում, որ դարձյալ անստորագիր է և հավանաբար խմբագրիներ, հեղինակը կարծում է, թե Մաշտոցի ժամանակ ու-ն վուլ են կարգացել, ոչ-ը՝ վոլ, իւ-ն՝ իւլ, իսկ իրենց հրամայում են կարգալ ու-ն՝ Կ, ոչ-ը՝ Կն, իւ-ն՝ Կու: Մի՞թե, ասում է նա, Մետափի մօռացել է Կ-ի, Կն-ի, Կու-ի համար տառեր հնարել, որ ու և յ, ի և յ տառերի կապակցութեամբ է արտահայտել: Նրա կարծիքով՝ հիշյալ տառակապակցութիւնները երկարբառներ չեն եղել: Կարծում է, թե Կ, Կու, Կն երկհնչյունները նոր են առաջացել հայերենում, ուստի առաջարկում է ստեղծել նրանց համար նոր տառեր: Ու և ոչ տառակապակցութիւնների ու-ն փոխարինել օ-ով և փոխանակ գրելու տուն, գրում է տուն, յոյս՝ յոյս: «Այդ ձևերն մտցնելու ենք փօքը առ փօքը, որպէսզի ընթերցողի աչքերն ընտելանան»,— եզրագրվում է հոդվածագիրը:

Թառայանի այս առաջարկութեանը ենթարկվում են սուր քննադատութեան: Հողվածագիրներից մեկը բողոքում է, որ «Եթե ամեն մի բախտանքի իր ուղածով գրի, ինչ կլինի մեր գրութեան հալը»: Ոչ ոք իրավունք չունի ազավազելու մեր ուղղագրութեանը:

Իր այս «նորարարութեան» մեջ «Ընկերք»-ն ավելի է խորանում 1912 թ. համարներում: Փոխանակ բամակին սովորեցնելու գրական լեզվի նորմաները, ձգտում է գրական լեզուն հասցնել բարբառի աստիճանին, նույնիսկ բաղաձայններն է գրում ըստ արտասանութեան: Առաջադիմութեան քարոզելով՝ մեկօրդական, նիհիլիստական վերաբերմունք է մշակում մեր անցյալի մշակութի նկատմամբ: «Հարկաօր է, ասում է նա, ջարթել հնագրան քերական Զամչեանի դուխն, ազատել հայ աշխատաւորին քերականական բժախեղի օրէնսգրութիւնից: Փշրել կզերամիտ ու ֆօրմալիստ հօ-

գինքրի հնացած լնդական աղագրական ցանցերն ու շղթաներն» (1912 թ., № 19)։ Թառայանք պաշտպանում է հյուանագրությունը, բայց թերթի թղթակիցները, ընդունելով ուղղագրական նրա փոփոխությունները, առաջարկում են լ-ի փոխարեն վ տառը գործածել (№ 4)։

Նրանք պատմում են, որ սչարաբաստիկս լ-ն իր իսկական դերից (ու, իւ) վ-ի դերն ստանձնելով՝ մեծ խոչընդոտաների (ըստ թերթի՝ խօշնդօտաների) աղբյուր է դարձել ուսման գործում։ Նասանգամ աշակերտները օվ (ով), իւր, վարդ, վարել դրելու փոխարեն գրում են՝ ու, իվր, արդ, արել արեւու փոխարեն։

Պահանջելով ազատվել «կղերամիտ» բերականների հնարած լնդվական «ցանցերից ու շղթաներից»՝ Թառայանը չի խնայում և Մեսրոպի այբուբենը։ Նրա կարծիքով՝ հայերը մեր այբուբենում շատ հնչյուններ չեն տարբերում, օրինակ, ձ-ի և ծ-ի տարբերակումը սոսկ բժախնդրության հարց է։ Մեր սուրբ Մեսրոպը, ասում է Թառայանը, հնարել է միայն 22 տառը, ո՞վ և ի՞նչ իրավունքով է Մեսրոպից հետո ավելացրել 15 տառը։ Ով Մեսրոպի անունից է խոսում, պիտի դեն շարտի 16 տառը և պահի միայն 22-ը։ Մի՞թե իսկապես հայ մարդու միտքը զբաղվոր արտահայտելու համար ավելի հնչյուններ են հարկավոր, քան թե ունեն նվյուպական բոլոր ազգերը։ Հարցնում է նա և պատասխանում՝ «ամենեւին ոչ»։ Ըստ այդմ էլ առաջարկում է մեր այբուբենից կրճատել ութ տառ, իր կարծիքով զիջում է անում և կրճատում է հետագայում ավելացված 16 տառերի կեսը։ Ինչքան շատ են տառերը, այնքան քարդ են կանոնները։ Նրա կարծիքով՝ 1500 տարի առաջ գրապես չի դարձել, որովհետև գրագիտությունը երկացել է իբրև մի շափազանց դժվար արհեստ։ Հայ ընդունակ ժողովուրդը ինչո՞ւ բթամիտ, անշնորհ ու ողորմելի դարձավ զբազիտության մեջ, թող պատասխան տան «փարիսեցի քերականագետները և կղերամիտ բնիկատները»։ Հոգվածագիրը կարծում է, թե հայկական այբուբենի մեջ կան մի շարք տառեր, որոնք մի առանձին արժեք չունեն և ժամանակի ընթացքում կարելի է անդործածելի դարձնել և բուլբոլի (դրում է՝ «բուլբոլի») գուրս օգել։ Կան տառեր, որ ոչ մի հնչյուն չեն արտահայտում կամ արտահայտում են ավելորդ անդամ և կամ արտահայտում են մի փանկ։ Սրինակ՝ ու տառը մի վանկ է՝ բաղկացած վ, օ տառերից, ինչ կարիք կա դրանց միացնել և մի տառ էլ գրա համար առանձնացնել։ Եթե վ-ի փոխարեն գրում ենք ո, ինչո՞ւ վա, վե, վի, վու, մա, մի, մու և այլ հնչյունակապակցությունների համար տառ չենք հնարում, ինչո՞ւ բօ, գօ,

բօ, գօ, թօ-ի համար տառ չենք հնարում, վօ-ն ազնվակա՞ն է։ «Մենք գրա մէջ լինական թյուրիմացություն ենք տեսնում», — ասում է նա։

Այս հոգվածի շարունակությունը կարդում ենք № 22-ի «Մի առաջարկ»-ի պատասխանում։ Առաջարկողը պնդում է, որ պիտի վերափոխել այբուբենը, ավելորդ տառերը դուրս գցել։ Պատմում է, որ իր աշակերտները հաճախ գրում են՝ դրավ, վրա, նետ, օգ, վարք, այսինքն ըստ իրենց արտասանության, ուրեմն ուղղագրությունը պիտի առաջնորդվի հնչյունային սկզբունքով։ «Թող մեր այբուբենի վերանորոգությունը լինի մի կօթող՝ անմահացնելու տպագրության 400 ամյակը», — վերջացնում է հոգվածագիրը։

Ահա ինչպես են հակագիտական ու հակաժողովուրդական մըտքերն անցկացնում ճանախ խոսքերով։ Իբրև հիշյալ առաջարկի պատասխան՝ խմբագրությունը գրում է, թի համաձայն է այբուբենը վերանորոգելուն, ուղղագրության փոփոխման հարցը մանրամասն քննելու։ Թառայանի կարծիքով՝ հազարամյակների տունումը անապարծախյուն է, սնտիապաշտություն և տպագրության 400 տարուց հայ ժողովուրդը ոչ մի օգուտ չի տեսել։ Պետք է թեթևացնել այբուբենը, հասցնել եվրոպականին։ Մերը 39 տառ է, լատիներենինը 24, ուրեմն 15-ը ավելորդ են, այդ ավելորդ տառերն են՝ ո, ձ, ու, ը, վ, ֆ, լ և այլն։ Սրանցից պիտի կամաց-կամաց ազատվել։ Ի՞նչ իրավունքով է ձ տառը, որ ծագել է ոլորապտույտ օձի պատկերից, տեղ գրավել՝ դարձեալ, բարձր, հանդերձ և նման բաներում, քանի որ լսում ենք՝ դարձեալ, բարձր, հանդերձ։ Ուն փոխարինում ենք օ-ով, եթե նա օտարամուտ է, ուն նույնպես օտարամուտ է։ «Ընկեր»-ը գեմ շէ ուսուցիչներից և գրողներից մի համագումար կազմելուն և արդ խնդիրը լուրջ քննելուն։ Վաղ, թի ուշ բոլորն էլ պիտի հետևեն «Ընկեր»-ի ուղղագրությանը, հայտարարում է թերթի տնօրենը։ Թառայանի վերջը շարագրված մտքերը ոչ մի գիտական, լնդվարանական հիմք չունեն։ Նա հնչյունաբանական, լնդվի պատմականության ոչ մի օրենք չի ճանաչում։ Օգտագործելով լնդուն ժողովուրդին հասկանալի ու հեշտ յուրացվող դարձնելու գայթակղեցուցիչ նպատակը՝ նա արհամարհում է, ջնջում քերականությունը, լնդվարանական օրենքները համարելով կղերական ցանցեր ու շղթաներ։ Գիտական ոչ մի հիմք չունի, ավելին՝ հակագիտական է նրա հայտարարությունը, թե որքան տառերը քիչ լինեն, այնքան հեշտ կյուրացվեն, մոռանալով, որ եթե տառերը քիչ են, ստիպված ենք նրանցից յուրաքանչյուրին հնչյունային մի քանի իմաստներ վերագրել։ Միայն տառերի համապատասխան քա-

նակն է ապահովում հնչյունային դրուժյունը, ազատում այբուրի-
նը լրացուցիչ նշաններից ու կիրառություններից, դրանով է հենց
Անարոպի այբուբենը կատարյալ: Թառայանը այն միամիտ կար-
ծիքն է, որ հայերի գրագիտության պակասը ուղղագրության
բարդությունից է, շտեմնելով դպրոցների խղճով քանակն ու վի-
ճակը: Ժողովրդին հասկանալի լեզվով դրել ցանկացող Թառայանը
մի կողմից գրում է՝ դարցնել, շարքված, կխօսնարվենք, դարցնալ,
հանդերց, բարցր, մյուս կողմից՝ զի, ալֆավիտ, շրիֆտ, պրիվիլե-
գիա, միդոս (մեթոդ), ֆորմալիստ, ամենուրեք օգտագործում է և
հողը:

Բայց «Ընկեր»-ը չի բավարարում Մեսրոպի այբուբենի 16
տառը դուրս գցելով, դա նրա համար քիչ է: Թերթի 24—25-րդ հա-
մարներում կարդում ենք «Համամարդկային ալֆավիտ» խորագրով
անստորագիր հոդվածը, որ գարձյալ խմբագրի են է՝ Սեդրակ Թա-
ռայանին: Համառոտ ներկայացնենք բովանդակությունը: Մարդ-
կային ցեղերի ներկա հարարերությունները միացնում են նրանց:
Ցեղերի առանձին գոյության հնարավորությունը ներկայումս
հարց է դառնում, դրա հետևանքն էր էսպերանտո լեզուն: Կարևոր է
ստեղծել համաշխարհային ալֆավիտ և «Ընկեր»-ի բունսծ ընթացքն
ուղղագրության և քերականության նկատմամբ հենց այդ նշանա-
կետը նկատի ունի: Եվրոպական բոլոր ազգերն ընդունել են լատի-
նական «շրիֆտը», նույնիսկ լեհերը: Հանուն հայերենի են այդ
(հոդվածում՝ էդ) մեծ «բեթոմը» մտցրել Սենկևիչի հայրենակից-
ները: «Ապագայում (մի քանի տարուց հետո) «Ընկերը» բոլորովին
կթողնի մեսրոպեան ալֆավիտը՝ հետզհետե փոխարինելով նրան
շատ ավելի գեղեցիկ լատինական շրիֆտով»: Տարօրինակ դատող-
ություններ է անում հոդվածագիրը: Ըստ նրա՝ քանի որ բոլոր
մարդկանց թոքերն ու կողորդը միատեսակ կազմն ունեն, ինչ կա-
րիք կա, որ դանագան ցեղերն ունենան զանազան հնչյուններ:
Հոդվածագիրը կամենում է, որ այդքան հնչյունների վերաբերմամբ
էլ փոխադարձ համաձայնության գան և ընտրելով ավելի կարևոր
և ավելի քաղցր, երաժշտական (իր դրելով «մուղիկայ»), որոշ ու
հնչու ընկի հնչյունները, դուրս շարտեն ազել: Թանձր (ինքը գրում
է՝ «թանձր»), «թթախառն» հնչյունները, օրինակ՝ խ, հ, ք և այլն:
«Ձեզգոցը լավ է հնչում, իսկ խոնարհ-ը կարծես խեղդող մարդու
ջրալի կոկորդից է դուրս գալիս: Դա նրանից է, որ I-ը ունի զ, Գ, Գ
հնչյունները, իսկ II-ը՝ խ, հ, ք, Գ նրանացիք, ֆրանսիացիք, իտալա-
ցիք տարբեր լեզու ունեն, բայց ալֆավիտը» նույնն է: Երեսնամյա մի
անգամ սովորելով ալֆավիտը (իր տեղիներն է), կարող է բոլոր լե-

զուններով կարգալ: Եվ միամիտ Թառայանը կարծում է, թե եթե
օտար տառերը դիտի, որևէ օտար լեզուն պիտի կոնկառան ժո-
ղովուրդները միմյանց լեզու պիտեն, բայց այբուբենը չդիտեն, որ
կարգան: Ահա այդ ժողովուրդների բարեկամության համար հոդ-
վածագիրն սուաջարկում է ստեղծել Անգրկովկասի ժողովուրդների
ընդհանուր լատինատառ այբուբեն:

Մակայն, բարեբախտաբար, «Ընկեր»-ը երկար չի կարողանում
մնալ իր սկզբունքին: № 31, 32-ում հրատարակված Մալխասյանցի
հոդվածը գրված է վեճադրությամբ (ձայնավոր, եվրոպական,
հնչյվելիս, չեզվի, թավացել, պրացվում), օգտագործված է ունև օ-ն
(անորոշ, որոշ), այսինքն չի հետևում Թառայանի գրությունը:
Թառայանն ինքն էլ 1914 թ. № 1-ում իր ուղղագրությամբ չի գրում
«Ընկերի համակրողներին» հոդվածը: Այստեղ հանդիպում ենք՝ կը
գայ մի օր, խոնարհա՞նք ենք, չէինք կարող, կը գայ ճակատագրու-
կան րոպին, կամքով, գոյութեանը, ճանապարհ, ինչ կա որ և այլն:
Այսպիսով, այն ժամանակ, երբ արևմտահայ հատվածում լռել
էին ուղղագրությունը բարեփոխողները և գրականության մեջ ու
մամուլում հաստատված էր ավանդական ուղղագրությունը, Աստ-
վածաշնչի, Հայկազյան բառարանի ուղղագրությունը, արևելահայ
հատվածում մտավորականները բանավիճում էին, ուղղագրական
բարեփոխումներ պահանջում:

1913 թ. տոնվում էր հայ դրերի գյուտի 1500 և տպագրության
400-ամյա հոբելյանը: Հոբելյանական կենտրոնական հանձնաժո-
ղովի նախագահն էր Գալուստ Տեր-Մկրտչյանը: Հանձնաժողովը ու-
րոշում է կազմակերպել ընդհանուր խորհրդակցություն՝ ուղղագրու-
թյունը մշակելու համար: Խորհրդակցությունը նշանակում են հոկ-
տեմբերի 1-ին: Հրավիրատուներին կցում են Մանուկ Աբեղյանի
մի հարցացուցակը՝ երկու կարգի հարցերով: I կարգի հարցերին
պատասխանելու են նրանք, որոնք գտնում են, որ ուղղագրությունը
չպիտի փոխել: Այդ հարցերն են՝

1. Ինչո՞ւ պետք չէ և չի կարելի փոփոխություն մտցնել մեր
ուղղագրության մեջ:
2. Ի՞նչ կարծիք ունեք ուղղագրության միասնության մասին:
3. Ինչի՞ց է առաջանում մեր ուղղագրության մեջ փոփոխու-
թյուն մտցնելու ձգտումը:
4. Ինչպե՞ս վարվել մեր ուղղագրության մեջ հետզհետե մըտ-
նող փոփոխությունների հետ, արդյո՞ք թողնել ազատ, թե՞ որևէ
ձևով որոշ ուղղություն տալ այդ ձգտումներին: Եթե կարելի է և
պետք է անել, ապա ո՞վ և ինչպե՞ս պիտի անի այդ:

5. Եթե անհրաժեշտ է միակերպ ուղղադրությունը, հարկա-
նոր չէ՞, արդյոք, միակերպության վերածել տատանվող ուղղագրա-
կան ձևերը (թանկ—թանգ, գունտ—գունդ, վաղձան—վախձան,
ծնող—ծնող և այլն), ինչպիսի՞նք ընտրություն կատարել դրանցից:

6. Ինչպե՞ս վերաբերվե՞լ ճնշյունի վ, օ, ու ոչ միակերպ նշա-
նադրերի հետ: Արդյոք պիտի թողնե՞լ այդ տարրեր գրութուննե-
րը (ասուել, ասել, ասվել), թե այնտեղ է միակերպության վերածել
և ինչպե՞ս:

7. Մեր գրական լեզվում ունե՞նք, արդյոք, երկու տարր: Գր-
չյուն վ գրի համար, մեկը կոշտ (ծով), մյուսը փափուկ (հալ), թե՞
դա լոկ պիտի հասկացություն է, և մենք միայն վ ճնշյուն ունենք:
Վազել, կով, առաջ, հալ բառերի մեջ նույն վ ճնշյունն է, միայն
պլուստիկ ձևով է տարբեր: Արդյոք վ ճնշյուն ունեցող ու-ն՝ պա-
տուհի, դուարթ և նման գրություն ունեցող բառերում կիսաձայն
ո՞ւ է (քաղաձայնական և ձայնավոր), թե՞ բաղաձայն վ ճնշյուն:

Երկրորդ կարգի հարցեր. առաջին վեց հարցերի հետ պատաս-
խանելու են նրանք, ովքեր գտնում են, որ անհրաժեշտ է նոր ուղ-
ղադրություն:

1. Ինչո՞ւ պիտի ուղղադրությունը փոխել:

2. Ծի՞շտ է, թե ուրիշ ազգեր իրենց գծվար ուղղադրության մեջ
փոփոխություն չեն մտցրել և չեն մտցնում: Որքա՞նք կարևոր են
մեզ համար այն հիմունքները, որոնցով առաջնորդվում են ուրիշ
ազգերը իրենց ուղղադրության հարցում:

3. Մեր ուղղադրության մեջ ի՞նչն է պատճառաբանական անփո-
փոխ մնացել, ի՞նչն է փոփոխության ենթակա եղել և է:

4. Որչա՞փ հնարավոր ու կարևոր է մեր ուղղադրությունը մո-
տեցնել արտասանությանը:

5. Մինչև ո՞ր աստիճան տեղական արտասանությունները ար-
դելք կլինեն ուղղադրությունը արտասանությանը համարյա արտաս-
խանեցնելուն: Կա՞, արդյոք, ընդհանուր դրական արտասանություն
որոշ տառերի համար, որոնց ուղղադրությունը գծվարության է հա-
րուցում:

6. Որչա՞փ ճիշտ է, թե մեր ուղղադրությունը տակնուվրա կլի-
նի նրանում կատարված որևէ փոփոխության դեպքում: Չկա՞, ար-
դյոք, մի սահման, որ ամենքի համար ընդունելի լինի, որից այն
կողմն անցնելը անհնարին է: Ո՞ր տառերի ուղղադրությունը պի-
տի անձևում լինել մնա:

7. Հատկապես ինչպիսի՞նք ու ի՞նչ փոփոխություններ և ի՞նչ մի-
ջոցներով է հնարավոր անել, որ ուղղադրության միասնականությունը

նր շխանդարվի և բառերի պատկերը միանգամից մեծ փոփոխու-
թյան չենթարկվի, անձանաչելի չդառնա:

8. Կարելի՞ է օ-ն դուրս գցել և նրա տեղ միշտ ո գրել: Եթե՞
չէ, կարելի՞ է աշժմ, պահելով բառերի սկզբի օ-ն, բառամիջում և
բառավերջում ո գրել: Ի՞նչն է արդե՞ր բնութամ: Այժմեք ունի՞ր աշատեղ
օ-ով գրվող բառերի ստուգաբանությունը: Որքա՞նք դուրսդրում և
ուսջ կղար դրանով և որքա՞նք բառերի պատկերը կփոխվեր:

9. ա) Կարելի՞ է է-ն դուրս գցել և տեղը ե գրել, բ) եթե՞ ոչ,
կարելի՞ է, հասցա, բառասկզբի է-ն պահել, իսկ բառամիջում և բա-
ռավերջում ե գրել: Այս փոփոխությունը որքա՞նով արգելք կլինի
է-ով գրվող բառերի ստուգաբանությանը, գ) եթե դա էլ չի կարելի,
կարելի՞ է հապա է-ն թողնել բառասկզբում և մեկ էլ այն շեպքե-
յում, երբ փոխվում է ի-ի, իսկ մնացածը գրել է-ով, դ) եթե սա էլ
չի կարելի, կարելի՞ է է-ն թողնել բառասկզբում, բառավերջում,
բառամիջում ձայնավորից առաջ, բայերի վերջավորությունների
մեջ (գրէր, գրէք, գրեցէք) և այն դեպքում, երբ է-ն փոխվում է ի
ճնշյունի, իսկ մնացածը գրել և տառով (եղեգն, աղվես, զմբեթ,
պատճեն):

Որքա՞նք դուրսդրում կառաջանա, որքա՞նք շատ կփոխվի բա-
ռասրատները:

10. Կարելի՞ է յ տառը պահել միայն կիսաձայնի համար ա,
ո-ից հետո, իսկ բառասկզբի յ-ի տեղ գրել և, բառավերջի անձայն
յ-ն դուրս գցել: Եթե՞ ոչ, կարելի՞ է բառասկզբի յ-ն պահել, իսկ
վերջի անձայն յ-ն դուրս ձգել: Որքա՞նք դուրսդրում կլինեն որա-
նով և որքա՞նք կփոխվեն բառապատկերը:

11. Կարելի՞ է եա, իւ, եօ, ոչ երկրորդաձայնի դրության մեջ
փոփոխություն մտցնել:

Սրանք լուրջ հարցեր էին, և հրավիրվածները պատասխանելու
համար պիտի պատրաստված դային: Բայց հանձնաժողովը շհա-
վաբվեց: Հսկայական հանձնաժողովն ավելի շատ զբաղվել է
պատարագներով, ուխտադնացությանը ու մաղթանքներով, քան
ույրալիսի մի մեծ ակադեմիական դրժով, սրաի ցավով ավելաց-
նում է ինձն՞, պատղամալորներին քչերը կարող էին հետաքրքրվել
ուղղադրությամբ: Այս հարցադրույթի քննելու համար միայն
Բիֆլիսում, Տիգրան Նաղարյանի գրական-գեղարվեստական սալո-
նում Ստ. Մալխասյանցի նախագահությամբ ժողով է կայանում,
բայց ոչ մի համաձայնություն չեն գալիս, և ժողովը փակվում է ան-
արդյունքի: Նիստին ներկա է եղել նաև Ալեքսանդր Շիրվանզագեն:

1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում հայերեն գրեթե գյուտի 1500 և հայ ապագրության 100-ամյակին նվիրված համազգային մեծ հանդեսին լսվում է միայն Մանուկ Աբեղյանի զեկուրումը՝ «Մեր ուղղադրության մասին», որը և տպագրվում է «Արարատի» նույն թվականի 11—12-րդ համարներում:

Այդ զեկուրումը, Հ. Հովակիմյանի վերադրվածք, այնքան երկար է տևում, որ ո՛չ Մտ. Մալխասյանցն է զեկուրում, որ նույն հարցի մասին պիտի զեկուցեր, ո՛չ էլույթներ են լինում, ո՛չ էլ կարգացվում են ուրիշ հայազանների, այդ թվում և Մեյնի ու Մառի, կարծիքները: Դասախոսությունից հետո մի խորհրդակցություն է լինում Ս. Կանայանի նախագահությամբ: Այստեղ որոշում են հարցը քննել գիտնականների նեղ ժողովում: Հետո, թղթակցի ասելով, որոշվել է դիմել վեհապետ Հայրապետին՝ հրավերելու հայագետներին և ուսումնասիրելու այդ հարցը: Գրանդով վերջանում է բուրձազրույթյան օրը¹³, Հետագայում հանձնարարվում է էջմիածնի ուսումնական հանձնաժողովին՝ կազմել մի հանձնախումբ, որ ուսումնասիրի ուղղագրության հարցը: Ուսումնական հանձնաժողովը նոյեմբերի 12-ի նիստում հանձնարարում է Գալուստ Տեր-Մկրտչյանին, Մանուկ Աբեղյանին և Մեսրոպ վարդապետ Մաքսուգյանին՝ որոշելու հանձնախմբի կազմը: Առաջարկ է լինում նաև այդ գործը հանձնարարել ճեմարանին և ներսիսյան դպրոցին¹⁴:

Ի՞նչ հարցեր է արժարծել Աբեղյանն իր այդ ընդարձակ զեկուրման մեջ: Ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ միակերպ, միասնական ուղղագրություն, ասում է նա, որպեսզի զանազան բարբառներով խոսողներն իրար հասկանան: Գրավորը կենդանի լեզվի պարմանական ձևն է, բայց բոլորի կողմից ընդունված ձև: Ուղղագրության ընդհանուր միությունը պետք է տեղական լինի, որպեսզի հաջորդ սերունդը չկտրվի նախորդից, դրանով է մեր գրական լեզուն ընդհանուր: Մեր այսօրվա երկու գրական լեզուները նույնանում են ընդհանուր ուղղագրությամբ: Եթե ուղղագրական փոփոխությունը մեր գրական լեզուները (արևելյան, արևմտյան) իրարից կհեռացնի, չպիտի կատարել:

Խոսքի պատկերներն էլ (դրերը) շատ չպիտի զինեն: Գրա համար էլ հնարված է հնչական գրությունը (հակառակ պատկերագրության), Կենդանի խոսքը վերածվել է իր ամենապարզ բաղադրիչների՝ հնչյունների (իմա՝ հնչույթ) և նրանց համար հորինվել են պայմանական նշաններ:

Մեր այրուրենը իր սկզբնաշրջանում ունեցել է հնչյունային գրություն, յուրաքանչյուր հնչյուն ունեցել է մի գիր: Բայց կեն-

գունի խոսվածքում ժամանակի ընթացքում հնչյունները փոխվում են, մի հնչյուն երկուսի է վերածվում, երկուսը՝ մեկի, մի հնչյուն՝ մի այլ հնչյունի: Լեզվի այս բնական փոփոխությունը ասպարեզից հանում է գրության հնչական սկզբունքը, կարիք է զգացվում քանի հին պատկերը փոխել նոր, հնչական գրություն, այնտեղից էլ առաջանում է նոր ուղղագրության հարցը:

Խոսքը թռչում է, գիրը մնում: Մեր նախնիների դերն է մնացել, արտասանությունը չկա: Բայց ստիպված ենք կառուցած մնալ գրության հին ձևին, եթե փոխենք, այս փոխածն էլ կհնանա, եթե էլի փոխենք, այնքան կհեռանանք, որ նախորդ շրջանի գրավոր խոսքն անհասկանալի կդառնա: Ուստի փոփոխությունները կատարվում են մասամբ և հնարավորության սահմաններում:

Փոխախոսությունները կատարելիս երկու սկզբունք են նկատի ունենում՝ հնչարանությունը և ստուգաբանությունը: Նախ առաջինի մասին:

ԺԹ դարի առաջին հիսնամյակում մեր լեզվի ուղղագրության մեջ մեծ բազմապատկություն էր տիրում, իսկ երկրորդ հիսնամյակում ձգտում կա միօրինակության, դա կատարվում է միեմբարյան դրաբարի ազդեցությամբ, նրա շնորհիվ: Միակերպությանը զգալապես օգնում են բառարանները: 1800-ական թվականներին մեր ուղղագրությունը բազմական միակերպ էր: Հաջորդ տասնամյակում սկսվում է նոր հոսանք՝ ուղղագրությունը մոտեցնելու արտասանությանը: Դա սկսվել է արևելահայ հատվածում և-ի և ու-ի շուրջ ծաղած բանավեճով: Ա. Աղաջանի դասագրքի շնորհիվ 90-ական թվականներինց առարածվեց ւ-ա գրությունը: Այժմ (1913 թ.) ու-ագրությունը պահում են միայն հին սերնդի մարդիկ: Նրանք էլ անցան ւ-ագրության, որովհետև դասագրքերն այդպես էին գրում: Թեպետ ւ-ագրության չհետևողները, այդ թվում և ինքը՝ Աբեղյանը, գրում են նույն, դուրսից, բայց նրանց այլը շատ է տեսնում և էլ, զարբ ձևերը:

Սկսել են րառավերջի յ-ն շարել, օ-ով գրվող բառերը ու-վ գրել: Առաջարկ է եղել Վ-ն վ-ով գրել (ղվարթ, աղավնի), Պահանջ է ըզգացվում ուղղագրական մեծ փոփոխությունների: Նպատակն է հեշտացնել ուսումը երեխաների համար: Այս նոր ուղղագրության հարցը գրաբարի ու աշխարհաբարի պայքարի շարունակությունն է: Գրաբարը աշխարհաբարի վրա ազդել է ավելի շատ ուղղագրությամբ, քան ձևաբանությամբ ու շարահյուսությամբ: Մենք այժմ գրում ենք գրաբարի ձևով և այս տեսակետից մեր լեզուն ավելի քիչ է փոխվել, քան, ասենք, նոր ֆրանսերենը հնի համեմատու-

թյամբ կամ նոր գերմաներենը՝ հին, միջին գերմաներենի: Միջնա-
դարում Ֆրանսիայում էլ երկար բանավեճեր են նդել:

Քանի ուղղագրութիւնը դրաբարյան է, աշխարհաբարի հաղ-
թանակը լիակատար չէ: Այն հարցին, թե ինչու աշխարհաբարի
առհասորոններ հին լեզուն փոխելով՝ չեն փոխել նրա ուղղագրու-
թիւնը, Արեւելանը պատասխանում է՝ որովհետեւ այդ ժամանակ
գրաբարում արդեն հին արտասանութիւնը չկար, գրել են Ս դարի
ձևով, կարգացել ժժ դարի ձևով (որդի-ն օրձիւ կարգացել են վօր-
քի «vorthi», զուարդ-ք՝ զվարք, որոսմեա-ն՝ վողորմյա և այլն):
Եթե աշխարհաբարը գրաբարի ուղղագրութիւնը չպահպաներ,
կատարելի մի խառնաշփոթութիւնը. ո՞ր խոսվածքի ուղղագրու-
թիւնը պիտի վերցնեն այդ դեպքում: Զլիններ գրաբարը, աշխարհա-
բարն այդքան արագ չէր դարգանա: Եթե գրաբարի ուղղագրութիւ-
նը չպահպանվեր, մեր երկու գրական լեզուներն այնքան կհեռա-
նային իրարից, որ անհասկանալի կգանձային միմյանց համար:

50—70-ական թվականների փոքրերը (փոխել ուղղագրութիւնը
հնչյունային սկզբունքով, գրել այնպես, ինչպես ասվում է) ան-
հաջող անցան, որովհետեւ հայ ժողովուրդը չունի միասնական ար-
տասանութիւն:

Եթե արեւմտահայն իր արտասանութիւնը գրեն, արեւելահայն՝
իր, կստացվեն այնքան տարբեր բան, որքան օտար անունների
տառադարձութիւն մեզ է ստացվել (Պետերբուրգ—Քեդերպուրկ—
Փեթերպուրկ, Պարիզ—Քարիզ—Փարիզ և այլն): Իսկ եթե խառնվեն
նաև զանազան բարբառների միջամտութիւնը, ձևք պիտի քաշի-
ինք գրական լեզվից: Ուրեմն ուղղագրական փոփոխութիւններ կա-
տարելը շատ դժվար բան է, թեկուզ հենց երկու գրական լեզուների
առկայութիւն տեսակետից: Պետք է հրաժարվել մեր ուղղագրու-
թիւն մեզ արմատական փոփոխութիւններ մտցնելու մտքից: Այս
նույն միտքն է արտահայտել Արեւելանը 1897 թվականին «Արա-
բատ»-ի սեպտեմբեր-հոկտեմբերի համարում տպագրված «Մեր
երկու գրական լեզվի միութիւն խնդիրը» հոդվածում: Սլոտի ցավով
եշելով, որ մենք չունենք ընդհանուր գրական լեզու, ուստի և ընդ-
հանուր ազգային գրականութիւն, ընդգծում է, որ այսպիսի պայ-
մանում հնարավոր չէ անցնել հնչյունային ուղղագրութիւն: Գրա-
կան լեզուն մեծ գետ է, ուր հստում են մանր շատ առուններ, խոս-
վածքներ, ուստի ճիշտ չի լինի պահանջել, որ գրենք այնպես, ինչ-
պես ասում ենք: Կենդանի լեզուն միշտ մի որևէ բարբառի ազդե-
ցութիւն տակ է լինում, դրա համար էլ գրական լեզուն կենդանի

խոսակցական լեզվի հետ նույնը չի լինում: «Պահանջել, որ գրա-
կան լեզուն կենդանի լեզվի իրական պատկերը լինի, այդ մի
անխրատորժեի ցնորք է» (էջ 428)¹² ա:

Բայց սա չի նշանակում, թե գրութիւն մեզ ոչ մի փոփոխու-
թիւն չպիտի մտցնել: Բերում է ֆրանսերենի օրինակը, ուր ըս
տառակապակցութիւնը կարգացվում է օ: Ան հնչյունը 20 արտա-
հայտութիւն ունի, ին՝ քսաներկու Դարեր շարունակ ֆրանսիացիք
ձգտել են ուղղագրութիւնը հնչական դարձնել, բայց հնարավոր չի
եղել: «Դրել ինչպես խոսում են՝ հրապուրել կանոն է, բայց և ցն-
րական»,—ասում է ֆրանսիացի քերականը: Եթե ուղղագրութիւնը
հնչյունային սկզբունքով լինի, ինչպե՞ս կարող են մի ընդհանուր
գրութիւն ունենալ պիկարեցիին ու դասկոնացիին, պրովանսացիին
ու նորմանդացիին: Ինչպես կլանաղանեն sell «սուրք», sain
«սառոջ», s'ion «ծոց» բառերը և seing «ստորադիր», cing
«հինգ» բառերը, որոնք նույն հնչումն ունեն, եթե հնչյունային գրու-
թիւնը միևնույն տառերն ունենան: Ֆրանսերենը, եթե հնչյունային
ուղղագրութիւնը հետևի, անընթաց կըլանա ֆրանսիացու հա-
մար, ահա թե ինչու այդ սկզբունքն այնտեղ մերժված է: Եվ շնա-
յած դրան, ֆրանսերենում էլ ուղղագրական մասնակի փոփոխու-
թիւններ կատարվում են:

Մեր լեզվում էլ հնչական գրութիւնը խանգարում են բար-
բառները, արեւելահայ և արեւմտահայ գրական լեզուների բաղա-
ձայնական համակարգի տարբերութիւնը, ուստի բաղաձայնների
ավանդական ուղղագրութիւնը ձեռք չպիտի տալ: Դարերի ընթաց-
քում էլ բաղաձայնների ուղղագրութիւնը անփոփոխ է մնացել, բա-
ցի մի քանի բառերից (թանդ—թանկ, դուռ—գունտ):

Հյունագրութիւնը տարածվեց. որովհետեւ մասնակի դեպք էր,
դրանով բառը շատ չէր փոփոխվում, մինչ այդ էլ միևնույն բառը
դրվում էր թե՛ ու-ով, թե՛ ու-ով և թե՛ վ-ով (ասում, սուում, աս-
վում): Սերակացութիւն՝

1. Մեծ ու հիմնական փոփոխութիւններ չի կարելի կատարել
շնարավոր փոփոխութիւնները պիտի կատարել աստիճանաբար,
ոչ միանգամից:

2. Կատարած փոփոխութիւնները նույնիսկ մի բառի պատկերը
անճանաչելի չպիտի դարձնեն: Զի կարելի, օրինակ, յաղթել բառի
յ և դ, ք և է տառերի գրութիւնը փոխել, գրել հախտել կամ ախ-
տել, յետոյ-ը դարձնել հետո:

Անդադարանալով ստուգաբանական սկզբունքին՝ Արեւելանը ու-
րոշ վերապահութիւն է անում: Այս սկզբունքը հակառակ է հըն-

չյունականին, սրանով դիտնականներն են սիրում առաջնորդվել: Պահանջում են գրել՝ շօշափել, ծնօղք, որովհետև հնում եղել է՝ շաւ- շափել, ծնաղ: Այս աստիճանականութունը, նկատում է Արեգյանը, դիտնականն առանց այդ էլ կիմանա, իսկ շարքային բնթեոցողին հարկավոր չէ, էլ ո՛ւմ համար գրել՝ շօշափել: Բաղաձայններին ձևոք շտալու պահանջը հասկանալի է, բայց պահանջում են ձևոք շտալ հան ո—օ տառերին, ասում են՝ եթե մի տառով այտահայ- տենք օ հնչյունը, շենք տարբերի համանունները՝ հօտ և հոտ, հօր և հօր, այս պատճառով է, որ Ֆրանսերենում այտհայտում է ստու- գաբանական ուղղագրությունը: Բայց մոռանում են, որ համանուն- ների քանակը հայերենում քիչ է, և եթե մեկը պնդի շօշափել դու- թյունը, կլինի լակ ի սեր հնության: Մեր լեզվում օ-ի փոխարեն ո գրելուն արգելք չկա:

Հին եա-ն դարձել է ե՝ չեան>լեռ, սեան>սև, զոր- ծեաց>զործեց, դեացեալ>գնացել: Ոչ մեկի մտքով չի անցնում գրել սեան, լեան: Գրականության մեջ օգտագործվող սենեակ, լեան, մատան, յարութեան և նման ձևերը գրաբարյան փոխա- ություններ են: Մի կողմից գրաբարի գնայր-ը դարձրել ենք գնար, մյուս կողմից՝ գրում ենք բերէր, թեև արտասանում ենք՝ բերեւ, հետևողական չենք: Եթե հներն էլ մեզ նման մտածեին, պիտի պահ- պանեին բառերի հնդեվրոպական ձևը, որով չէին լինի հնդեվրո- պական լեզուների այսօրվա տարբերությունները, գրավորը կմնար հին պատկերով: Հին պատկերը պահպանելու համար կարիք չկա գրել՝ գրեւ, գրեւ:

Բայց ստուգաբանական հիմունքը չի կարելի մերժել ամբող- ջովին: Այն պետք է ոչ միայն բառերի հին ձևը պահպանելու, այլև տատանվող գրությունները մի տեսքի բերելու համար: Թանգ—թանկ, գունտ—գունդ, բանդ—բանտ, վաղճան—վախճան ձևերից մեկը պիտի ընտրել, իսկ դրան արտահայտությունը չի օգնի, պիտի դիմել ստուգաբանությանը: Մտուգարանությունը ցույց տվից, որ ճիշտը բախտ ձևն է, ոչ թե՛ բաղղ: Ենմ և շէմ՝ ձևերից ճիշտ առաջինն է, բանի որ հին եա-ն դարձում է ե (սեա—սեա—սեա—սե, շեամ— շեմ), Գրում ենք՝ ուրեք, ուտեք, ումեք, բայց՝ երբէք, պարզ է, որ ճիշտը երբեք ձևն է, միօրինակության բերելու տեսակետից:

Ստուգաբանությունը հուշում է մեզ, որ եթե գնայլ, գնայր ձևերի յ-ն ընկել է (գնաք, գնար), պիտի բերէր, բերէք բառերի է-ն էլ փոխել ե-ի, բանի որ է>եյ, պիտի գցել յ-ն պահել ե-ն (բերեք, բերեք): Այս բոլորից հետո Արեգյանը գալիս է հետևյալ եզրակա- ցության.

1. Գրական լեզվի մեջ ուղղագրության միակերպությունն ան- հրաժեշտ է և գերիշխող,

2. ուղղագրությունը նորոգելու և հնչական դրություններ արտա- սանությունը մոտեցնելու պահանջը կարևոր է և չուծում պիտի ըս- տանա, բայց աստիճանաբար, այնպես, որ գրական լեզվի առաջին օկղոսները չփոխտվի,

3. պատմական անհրաժեշտությամբ աշխարհաբարում մնացել է գրաբարի ուղղագրությունը, և մենք չենք կարող նրանում մեծ փո- փոխություն մտցնել: Բաղաձայնների ուղղագրությունը անձեռն- մխելի պիտի մնա,

4. ձայնավորների ուղղագրության մեջ կարելի է մասնակի փոփոխություն մտցնել՝ առաջնորդվելով հնչաբանական ու ստու- գաբանական սկզբունքով, բայց միայն այն դեպքում, երբ դա ընդ- հանուր է դոնև Լեյբու գրական լեզուների (արևելյան, արևմտյան) համար,

5. անհնարին է պահանջել, որ յուրաքանչյուր հնչյուն մի տա- ոտով արտահայտվի, թեև դա գիտական ճիշտ ուղղագրությունն է,

6. մենք գործնական նպատակով միայն թեթև նորոգություն պիտի անենք: Պա պիտի և՛ գիտական հիմունքով լինի, և՛ ընդու- նկի երկու լեզուների համար:

Աշխուհու Արեգյանը շարադրում է ուղղագրության բարե- փոխման իր առաջարկները:

Ձայնավորների արևելահայ և արևմտահայ դպրոցական ար- տասանությունը միատեսակ է, ուստի ուղղագրական բարեփոխու- թյուններ կարելի է այդ բնագավառում կատարել: Ձայնավորներից ա-ն, ի-ն, ր-ն ուղղագրական դժվարություն չեն ներկայացնում: Հարմար է բառամիջի ը-ն չղրել: Օ-ն առաջացել է ալ-ից: Գուցն օ-ն ո-ից երկար է եղել, դրա համար ալ-ը չեն դարձրել ո, այլ ըս- տեղծել են նոր տառ: Այսօր այդ տարբերությունը չի մնացել, ո-ն և օ-ն միանման են հնչում, և միևնույն պարզ օ հնչյունի համար ստացվել է երկու տառ՝ օ—ո, որը և շփոթվելու տեղիք է տալիս: Կանոն չկա, թե երբ պիտի օ գրել, երբ՝ ո: Օ-ով քիչ բառեր են գր- վում, ո-ով՝ հազարավոր բառեր: Միայն է դպրոցներում սովորեց- նել, թե ո-ն հնչում է վօ, աչգոյեա սովորելով՝ գրում են բազավոր, բանվոր: Եստ գրագետներ էլ օտար բառերը օ-ով են գրում՝ մոռա- նալով, որ օ-ն ալ-ին է փոխարինում, ուստի հնում էլ օտար ա- նունները ո-ով էին գրում: Հիմա գրում ենք ձնող, գրող, զարմա- ցող, փոխանակ՝ ձնող, դրող, զարմացող: Ոչ մի արգելք չկա գրե-

լու՝ Բուլ, մոտ, առատ, ամոք, միայն հին գրագետների աշքում է խորթ ու տարօրինակ թվում: Մեր նախնիները հետեւել են արտասանութեանը, ևւ-ը իւ են արտասանել, գրել են իւ, աւ-ը օ են արտասանել, վերցրել են օ-ն, ասեի, ասեիր, ասեաք, ասեիք, ասեին հին ձևերի և-ից հետո յ է ավելացել՝ հորանքը վերացնելով, ստացվել է ասելի, իսկ էյ-ի փոխարեն գրել են է՝ ասէի, ասէիր, ասէր և այլն: Եթէ այսօր օ-ն գցենք, հարապատ իմնանք հնարին՝ Բայց բառակազմում զժվար է, որհենլ-ը վորհենլ կհարգան: Եթէ բառակազմի ուն օ դառնա, կարելի է բառակազմից էլ գցել, բայց դա մեր ուղղագրութեան բարեփոխման երկրորդ աստիճանն է, այժմ այդ անել չի կարելի, պիտի բառասկզբի օ-ն թողնել, այլ կերպ օ-տոնց-ը վորոնց կկարդան: Ոչ մի արգելք չկա բառամիջի օ-ի փոխարեն ո գրելու: Ո-ով պիտի գրել բոլոր օտար անունները, բարբառից վերցված բառերը: Կանոն՝

1. Բառամիջում օ հնչյունը գրել միշտ ո տառով, իսկ բառակազմում՝ օ (բացի ով, ովկիանոս բառերից):

2. Բառասկզբի վո վանկը գրել օ տառով: Իրև բացառություն մնում է եօ երկբարբառը՝ եօթն, արդեօք, կարծեօք, որովհետև դա կապված է երկբարբառների փոփոխության հետ, որ հիմա չի կարելի կատարել, մեր աչքը վարժված չէ առդեօք-ը դարձնել արդոք կրկնակի փոփոխությամբ, մյուս կողմից յոթն ձևը կկարգացվի ճօրն:

Ակորում է-ն եղել է կարճ է-ի նշանը, իսկ է-ն՝ երկար: Ժամանակի ընթացքում կորել է այդ տարբերությունը: Ե-ն բառակազմում ընդունել է ի=յ ձայնավորը, դարձել երկբարբառային: Արարատյան բարբառում բազմականկ բառերում պահել է է հնչյունը (երկու—էրկու, եկավ—էկավ): Գրական արտասանությամբ է-ն բառակազմում կարգացվում է յէ, իսկ բառամիջում՝ է (երեկոյ>յերեկոյ): Այս հարցում երկու անկատարություն կա՝ բառակազմում յէ երկբարբառը գրում ենք մի տառով (է), որը բառամիջում կարգացվում է է, մյուս կողմից՝ բառամիջում և սակավաթիվ բառերի սկզբում միևնույն հնչյունը գրում ենք երկու տառով (է—է): Հնչյունային գրության սկզբունքով դրանցից մեկը պիտի պահել և դա պիտի լինի է-ն, քանի որ է-ն հանդիպում է 115 բառում և բայերի մի քանի վերջավորություններում, իսկ է-ն՝ հազարավոր բառերում: Սխալ են նրանք, որոնք է-ն գցում, է-ն են պահում, օտարագրի բառերն էլ է-ով են գրում: Մանավանդ որ ոչ թե է-ն է է-ի փոխվել, այլ երկար է-ն է դարձել: Ե: Չենք կարող բառակազմի է-ն իսկույն է-ով փոխարինել, էգ, է, էշ, էշ, էր, էրիկ,

էդուց, էս, էդ, էն և նման այլ բառեր կկարգացվեն՝ յեգ, յե, յեշ, յեշ, յերիկ, յեգուց, յես և այլն: Իսկ բառակազմի յե-ն յե-ով գրելը կապված է երկհնչյունների ուղղագրության, բառակազմի յ-ն է-ով փոխարինելու հետ, դա երկրորդ աստիճանի հարց է, ինչպես օ-ի փոխարեն վո գրելու հարցը:

Բառամիջում էլ չենք կարող, որովհետև եթե որոշ բառերում էա-ի փոխարեն էա գրենք, շիտթություն կառաջանա, քանի որ էա-ն կարգացվում է յա: Եթե բրիտանական-ը դարձնենք բրիտանական, կկարգացվի բրիտանական: Ինչպես նշվեց, սկզբում եղել է ասելի, ասելի, հետո հորանքը վերացել է է-ի յ ստանալու միջոցով, ստացվել է ասելի, ասելի, իսկ էյ-ի փոխարեն գրել են է՝ ասէի, ասէի: Այժմ այդ տարբերությունը վերացել է և է-ն էլ հավասար չէ է-ի, է-ն հավասար է է-ի, ուստի մի պարզ հընչյունի համար երկու տառ պետք չէ գործածել: Անգրագիտություն է գրել՝ ասէի, ասելի, ասէլար: Քանի որ բառամիջում է-ի և է-ի մեջ տարբերություն չկա, կարող են անցնել նախնայաց գրությունը՝ ասելի, ասելի: Բառամիջում է-ն երևում է այն ժամանակ, երբ այն փոխվում է Վ: Հնչյունի (սէր—սիրել), բայց սա չի խանգարում, որ այդ բառերն էլ է-ով գրվեն: Պիտի անգիր անել այն բառերը, որոնց է-ն փոխվում է ի-ի: Գրանք հետ նաև բացառությունները: Կանոն. է տառը պահել: 1. բառերի վերջում, քանի որ շատ որոշ է և ընդունված,

- 2. բառամիջում, երբ փոխվում է ի ձայնավորի,
- 3. բառամիջում և վերջում, եթե ծագել է այ երկհնչյունից՝ էս, էդ, էդուց, դէս. վէր ընկնել, հէր, մէր և այլն,
- 4. բառակազմում կամ բառամիջում ա, ի, ո, ու ձայնավորների նախորդող դիրքում, բացառությամբ բայերի էր, էք վերջավորությունների:

Մնացած դեպքերում կզրվի է: Բառամիջում բաղաձայնին նախորդող դիրքում է-ի փոխարեն գրել է՝ ադուես, գմբեթ, պատճեն, եղեգն, ծակոտկեն, խեծ, հրեշ, պարնն, հրեք, հենց, մեկ, բզեզ, գեթ, գոմեշ, աշխատ, ախտածետ, նենգածետ, դազպեն, խլեզ, կեստ, կոճղեզ, մողես, շահեն, պարետ, վեսովետ, փեշ, ամեն, թեպետ, թեկուզ և աւեր, արեն, երեն ածանցանքը, տերու-թին, տերունական, գնեքալ, շեկութիւն, պետրական, տնօրինութիւն, տասնումեկերորդ և այլն: Լավ կլինի է-ն պահել միայն բառակազմում և էա կապակցության համար, մյուս դեպքերում գրել է, բայց դա մեծ փոփոխություն կլինի և անպագայի գործ է:

Սրկու պարզ ձայնավորի միացումից կազմվում է երկրար-բառ: Դրանցից մեկը ձայնավոր է, մյուսը՝ կիսաձայն (բաղաձայնական ձայնավոր): Վանկային հնչյունով սկսվող երկրարբառ անվանվում է ընկնող, իսկ ոչ վանկայինով սկսվողը՝ բարձրացող: Մեր յ-ով էլ կազմվում են երկրարբառներ: Բայց մեր յ-ն ձայնավորից հետո է հանդես գալիս, իսկ ձայնավորին նախորդող պիտու է:

Այսօր յ-ն, ձայնավորին նախորդի, թե հաջորդի, բաղաձայն ի է համարվում: Յ-ն իր հին հնչումը պահել է միայն բառամիջում՝ ա, ո ձայնավորներին հաջորդելիս: Բառավերջում ա, ո ձայնավորներից հետո ընկել է, իսկ բառասկզբում հավասարվել է ն-ին, մեկ-մեկ էլ ընկել է (չաջող—հաջող—աջող):

Դրական արտասանության տեսակետից ոչ մի արգելք չկա բառասկզբի յ-ն դարձնել ն: Սրանով մոտ 100 արմատի գրութայու-նը կվտխվի, բայց կհեշտանա ուղղագրությանը, բանի որ ներկա վիճակում ոչ մի կանոն չկա, թե բառասկզբում ճ հնչյունը երբ է յ տառով արտահայտվում, երբ՝ ո: Բայց այս փոփոխությունը II աստիճանի հարց է, մին օ-ի տեղ գրենք ո, յ-ի տեղ՝ ն, շատ բա-ռեր անձանաչելի կդառնան՝ յօղ>հող, յօժար>հօժար, յօնք>հոնք, յօջօտել>հօջտել, յօրանջել>հօրանջել, յօրինել>հօրինել, յետոյ>հետո և այլն: Հեշտությունը կարելի է բառավերջի ա, ո-ին հաջորդող համար յ-ն դրել: Այս դեպքում, իհարկե, սրտը բայեր շատ կձևափոխվեն՝ ղօրանայ>գորանա, աղօտանայ>աղոտանա, ծանօթանայ>ծանոթանա, բայց ուրիշ ճար չկա: Բառավերջի ան-ձայն յ-ի գրությունը կապված է հրամայական բայերի, դերա-նունների, հատուկ անունների գրության հետ, սրը դժվարացնում է ուսուցումը: Մանավանդ որ ո-ով վերջացող բայերը ունեն ան-ձայն յ-ն, ա-ով վերջացողները չունեն: Պիտի սովորեցնել նաև, որ ծառայ, աղայ և նման բառերը վերջի յ-ն հոդ առնելիս կամ հոգ-նակի գառնալիս կորցնոսն են (ծառաո, ծառաներ), իսկ հոլովվե-լիս պահում են (ծառայի): Ահա թե ինչու անձայն յ-ն պիտի գցել:

Կլիներն առարկողներ, որ էթե ծառա գրենք, ի՞նչպես բացա-տրենք ծառայի ձևի յ-ի գրությունը: Ինչպես որ բացատրում ենք Սառայի, Աննայի յ-ն, ասում է նքեղյանը: Աղա բառը սկզբում ունեցել է յ, հետո դա ընկել է, բայց բան աճեցիս վերականգ-նրվում է (աղայ>աղա>աղայի): Սովորողներին այս բացատրու-թյունը պետք էլ չէ. նրանց պիտի ասել, որ բառամիջում ա, ո ձայնավորների և նրանց հաջորդող ձայնավորների մեջ լսվում է

դրվում է յ տառը (Կարոյի, ծառայի): Կարող են ասել, թե յ-ի անկումով հրամայական եղանակի բայը նույնանում է ըղձական եղանակի բայի հետ: Բայց դա շփոթ չի ստեղծի: Նախ մեկը երկ-րորդ գեմքով է, մյուսը՝ երրորդ, և հետո զոչություն ունի հնչե-րանք, հրամայական եղանակի շեշտ: Ծանթի աճին տեսվածներս-ում հիշյալ դիրքում յ չի գրված և մենք չենք շփոթում: Ուրեմն առաջին շրջանում պցենք բառավերջի անձայն յ տառը:

Ի(ւ)-ն եղել է բաղաձայն ու, այդքանով էլ՝ ձայնավոր, բայց Վ հնչյունին մոտիկ: Մակայն այժմ հայերենում վ-ն և լ-ն միե-նույն շրթնատամնային շխական հնչյուններ են: Անգրագետները կասեն, թե երկու վ ունենք, մեկը՝ կոշտ (վ), մյուսը՝ փափուկ (ւ) և իրը թե վազել և աագ, ծով և հալ բառերում նույն վ-ն չէ: Մոտա-նալով, սր սրտը պիտի գրում հնչյունների արտասանության մեջ: Իսկ սարքերով լուսնի կարող են լինել, բայց ոչ այն աստի-ճանի, որ փոխվի հնչյունի որակը, մի նոր հնչյուն գոյանա: Երկու գրական լիզուններում էլ լ-ն բաղաձայն վ է: Այդպես էլ ձայնավո-րին նախորդող դիրքում ու-ն դարձել է նախ լ, ապա՝ վ բաղա-ձայն: Հին գուարք, նուէր, Աստուած քառերը նախ դարձել են գաւք, նւէր, Աստուած, ապա՝ զվաւք, նվէր, Աստված: Գուցե կրի-նեն բարբառներ, ուր բաղաձայնական ու-ն վերածված կլինի լ-ի, բայց գրական հայերենում վ-ի է վերածվել: Մեր այսօրվա լեզ-վում ունենք մի բաղաձայն վ, որ մասամբ հին վ-ն է, մասամբ ծաղել է լ-ից, մասամբ էլ՝ բաղաձայնական ու-ից:

Արեղյանը քննադատում է հյուսիսարևելյանը: Աղայանը չպի-տի բաղաձայնական ու-ն փոխարինել լ-ով, որովհետև կար և կա որոշակի կանոն՝ վ հնչյունը բառասկզբում և ո-ից հետո արտա-հայտվում վ տառով, մյուս ձայնավորից առաջ եղած դիրքում՝ ու տառով: Արեղյանն իր անձնական փորձն է վերայարևելում, որ ա-շակերտները հեղուկայամբ էին վարժվում ձայնավորին նախորդող ու-ն վ կարգալուս, և հեշտ էին սովորում նրա ուղղագրությունը, նրանց օգնում էր այն հանգամանքը, որ լեզվի, ձվի արտասանվող լեզուի, ձուի գրությունները ծաղում էին լեզու, ձու ձևերից, երե-խան գրելիս իր աչքի առաջ միշտ ունենում է այդ ուղիղ ձևերը՝ լեզու, ձու, կառու:

Եթե պետք է վաճճյուն ու-ն բաղաձայն տառով արտահայ-տել, ապա այդ տառը պիտի վ-ն լինել, ոչ թե լ-ն: Հին ու ձայնա-վորը փոխվել է վ-ի, ինքը՝ լ-ն էլ է փոխվել վ բաղաձայնի, միայն ու, ի տառակապակցություններում է մնացել ձայնավոր: Սա Ղ. Աղայանը մինչև վերջ էլ չըմբռնեց: Հետևողական լինելու համար

ոչ միայն բաղաձայնական ու-ն, այլև լ-ն պիտի փոխարինել Վ-ով, «Այս բանը ոչ միայն քարոզեց իմ բարեկամ Սո. Մալխասյանցը, այլև դժբախտաբար սկսեց կիրառել, բայց թերի, քանի որ անփոփոխ թողեց ուտ, ուր, ոչ և նման գրութունները: Բայց սա էլ մնաց միայնակ»: Ուղղագրական փոփոխությունը ոչ միայն գիտական պիտի լինի, այլև ընդունելի բոլորի կողմից: Մալխասյանցի վեճագրությամբ շատ բառեր էին փոխվում, Վ-ն իր տարածվածությամբ աչք էր ծակում, իսկ հյուսիսային շրջանում քիչ բառեր էին փոխվում, դրա համար սա հեշտ էր տարածվում, ուստի Մալխասյանցի դեմ բողոքները շատ էին: Նա պիտի սկզբում բաղաձայնական ու-ն փոխարիներ Վ-ով, իսկ լ-ն առաջին շրջանում պահեր, այդ փոփոխությունը թողներ երկրորդ շրջանում:

Աղայանն, այնուամենայնիվ, հեշտացրեց ուղղագրությունը՝ Վ հնչյունի հրեք տառի փոխարեն դրելով երկու տառ: Ու-ն մնաց սուս իբրև ձայնավոր: Աղայանից առաջ էլ տողադարձի ժամանակ, բանաստեղծություններում գրում էին լ(լը-ւարթ, նը-ւէր), Աղայանն ուղղակի ընդհանրացրեց այդ եղանակը: Մտեղծից հեշտ չուրացվող կանոն՝ ձայնավորից հետո Վ հնչյունն արտահայտվում էր և տառով, քացի ու-ի կազմում հանդես եկող լ-ից: Հեշտ էր այս կանոնը, դրա շնորհիվ էլ տարածվեց, և մեծք պիտի հաշտվեինք դրա հետ, եթե լավը չէինք կարող անել:

Սակայն հարց է առաջ դալիս, արդյո՞ք արևմտահայերենում էլ բաղաձայնական ու-ն Վ է դարձել: Հետ երևույթին ոչ ամբողջովին: Նրանք կրավորականները Վ-ով են գրում, նրանց տողադարձից (նը-ւէր, քը-ւարթ) երևում է, որ այդ ու-ն Վ են արտասանում: Սակայն արևմտահայ գրողները պնդում են, որ իրենք բաղաձայնական ու-ն Վ չեն արտասանում: Եթե դա ճիշտ է, ուրեմն չպիտի փոխել ուղղագրությունը, պիտի պահել ավանդական գրությունը:

Այս հարցերը լուծելու համար պիտի կազմել մի հեղինակավոր մարմին: Հոգևոր իշխանությունը, հայ գրագետների ընկերությունները Թիֆլիսում և Պոլսի հայագետները միասին պիտի խորհրդածեն այս հարցի մասին: Մինչ ընդհանուր վճիռը, դրագետները չպիտի ըստ իրենց կարծիքի առաջնորդվեն, ավելի լավ է սխալ հիմունքով, բայց միասնական գրությունը, քան՝ ճիշտ, բայց ոչ միասնական: Ուղղագրական փոփոխությունը չպիտի իրարից բաժանի երկու գրական լեզուները: Մինչև մասնագետների ընդհանուր որոշում կայացնելը միասնական ու պարտադիրը պիտի ավանդական ուղղագրությունը լինի:

Հանձնաժողովի վերը հիշատակված հարցացուցակին, որ կազմել էր Արեղյանը, տրված մի բանի սրտասոխաններ, այնուամենայնիվ, հայտնի է: Դրանցից է Մեյիի պատասխանը նամակով՝ ուղղված Մանուկ Աբեղյանին: Նամակը գրված է ֆրանսերեն 1913 թ. հոկտեմբերի 15-ին Փարիզից¹⁵: Մեյեն գրում է, որ եթե չկա որոշ ուղղագրություն պարտադիր մարմին, պարտադրելու ընդունակ հեղինակություն, ամենախելոք բանը ավանդական ուղղագրությամբ բավարարվելն է, որովհետև միջակ, բայց բոլորի կողմից ընդունված ուղղագրություն ավելի լավ է, քան ուղղագրական անարխիան: Անշուշտ նպաստավոր կլինեն վերացնել է, օտառերը, իսկ յ-ն գրել միայն հոդի արժեք ունենալու դեպքում: Սակայն անհրաժեշտ է հետևել ավանդական սովորույթներին: «Բաղաձայնից հետո և չպետք է դրել (ասիլ), դա չափազանց հակառակ է ավանդությանը և հետևաբար սղեղ է, եթե ուղղենք, ասվիլ գրելվածն է հարմար: Մի խոսքով բարեփոխման մեջ ես ավելի շատ վստահ եմ տեսնում, քան օգտակարություն» (անդ, 121):

Մտի սրտասոխանը, որ գրված է արևելահայերեն, ավանդական ուղղագրությամբ (օգտագործում է՝ մոռացուած, դատապարտուած, լեզուի, փոխուել, թուով, լեզուագետ և այլ ձևեր), նույնպես մեթոդական է¹⁶: Եթե նոր գրական լեզվի հիմունքը կազմող ուսմական լեզվի իրական հնչյունների համապատասխան պիտի փոխվի ուղղագրությունը, առում է նա, այն ժամանակ ոչ թե 11, այլ 111 փոփոխություններով էլ գործը դուրս չի գա: Եթե պատմական ուղղագրությունը պիտի պահվի, այն ժամանակ ոչինչ չպիտի փոխվի: Ընդհակառակն, ինչ որ փոխվել է, պիտի վերականգնվի: Իսկ եթե ոչ պատմական, ոչ էլ իրական հնչյունայինը պիտի ընդունվի, այլ դրանց միջինը, դա արդեն արվեստական մի նոր, թվով III ուղղագրությունը կլինի, մի տեսակ քաղաքագիտական կոմպրոմիս ուղղագրության մեջ: «Դա հարց չի երևում ինձ» (էջ 24): Մինչև անդամ ընդին փոփոխություններ ներմուծելու համար հարկավոր է իրական հասկացողություն ունենալ հայոց լեզուների (հայերենի և ուսմական երկու լեզուների) ծագման և պարզացման մասին: Հընդ-Էվրոպական լեզվաբանությունը հսկայական քայլերով առաջ է գրնում, իսկ հայագիտությունը ամենալավ գեպքում տեղից չի շարժվում (էջ 25):

Նոր ուղղագրությանը դեմ են տրտահայտվում և պաշտպանում են ավանդական ուղղագրությունը Սեդրակ Մանգինյանը, Մ. Շովրբյանը, Նիկ. արեղյանը, Երվանդյանը, բժշկապետ Թ. Նավասարդյանը, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և ուրիշներ: Հով-

հաննիսյանը դրում է. «Ե՛ս տառի տեղ Ե՛մ գրել առաջարկողները կամ բնիկ Հայաստանցի չին, կամ իսպառ կորցրել են հայկական հնչյուն լսելու քննարկությունը: Ես չեմ կարող հոյս, հունիս և այլն դրել, քանի որ ճ չեմ արտասանում, լավ ականք դրէք, տեսէք թէ ինչպէս են վաղարշապատցիք, աշտարակցիք, օշականցիք (գուցէ ոչ այժմեան ջահելները)՝ արտասանում յաջող, յառաջ և այլն: Ոչ հաջող և ոչ աջող, ոչ հառաջ և ոչ առաջ: Ես ֆրանսիական նրբութիւնը Ե, Ե', Ե տառերի միջև չեմ նկատում իմ հայկական ականջով, բայց իմ Ե՛ն և Ե՛յ» չեմ շփոթի»¹⁷:

«Ես մերժում եմ ամբողջ ուղղագրութիւնը փոփոխութեանց խնդիր դարձնել, ոչ միայն անժամանակ է, այլև անհնարին,—ասում է Մանդինյանը:—Ամբողջ ուղղագրութեան փոփոխությունը կատեղծէ լատինական գրերի գործածութեան հարցը: Եթէ շինացիք ու մահմեդականները այդ հարցը առաջ կբաշեն, հայերս էլ նորարարութեամբ ետ չենք մնա և այն ժամանակ ռեֆորմի հարց կը դնենք» (ն. տ.):

«Հանդէս ամառեան»-ի 1913 թ. № 12-ում լույս է տեսնում հ. 9. Մենելիշյանի «Ուղղագրութեան խնդիր կա՞ հայուն համար» հոդվածը: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ արևմտահայերի համար ուղղագրության բարելավման խնդիր չկա: Մեր դավառացին անգամ գիտե՞ւ որ փափով շփականը հնչել, ներքևի և վերևի շփոններն իրար մոտեցնելով, բայց չնպելով, իսկ վ-ով խիստը, ներքևի շփոնը վերին ուտամնաշարին հպելով, նա տարբերում է աւատ և բուրբեվար, առհալի և վիրբ, բանաւոր և վոնմակ բառերի տարբեր արտասանությունը: Ռուսահայերից ոմանք գրում են՝ նավ, թագավոր, ոմանք էլ՝ գինտոր, Աստած, նւէր: Թող գրեն, բայց իրավունք տան մեզի՝ արևմտեան հայոցս, որ սլարոնանք, թէ ռՄեր ուղղագրութիւնը կապուած է մեր անցեալի, մեր գրարար հարուստ գրականութեան, մեր ժողովրդի հետ: Քանզի այդ կապը՝ կնշանակէ գործել սլարոնական մեծ սխալ:

Գեմ արտահայտվելով է-փ մասին Արեղյանի առաջարկած փոփոխությունը՝ Մենելիշյանը նորից ներկայացնում է է-փ ավանդական ուղղագրության կանոնը: Գեմ է, որ ուղղագրական բարեփոխումների հանձնաժողովում լինի Աբեղյանը, քանի որ նա է առաջարկեցի կաղմել: Վ-ագրության հեղինակին ուղղագրության մասնաժողովի մեջ մտցնելը, ասում է նա, նման է ամբարի մեջ պանիրը կատվի հակողութեանը հանձնել: Նրա կարծիքով՝ հանձնաժողովում պիտի լինեն՝ Աճառյան, Մազառյան, Թիրեազյան, Խաչատուրյան:

Թաղենք, որ Մեսրոպն ու Սահակը շարունակեն հրձիկ իրենց պատուով: Եթէ ուղղագրությունը ուզում են հեշտացնել, որ ուսահայերը հեշտ սովորեն և շփոզնեն իրենց մայրենի լեզուն, ճիշտ ճանապարհ չէ: Ծիշտը հայերեն սերել տալն է: «Միտս հայ սիտի գրա, միտս հայ սիտի խորհի, լեզուս հայերէն սիտի խօսի»,—վարտում է Մենելիշյանը (էջ 736): Ուղղագրական բարեփոխություններին դեմ է եղել նաև արծակազիր Ալեքսանդր Երվանդագին, իր «Ենչ պետք է անել» հոդվածում¹⁸ գրում է. «Անելի գեղեցիկ, անելի քաղաքակրթական ուղղագրութիւն, քան այն, ինչ որ տուել է մեզ մեր հին գրականութիւնը, չէ կարող տալ այժմեան և ոչ մի ժողով, այն պարզ պատճառով, որ մենք կատարելապէս գիտականօրէն պատրաստված լեզուագետներ չունենք: Չունենք նաև գոնէ հնչյունների վերաբերմամբ նորը լսողութիւն ունեցող մատենագիրներ, որոնց ճաշակին կարողանայինք հաւատալ: Ունենք միայն մեծ ազգերին նմանվելու հաւակնութիւն, որ այնչափ ծաղրելի է: Էջմիածնի ժողովը սիրողների (գիլետատներ) հավաք է: Մի բան միայն կարող է անել էջմիածնի ժողովը, այն է՝ վերացնել մէջուղից այդ «վ»-ի և «ւ»-ի խնդիրը, որ շտպազանց ծաղրելի կը լինէր, եթէ շլիկէր այնքան վնասակար»: «Ես անձամբ «ու»-ի քերթ կողմնակից եմ, թէ է ինքս մինչև այժմ դժբախտաբար կանոնաւոր չեմ հետեւել նրան»: Ըստ Երվանդագինի առանց այն էլ հայերենը ճայնափորներ քերչ ունի, ու-ն էլ որ կրճատենք, ավելի կպակասի, իսկ ճայնավորը նվազանցանքն է տալիս լեզվին: Վիսպաւանը մոռանում է, որ Աբեղյանի խոսքը բաղաձայնական ու-ի մասին է, ոչ՝ ճայնավորական: Երվանդագինն պահանջում է ստեղծել հայոց լեզվի կայուն դասագիրք՝ կայուն ու միասնական ուղղագրութեամբ, որը պիտի լինի ավանդականը: Ուսուցիչները գրական-գեղարվեստական աշխոնում դանգատվել են, որ մի դասագիրքը դրված է ու-ով, մյուսը՝ ու-ով, երրորդը՝ վ-ով: Մի-երեկսայի ձեռքինը ու-ով դասագիրքն է, մյուսինը՝ ու-ով, որը շատ է խանդարում ուսուցմանը: Մեր ուղղագրությունը կապված է մեր անցյալի, մեր գրարար հարուստ գրականության, մեր ժողովրդի, վերջուպէս թուրքահայ գրականության հետ: Ե՛գեղ բան կը լինի,—ավարտում է իր ասելիքը վիպասանը,—Սահակի և Մեսրոպի տօնը կատարելու համար ժողովվել և նորն Սահակի և Մեսրոպի շինած սքանչելի տաճարը քանդել:»

«Ուղղագրությունը գիտություն է,—գրում է Թումանյանը,—և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով: Պետք է գիտնական մարդկանցից կազմված մի կաճառ և երկար ժամանակ: Եստ ցանկայի է ուղղագրության միօրինակա-

նությունը: «Մշակ»-ի № 140-ից իմացվում է, որ էջմիածինը մտադիր է ուղղադրական պարտադիր կանոններ հրատարակել, որով ուղղագրութայունը մեռում է հինը, ավանդականը: Այլ թե հրաման արձակել, այլ ակադեմիական լրջությամբ որոշումներ կայացնել¹⁸:

Ուղղագրութայան բարեփոխման հարցը էջմիածնում անցկացված «ուղղագրութայան օր»-ով էլ վերջանում է, և 1913 թվականից հետո էլ շարունակում է գործել ավանդական շրտթյունը, մինչև 1922 թվականը: Բերված կարծիքներից երևում է, որ ընդհանուր առմամբ ավանդական գրութայան փոփոխությունը ցանկալի չէր հայ առաջավոր մտավորականությանը: Հենց այն հանգամանքը, որ քիչ տեղերից են հասել անհայտ հանձնաժողովի հարցացուցակին պատասխանում, եղած պատասխաններն էլ բարեփոխման օգտին չեն, որ հանձնաժողովը ըստ ամենայնի չի ստումնասիրում ու քննում այդ հարցը, իրար վրա են զցում, հանդիսավոր հիատին միայն մի գեկուցում է լավում, հլուցթները, հարակից գեկուցումը չեն լավում, ցույց է տալիս, որ դա ցանկալի երևույթ չէր: Ինքը՝ կաթողիկոսը զեմ էր բարեփոխմանը, ուստի անուշագրութայան մատնեց այդ հարցը:

1922 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԻՅՈՒՆԸ

1921 թվականի հունվարին Հայաստանի լուսժողովում Աշ. Հովհաննիսյանի հրավերով Երևանում Աբեղյանը նորից գեկուցում է կարգում մեր ուղղագրութայան բարեփոխութայան մասին: Ապա գեկուցումը լուսժողովումը ներկայացնում է այդ նպատակով կազմված հանձնաժողովին, որը և ընդունում է այն: Այդ գեկուցումը կոմիսարը տպագրելու օրով՝ ուղարկում է հայ լեզվի մշակներին ու լուսավորության բնագավառի աշխատողներին, Աբեղյանի կարծիքով, ցանկանալով լսել նրանց խոսքը: Բայց ոչ մի տեղից կարծիք չի ստացվում²⁰, քանի որ այդ գրքույկի, որ դեռ ավանդական ուղղագրութայամբ էր գրված, առաջին էջում լուսժողովի կողմից ասված էր. «Նուսաուրական նպատակի և կիրարկման միջոցների տեսակետից ուղղագրութայան հարցը քաղաքական հարց է, և հայ լեզվի ուղղագրութայան ուղղորդման խնդիրը Հայաստանի լեզվափոխական իշխանութեան հերթական խնդիրներից մի է: Մեր օրերին այդ խնդիրը քննարկում է միայն տեխնիկական մշակման (ընդգծումը մերն է — Ս. Գ.): Անհրաժեշտ է նշել խնդրի լուծման ճանապարհները, ցույց տալ

ուղղորդման գործնական եղանակները: Այդ ուղղորդյամբ էր, որ կը կամենայինք դեռ լսել հայ լեզվի մշակների խոսքը»: Ուրեմն ուղղագրութայան բարեփոխման հարցը սկզբունքորեն որոշված էր, և միայն տեխնիկական մշակման համար էր քննութայան առարկա դարձվում, ահա թե ինչու տեղերից ոչ մի խոսք չի լսվում:

Այս անգամ Աբեղյանն առաջարկում է նաև ետ, եօ, իւ երկբարբաունների և 1913 թվականին II աստիճանի համար նախատեսված բարեփոխումները, ինչպես և Մալխասյանցի վեճագրութայունն ամբողջովին:

1922 թվականի սկզբներին լուսժողովում Պ. Մակինցյանը կազմում է մի նոր հանձնաժողով, որի կազմում լինում է նաև Ստ. Մալխասյանցը: Հանձնաժողովի նիստում Աբեղյանը, նկատի ունենալով վասնագետների քննադատությունը, առաջարկում է երկու աստիճանով անցկացնել բարեփոխումը: Հանձնաժողովը իր կարծիքը ներկայացնում է լուսժողովին, սակայն վերջինս փոխանակ դա ներկայացնելու ժողովոստիճանի հաստատութայան, ներկայացնում է Աբեղյանի հիշյալ գեկուցման մեջ արված բոլոր առաջարկները, որը և հաստատվում է 1922 թ. մարտի 4-ին, առաջարկվում գործադրել²¹, 1922 թ. Աբեղյանը հրատարակում է «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրութայան» գրքույկը, որը բովանդակում է 1922 թ. մարտի 4-ի դեկրետը, արդեն նոր ուղղագրութայամբ: «Առաջնորդ»-ում ասված է, որ նոր ուղղագրութայան նպատակն է՝ ձայնավորների, յ կիսաձայնի և վրադաձայնի նկատմամբ վերացնել գրել-կարդալու և ուղղագրութայան ուսման դժվարությունները, որ ժամանակի ընթացքում մեր լեզվի բնական հնչյունափոխութայամբ առաջացել են գրութայան մեջ: Դրանով մեր գրությունն այդ մասում վերածվում է հնչյունական պարզ գրութայան՝ համապատասխան դառնալով արտասանութայանը, և մեր այբբենարանը վերստանում է իր սկզբնական կատարելությունը: Բարեփոխութայունը հիմնվում է դրական-դեպրոցական արտասանութայան վրա: Ամեն մի հնչյուն (իմա՝ հրեչույթ) միայն մեկ առանձին նշանապիր պիտի ունենա և ամեն մի տառ միայն մի հնչույթի նշանադիր պիտի լինի: Չպիտի գրել այն տառերը, որոնք այդպես չեն արտասանվում: Եթե բառին նոր հնչյուն է ավելացել, պիտի գրութայան մեջ էլ ավելացնել: Դեկրետով ընդունվում են հետևյալ բարեփոխումները.

1. Օ տառի փոխանակ ամեն դեպքում գրել **ո** (ակոս, աղոթք, ամոթ, արդյոք, արոր, զոտի, ամենորյա, ոթևան, բացոթյա, անորինակ, ոսկեզոծ, ղրոսանք, գրու, ծանոթ, ծղոտ, հզուր, նսար, շո-

չափել, ոգնել, որինակ, ոգոստոս, ողուտ, որիորդ, որհնել, որբել, տնորեն, Մարտ, Մկո, Կարո, Կառնո, Ալիմպոս, սղիսական, Ողես- սա, պրոֆետոր, որդան, Ոկոտալիանոս և այլն): Ո տառը կոչել օ, ոչ թե Վօ:

2. Է տառի փոխանակ ամեն դեպքում՝ Ե. աղետ, աղվես, ամեն, անեծք, անորեն, ապավեն, ապաքեն, առեջք, դեթ, տգետ, Ե, նյակ, զենք, եռքան, թեպետ, լեզոն, մեկ, մեջ, հանդեպ, հանդես, հոգնառ, հրավեր, շնորք, երբեք, միջորոշական, քրեյական, անորեն, կեցցե, գուցե, թե, յոպե, քաղե, մարգարեյական, թեյական, քրեյի, քրեյի, կր բերե, կր տանե, կանաչեղեն, հայերեն, արդեն, Միքա- յիլ, Ջավեն, Գուրգեն, Գանիել, Ռաֆայել, Ներսես, Միմեոն, Թա- դեոս: Մատթեոս: Ս տառի անունն է է և ոչ թե յե: Է-ն մնում է մի- աջն իբրև VII-ի նշան: Թայց սա շի կատարվում, քանի որ Է-ն հանվում է այբուբենից:

3. Երբ Լ-ն արտասանվում է Վ, գրել Վ տառը (ավաղ, թիվ, սեվ), ռև նշանագիրը թողնել իբրև սղագրութայն նշան, քայց տո- ղադարձի ժամանակ գրել ևՎ (տե-վել-տերև-վի):

4. Բաղաձայնական ու տառի փոխարեն գրել Վ (ասաված, ղվարթ, նվեր, դործվածք, թշվառ, նվաստ, նվաղ, դրվածք, զինվոր, չեղվի, սպանվել, կատվի): Երբ Լ-ն սլահում է իր պարզ հնչյունը, պիտի տան էլ պահել (տիրացուական վերարկուի, յերկուական, բուրժուա, կուրա, կուրգա): Բաղաձայն Վ-ն միշտ Վ տառով, իսկ ձայնավոր Լ-ն ու տառով են արտահայտվում, Լ-ն մնում է սոսկ իբրև ու-ի բաղադրիչ: Այդ պատճառով ապագայում կարելի է ու հնչյունն արտահայտել և տառով: Ինչպես որ հետո գրում էին ան- կին, սին, միութիւն, այժմ էլ կարելի է գրել՝ անկյն, սյն, միու- թյուն, նւն, իսկ ապագայում նաև՝ շւր, տւն, կերակր, տեսնւմ, շււմ, լեղւ, շւ, գնալւ, մեծութւն և այլն:

Մալխասրանցն առաջարկում էր այս Լ-ն գրել միայն օտար- աղգի Ա-ի դիմաց (Նաղո):

5. Ոյ տառակապակցութայն ո-ի փոխարեն գրել ու, երբ ոչ-ը ույ է որտասանվում (լույս, բույս, կույս, հույս, սույն, նույն, միե- նույն): Ոյ կապակցութայնը թողնել միայն ոյ հնչյունի համար (խոյ): Այն բաներում, ուր ույ-ը ու է կարդացվում, գրել ու տառով (զգուշ, մեղուշ, անուշ, ուժ, աշխուժ, ճկութ, բուն, բութ, սառուց, պուտ, շուտ, խուլ և այլն):

6. Բառասկզբի հազագային յ-ի փոխարեն գրել Ե տառը (հա-

գննալ, համանուն, հաղթ, հակիթ, հաճախ, համառ, համբույր, հանկարծ, հիշել, հուշել):

3 տառը կոչել յ (յ, ն), ոչ թե Եի: Կարելի է երբեմն առանց յ-ի գրել՝ ախճապակ, ախուն, ամույար, ապավել, աքող, արգո, իրավի, ուշիկ, իստակ, ունք, Ակոք, Ովանես, Ոսեփ, Ոհան, առաջ, առաջա- քան և այլն: Պահել յետև, յետք, յետինք, յետ դառնալ, յետ մնալ, յետ քերել ձևերը և արտասանել յետ ձևով, ոչ՝ Եետ:

7. Սա, Եօ, իւ երկբարբառները գրել շա, յո, յու տառակա- պակցութայններով (արյուն, մատյան, պատյան, սենյակ, պաշ- տոնյա, քրիստոնյա, Գրեգորյան, անկյուն, միություն, արդյոք, յոթ, հյուպե, գնվորտ, յուզ, գյուղ և այլն): Նույնպես առնված բազմաթիվ բառերում հանկարծ իսպիլոնի դիմաց սկզբում դրում էին և տառը (Սղուպոս), հետո՝ իւն (Սղուպոս), ավելի ուշ՝ մի- աջն ի: Այժմ էլ գործածենք միայն ի-ն (գեմնագիտն, դինամիտ, յաբիրիթոս, Եգիպտոս, դինաստիա, միսսուրիա, լիկոբոս, Կի- րակոս և այլն): Իւ-ով գրվող մի քանի բառերում պահպանել իւ հնչյունը՝ այն արտահայտելով յու տառակապակցութայնը (Թյու- ղանդիա, Կյուրոս, Պյութագոր): Մի շարք օտար անուններ, թեև առտասանում ենք յ-ով (Գերմանյա, Ֆրանսյա, Անգլյա, Ասյա, միլյոն, միլիոնյա), պիտի գրել ի-ով՝ Գերմանիա, Անգլիա, Ասիա, միլիոն, միլիոնիա: Առանց յ տառի գրել նաև՝ ձիավոր, միանալ, կղզիաբնակ, ախեղերք, միություն, միայն, որիորդ և նման բա- ռերը: Այսինքն ձայնավորին նախորդող ի-ից հետո յ չգրել:

8. Դուրս ձգել բառավերջի անձայն յ տառը (ժառա, քահանա, սատանա, վրա, արբա, պահածո, ներքո, հավաքածո, ձուլածո):

9. Ձայնավորին նախորդող և տառից հետո լավող յ-ն գրել (յուպեյական, միջուրեյական, քրեյական, գործունեյություն, պաշ- տոնեյություն, կյի, կյիր, կյինք, գրեյի, գրեյիր, գրեյինք, գրեյիք, բուպեյի և այլն): Եթե Ե-ից հետո յ չի լավում բնականաբար շպիտի գրել (քարեատյաց, բարեախորժ, հոգնառ, քնեած, լեզոն, ով- կեան, իղեա, Թեոդոր, Թադեոս, Մատթեոս):

10. Բառասկզբի օ տառից առաջ լավող անկայուն Վ հնչյունը գրել Վ տառով (վոգի, վոգորել, վոլորել, վոզնի, վոխ, վոհ, վոքը, վոսկոթ, վոդկուլ, վոզնաշար, վոշ, վոճ, վոմն, վոդոդի, վոսկի, վոտոպի և այլն): Սրանց մի մասը առանց Վ-ի էլ կարող է արտա- սանվել (ոդորմի, ործկալ, որոտալ):

11. Բառասկզբի և տառից առաջ լավող յ-ն գրել (յեզր, յերաւալ, յերեք, յեղբայր, յերջանիկ, յերկրորդ, յերրորդ, յերաղ, յերես, յեն-

թակա և այլն): Բառամիջում այդ անկայուն վ-ն և յ-ն շին զբլում (ծնկոսկր, վուշք, անոխակալ, անհրես, ապերջանիկ):

12. Եմ բայի ձևերը նախորդ բառի ձայնափոխին հաջորդելիս յ են ստանում (զնալու յեմ, դչաղացի յեմ, դայու յեմ, տալու յե, ձի յե), իսկ բաղաձայնին հաջորդելիս շին ստանում (ես եմ, լավ եմ, գործ ե): Բառասկզբի անկայուն յ-ն ու վ-ն շին գրվում: ա) բարբառային բառերում, ուր ե-ն ու ո-ն հնչում են է, օ (Կրինչ, ոճորք, որմին, ոչով, Լրենկ), բ) շ, կ մասնիկներից հետո (կողջունեմ, շեկավ, շեղավ, կորսչվի), գ) երբ ե-ով ու ո-ով սկսվող բառը նախորդ բառին կպած է արտասանվում, օրինակ՝ գարունը Եկավ, աղչիկը վողբում է—բայց՝ գարունն Եկավ, լարերը ողբացին, իրրև՝ գարուն Եկավ, լարեր նողբացին արտասանություն:

Հրահանգված էր ժողկոմիտորհի ղեկրեսը դպրոցներում կիրառել 1922—1923 ուս. տարվա սկզբից, որովհետև պիտի զասագրվեր փոփոխին, լրացրուձայն մեջ՝ 1922 թ. ապրիլի մեկից, պաշտոնական զրագրություններում՝ մայիսի մեկից: Ըստ որում, լրագրերում, գրականության մեջ և պաշտոնական զրագրություններում ժամանակավորապես թույլատրվում էր՝ բառասկզբում սյուհի է, օ. և ե տառերը (Լրագ, Երևան, օր, օգուտ, էակ, էություն), եա, եօ, իւ հրկրարոտային տառակապակցությունները (արդեոք, բրդեա, սիւն): 1922 թ. հոկտեմբերի 2-ից լուսծաղկոմի նոր հրահանգով սկսվում է նոր ուղղագրության ամբողջական կիրառությունը: Այլքանարանից հանվում են է և օ տառերը:

«Նորհրդային Հայաստան» օրաթերթում տպագրվում են հոգվածներ, որոնք ողջունում են նոր ուղղագրությունը՝ կղերամիտ ու պահպանողական համարելով ավանդական ուղղագրության կողմնակիցներին: Թեթի 1922 թ. ապրիլի 2-ի համարում «Նոր ուղղագրության պատմական ակտը» հոգվածում հեղինակը (Մուշեղ ստորագրությամբ), զրվատելով Խ, Աբովյանի, Ղ. Աղայանի, Ս. Թառայանի («Ընկեր») ուղղագրական սկզբունքները, ողջունում է կառավարության որոշումը, պահանջում, որ ու տառի փոխարեն էլ մի նոր տառ հնարվի, որպեսզի երկու տառով չգրվի նոր ուղղագրությունը, ասված է հոգվածի վերջում, աղմուկ կառաջացնի փախտական էքսմինիստների, ազգային ջոշերի, կղերական վեղարավորների և տիրացու վարժապետների հակահեղափոխական խախտամիտների շրջանում, բայց մենք պիտի տարածենք այդ նոր ուղղագրությունը: Հացունին «Ռազմավեպ»-ի 1925 թ. № 2-ում տպագրված էր հոգվածում քննադատում է այդ բարեփոխումը՝ այն համարելով ժայրահեղ ու վնասակար:

Ավանդական ուղղագրությամբ գրվել պահպանողականություն էին համարում դեռ ԾԹ-ական թվականներից (Ղ. Աղայան, Պ. Մալխոսյանց, «Մշակ», «Ընկեր» և այլն), որն իհարկե ծայրահեղություն էր: Առաջադիմությունը նույն կամ նվեր պրոլու մեջ է: Այսօր մենք գրեթե վերականգնել ենք է-ի և օ-ի գրությունը, որ երբևէ չի նշանակում, թե հետագիմել ենք կամ պահպանողական քայլ կատարել: Պրոլետարիտի այդ շրջանում, երբ Թուրքաստանում մերժում էին Պուշկինին, Հայաստանում էլ մերժողական վերաբերմունք էր արտահայտվում մեր անցյալի մշակութի նկատմամբ, նոր ուղղագրության առթիվ զրված հոգվածներում Մաշտոցին համարում են տիրացու, կղերամիտ, վնասական, որի ուղղագրությունն իբր անհարկ է մեր նոր կյանքին ու հասարակական-քաղաքական սկզբունքներին:

Այս նոր ուղղագրությունը շին քննունում, սակայն, առաջատար մտավորականները՝ Շիրվանյան, Հովհ. Հովհաննիսյան, Թուրմանյան, Իսահակյան, Աղոնց, Մեյն, Մառ, Աճառյան և այլք, չքննադատեց ողջ արևմտահայությունը, պարսկահայությունը:

1922 թ. մայիսի 20-ին Հայաստանի լուսծոգում Մակինցյանը Վրաստանի լուսծոգոմին հատուկ զրույցով հայտնում է ուղղագրության փոփոխության մասին և առաջարկում Վրաստանի հայկական դպրոցներում ու մամուլում ընդունել ի գիտություն: Այդ գրությունը, սակայն, Վրաստանի լուսծոգոմը պատասխանում է, թե ընդառաջելով հայ շատ դրականագետների, առաջատար անձանց խնդրանքին, որոնք նոր ուղղագրությունը համարում են արատավոր, Վրաստանի լուսծոգոմը հնարավոր է համարում ժամանակավորապես թողնել հին ուղղագրությունը, չսպառազրել, որ նոր ուղղագրությամբ գրեն, մինչև որ հրավիրվի հայ մտավորականների ընդհանրած լուսծոգակցություն այդ հարցի վերաբերյալ և քննությունն արդյունքը հայտնվի Հայաստանի կառավարությանը²²:

Արխիվում պահպանվում է Մակինցյանի պատասխանը Վրաստանի լուսծոգոմին ձեռագիր վիճակում: Մակինցյանը գրում է, թե բարեփոխման նախագիծը մի տարուց ավելի է, ինչ ուղարկված է քննության՝ նախորդ լուսծոգոմ Ա. Հովհաննիսյանի կողմից: Այն անձամբ Ա. Հովհաննիսյանն է հանձնել հայ գրական ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանին: Երևանում այդ հարցը մշակել է մասնագետների հատուկ հանձնաժողովը, որի եզրակացությունը ներկայացվել է ժողկոմիտորհ և հաստատվել: Միակ բացասական արտահայտվողը Պուշկի ներկայացուցիչ Օտյանն է եղել, վենետիկից, Վիեննայից պատասխան չի ստացվել: Հայաստանում գրող-

ների միտքով, դիտական հիմնարկները, համայնարանն արդեն ընդունել են նոր ուղղագրությանը, բոլոր դասագրքերը նոր ուսումնական տարում նորով են սպաքվելու: Հարմար բան չէ, որ Հայաստանի կառավարության որոշումից հետո վրաստանի մտավորականությանը քննության առարկա գործնի այդ հարցը²³: Այստեղ կրկու հարցում Մակինցյանը շեղվել է իրականությունից: 1. Նախագիծը մեկ տարի առաջ ուղարկվել է ամենուրեք՝ Վիեննա, Վեննա, Պոլիս, Քիֆլիս և այլն, ոչ սկզբունքորեն քննության ենթարկելու, քանի որ նախաբանում լուսժողովում կողմից գրված է. «Մեր օրերին այդ խնդիրը քննության չի դրվում սկզբունքի տեսակետից: Բեֆարմի խնդիրը կարոտ է միայն տեխնիկական մշակման» այս ուղղությամբ է լուսժողովմանը կամենում չսեղ թհայ լեզվի մշակների խոսքը: Նշանակում է բարեփոխման հարցը սկզբունքորեն վճռված էր և քննության ենթարկա չէր: 2) Մակինցյանը գրում է. «Թե բարեփոխման հարցը հատուկ «կոմիտեանտ անձերի» հանձնաժողովում քննարկվել է լուսժողովմանում, ապա արդյունքը գեկուցվել է ժողովում: Խոսքի, իսկ Մ. Աբեղյանը «Լուսժողովության անֆորմը» գրքի առաջին էջում գրում է. «Լուս. ժող. կոմ. ընկեր Պ. Մակինցյանը վոչ թե հանձնաժողովի կարծիքը, այլ իմ զեկուցման մեջ արված բոլոր առաջարկությունները ներկայացրեց ժող. կոմիտեաների խորհրդին, վոր և 1922 թ. մարտի 4-ին հաստատեց այն և հրամայեց գործադրել:» Հայաստանի պետական արխիվում պահպանվում է ՆՍՍՀ ժողովում: Խորհրդի 1922 թ. մարտի 4-ի նիստի օրագիրը (№ 16): Նիստին ներկա են, եղել նախագահ՝ Ալ. Մյասնիկյանց, անդամներ՝ Մակինցյան, Ծաճկերյան, Ավիս, Մուսիկյան, Մարգարյան, Երզնկյան, Ղազարյան, Իվանյան, Կոստանյան, Բարտուղար Գր. Տեր-Միմոնյան: Օրագրում գրված է. «Որոշեցին—սկզբունքով ընդունել լուսժողովի ներկայացրած դեկրետը նոր ուղղագրություն մուծելու մասին: Առաջարկել լուսժողովին մշակել հրահանգներ հաջորդականության կարգի և այդ դեկրետը կյանքի մեջ կիրառելու մասին»²⁴: Ուրեմն ժողովում: Խորհրդը հաստատել է ոչ թե հանձնաժողովի որոշումը, որ չի ներկայացրել Մակինցյանը, այլ Աբեղյանի առաջարկները, ինչպես գրում է ինքը՝ Աբեղյանը: Մեզ հայտնի չէ, թե ինչ է եղել հանձնաժողովի վճիռը, արխիվում չկարողացանք այդ որոշումը և առհասարակ հանձնաժողովի մասին որևէ բան գտնել: Բայց Աբեղյանի սույն գրքում գրածից գտնե մի բան պարզ է, որ 1921 թ. հրատարակված առաջարկները հանձնաժողովը կա՛մ չի ընդունել, կա՛մ մասամբ է ընդունել, ըստ երևույթի 1913 թ. ա-

ռաջարկած առաջին առարկանի փոփոխությունները, և նշել է, որ արտասահմանյան հայությունը չի ընդունի այս նոր ուղղագրությունը:

Արխիվում պահպանվում է նաև Հայաստանի լուսժողովի գրությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնի քարտուղարությանը, ուր գրված է, թե նոր ուղղագրության մասին հրատարակված դեկրետը ընդունված և հաստատված է ժողովում: Խորհրդի կողմից 1922 թ. մարտի 4-ին, և անմիջապես հանձնարարված է ի դիմացում: Խորհրդը սահմանափակումներով, որոնք նշված էին լուսժողովի նույն թվի մարտի 12-ի հրահանգում, 1922 թ. հոկտեմբերի 2-ին հրատարակված հրամանով լուսժողովի կողմից այդ հրահանգը վերացվեց և նույն օրվանից պարտադիր հայտարարվեց «նոր ուղղագրության» կանոնների աժողովական կիրառությունը: Վրաստանում նոր ուղղագրությունը պարտադիր է հայտարարված վրաստանի լուսժողովի կողմից, հայտարարության ժամանակը հայտնի չէ: Այս գրության տակ գրված է «Լուսժողով, 3/IV 1923 թ.»²⁵:

Հայաստանի պետական արխիվում պահպանվում է Հովհաննես Թումանյանի 1922 թ. մայիսի 17-ի նամակը հասցեագրված Հայաստանի լուսժողովին: Ընտ, որպես հայ գրող և հայ գրողների Միության նախագահը՝ գալիս եմ յայտնելու իմ զարմանքը և բողոքելու էն վարժուների դեմ, որ ունեցել է Հայաստանի լուսժողովը էս կարևոր խնդրում: Պ. Մ. Աբեղյանը մի առաջարկ է արել ու գրել հրատարակ: Եստ յաւ Բայց Հայաստանի լուսժողովը որտեղից է իմացել, թէ և պ. Մ. Աբեղյանը և ինքը, լուսժողովում էլ նրա համիտանն անսխալական են, որ առանց քննութեան ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել և միայն դրանով գրել ու տպագրել: Պ. Աբեղյանի առաջարկը ընդունելի է, թե չէ, դա դեռ քննելիք խնդիր է. երբ դա քննելիք խնդիր է, հետևաբար լուսժողովին հրամանը անընդունելի է: Եւ եթէ էսպէս է, ապա նրան, լուսժողովին մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր կարողությունը, խնդիրը համարել բաց և դնել քննութեան»²⁶: Այս նամակի վրա Մակինցյանը մակագրել է՝ «Կցել գործերին» և միայն այդքանը: Զեռագրի ուղղագրությունից էլ է երևում, որ Թումանյանը նոր ուղղագրությունը չի ընդունում:

Ավետիք Իսահակյանը Մարտիրոս Սարյանին 1924 թ. նոյեմբերի 12-ին վենետիկից գրած նամակում Հայաստանի մասին գրում է. «Ամեն բան լավ է զնում Հայաստանում (Երևանից եկած թեր-

թերք կարգում են), միայն մի բան է դեռ—ուղղագրությունը, աշխատեցեք փոխել»²⁷։

Այլ այսպես, թեև պետական օրենքով հին ուղղագրությունը փոխվում է, բայց դժգոհությունները չեն դադարում։ Մամուլում շարունակում են սուղադրվել քննադատական հոդվածներ թե՛ նոր-հրատարակված Միության ստեղծանկյունը և թե՛ նրա ստեղծանկյունից դուրս։ Հին մտավորականությունը չի հաշտվում նոր ուղղագրության հետ։ Նույնիսկ Ա. Մյասնիկյանը, որի նախագահությամբ է ժողովումարձը որոշում ընդունել նոր ուղղագրության անցնելու մասին, 1924 թ. դեկտեմբերի 20-ին Քիֆիից Սերիկ Դավթյանին գրած նամակում ասում է. «Ներկայից պահպանողականության միջև այսօր, ի ջամբ, չեմ սովորել կարգին գրել նոր ուղղագրությամբ»²⁸։

1924 թ. «Մարտակոչ»-ում (№ 10—11) լույս է տեսնում Ստ. Մարխասյանցի «Կեղծային հարցեր» հոդվածը, որ նա քննադատում է «Առաջնորդ»-ի կանոնները։ Մեղադրում է, որ Արեղյանը այդպիսինից դուրս է դրում է և օտարերը։ Մայիսայանցն ընդունում է երրորդ և չորրորդ առաջարկությունը (վեզագրություն), հինգերորդը (այ>ույ՝ լույ>լույս), ութերորդը (բառավերջի անծայն յ-ն զցել)։ Առաջին և երկրորդ առաջարկությունները, օ և է տառերի մասին, մասամբ է ընդունում։ Կարելի է բառամիջի է-ն և օ-ն հանել, դրել է և ո (հանդես, ակոս)։ Բայց նպատակահարմար չէ բառակերպել-ն ու օ-ն հանել։ Դա ստեղծում է նոր դժվարություն, երկարացնում է գրությունը, առաջ է բերում գրության անկայուն ձևեր (վոտ, բայց՝ անտո, չկար, բայց՝ ծովկար), դանդաղան բացառություններում։ Ըստ Մայիսայանցի՝ է-ն պահել նաև բառամիջում, ձայնավորից հետո (մարդալի, մարդարէութիւն)։ Արեղյանն առաջարկում է բարբառային ձևերը ո-ով գրել՝ սլորան, ոքմին, Իսկ գրողը, ասում է Մայիսայանցը, ի՞նչ իմանա, թե դա բարբառային ձև է, թե՛ գրական։ Բացառության մեջ ասված է, թե՛ առանց վ-ի գրել, երբ ցանկանում ենք բառը ժողովրդական ձևով արտասանել։ Պատկերացնում էք՝ ինչ կամայականություն կառուցանա, ասում է Մայիսայանցը։ Ըստ «Առաջնորդ»-ի՝ բառակերպի անկայուն վ-ն քննելում է, երբ ո-ով սկսվող բառը սերտ կերպով միանում է նախորդ բառին (փայլովն ողողված), որը շարքային գրողի համար շատ դժվար է։ Առաջարկված է գրել՝ կողոնենք, շողունեց։ Արդյո՞ք չեն գրի՞ կը վողունեն, չը վողունեց։ Ուրեմն 10-րդ կետը բարդացնում է գրությունը։ Այս նոր ուղղագրությամբ գրությունը 2—3 % -ով ավելացել է, փոխանակ պակասելու։ Առեղյանը ձգտել է

ո—օ նմանագրությունից բխող դժվարությունից ազատել մեզ, նրպատակը լավ է, բայց միջոցը սխալ է ու ճախող։ Այս ձևով «Առաջնորդ»-ում 6 բացառություն է նշված նաև և—է տառերի ուղղագրության համար։

«Առաջնորդ»-ի վեցերորդ առաջարկությամբ բառակերպի յ-ն փոխվում է հ տառի կամ դուրս է գցվում։ Սա նշանակում է յոն և հոն՝ բառերի յ-ն ու հ-ն իրարից չվանազանել, մի բան, որ անում է ժողովուրդը։ Սա արվեստական, սխալ ուղղագրություն է։ Այս առաջարկի կոտակցությամբ արված երեք բացառությունները (հախճապակյա—ախճապակյա, հուշիկ—ուշիկ, Լուս, շեք) կամայականության դուռ են բաց անում։ Սխալ է գրել հոտեկայս, հոգուտ, հաւկաւուրաստից, համեկայն դեպ, հանուն։ Մրանք մթազնում են բառի կազմությունը։ Մանավանդ որ կլինեն մարդիկ, որ բառակերպի յ-ն հ չեն արտասանի։ Յ-ով սկսվող 100 բառից 13-ը առաջարկված է գրել նաև առանց յ-ի, 5-ը՝ յ-ով, մնացած 80-ից 30-ը նույնպես կարելի է առանց յ-ի գրել՝ ախինթ, անախ, ամոյր, անդիմանել, անդուղն, անկարծ, անձնել, աշորդ, արձակել, ունիս, ուլիս, ուշարար և այլն։ Մնացած 50 բառն էլ պիտի սովորեցնել, որ յ-ով արտասանեն, ոչ թե հ-ով։

Անդրադառնալով ետ>յա, իւ>յու փոփոխությանը, Մայիսայանցը գրում է, թե մեր լեզվում յա, յու, յո երկբարբառներ չկան։ Ի տանէ ձևի նման յազգէ-ն էլ կարգացվում է իտզգէ, յառաջ-ը՝ իտաջ, ոչ՝ Լառաջ, հազգէ։ Համեմատում է ռուսերենի հետ՝ ալ=ай (բալ—красй), ոլ=ой (խոլ—моё), ուլ=уй (լուլու—позилуй), իսկ շրջված ձևով կլինի եա=ен (կանք—пятъ), հո=ё (հոթն—ёлка), իւ=ю (լուր—юг), ոչ թե՛ կլունք, յոթն, հլուդ, ուտեթեն Һа, Һо, Һу—пять, менѡа, Һолка, Һуг և այլն։ Յ-ն կիսաձայն է (ձայնավորական բաղաձայն), նախընթաց ձայնավորին միանալով կազմում է երկբարբառ, իսկ նախընթաց բաղաձայնին չի կարող միանալ։ Եթե բաղաձայնին է հաջորդում, ապա նրանց միջև ը է լսվում, ինչպես արկըդ, այժըմ, ախըն բառերում։ Ուտի սեկյակ, աղղոն, սյուն գրությունները հայերենում կարգացվում են յ-ի կիսաձայն հնչյունը պահպանելու գեպում՝ սևերյակ, արդրյոր, սըյուն, Յարութրյունըլան։ Կան ալ, ոլ, ուլ երկբարբառներ։ Երկբարբառների յա, յու, յո գրությունը դժվարանում է նաև նշված երեք բացառություններով (Կիրոս, Անգլիա, ձիավոր և այլն)։ Ոչ մի առաջարկություն այնքան անպետք, սխալ, աչք ծակող չէ, որքան եա>յա, իւ>յու առաջարկությունը։ Իններորդը վերադարձ է դեպի հինը։ Այժմ շատերն են

րուպեական, գրեթե բառերն առանց յ-ի արտասանում, Գծայու յեմ, բայց՝ գծացել եւմ գրութեանները սխալներն առիթ են տալիս:

Արեղյանի ներկայացրած նոր ուղղագրութիւնը, բացառութեամբ III, IV, V, VIII և մասամբ էլ I, II կետերի, ավելի բարդ, դժվար է, քան ավանդականը, եզրակացնում է Մալխասյանցը: Վերջում հայտնում է, որ փնքը կողմ է ուղղագրութեան բարեփոխմանը և ցանկանում է, որ այն գեթ լինի նշված թերութիւններից:

Մալխասյանցի այդ հողվածին Արեղյանը պատասխանում է 112 էջանոց մի գրքով՝ «Ուղղագրութեան ռեֆորմը» խորագրով, լույս տեսած 1925 թվականին: Համառոտ ներկայացնէնք այդ պատասխանը: Յա, յու, յո գրութիւնները հին սերնդի աչքին են անճոռնի երևում, իսկ ուղղագրութեան բարեփոխութիւնը նոր սերնդի համար է և ոչ՝ հին: Աչքին անտղտը լինելը ժամանակավոր երևույթ է, դա դժվար են ընդունում, բայց շուտ են վարժվում: Բառի երկար լինելը, թուղթ ու թանաքի, ժամանակի տնտեսումը կապ չունի ուղղագրութեան բարեփոխման հետ, որ հենվում է հընչունային գրութեան վրա: Երբ Աղայանը վ-ի փոխարեն ւ-ն էր ընդունում վերջինիս կարճութեան, փոքրութեան պատճառով, ինքը՝ Մալխասյանցն էր քննադատում նրան, թէ գրութեան տառածնը նշանակութիւն չունի: Բառերի երկարին ու կարճանալը, ասում է Արեղյանը, մեր ձեռքին չէ, լեզվական օրենքով է լինում դա, մենք ինչ անենք, որ ուտ-ը՝ (oi) դարձել է՝ վոտ (vo): Քանի որ մեր կիսաձայն յ-ն արտահայտվում է երեք նշանազանով՝ և (սենեակ), ի (հարիր), յ (այո), դրանից էլ բխում են դեռ հնից եկող սխալներ: Իւ-ի փոխարեն պատահում են եու-ն, իու-ն (եուզ, արեուս, հարեուր, հարիուր, ծառաեութիւն, միուս, կաեութի), եա-ի փոխարեն իա-ն ծառաիական, նաիած, սենիակ, արզիոք, նան գյուղ, գյուղացի: Գիտնականները գտնում են, որ հայերեն յ-ն բաղաձայնական ի է: Ըստ Հայկազյան բառարանի յ տառը երկու ձայն ունի, բառասկզբում և է, բառամիջում և և ի տառերի հընչումն ունի, մի քանի բառերի վերջում հնչվում է որպէս թեքատ և (խոյ, հայ): Մէյեն, Հյուրըմանը, Աճառյանը յ-ն համարում են բաղաձայնական ի, ձայնավորների միջև նա կիսաձայն է: Մենք հիմա սենեակ, արիւն, Եօթն բառերը առաջվա նման seneak, arjun, eothon չենք արտասանում, այլ senyak, arjun, yotlan, սենյակ, արյուն, յոթն, և որովհետև ընդունում ենք մի հնչյունին մի գիր սկզբունքը, պիտի գրենք սենյակ, արյուն, յոթ: Միայն է Մալխասյանցը, թե մենք արտասանում ենք սենյակ, արջուն: Անկախ նրանից, թե իւ, եա, եո-ն երկբարբառ են թե ոչ, այժմ

արտասանվում են յա, յու, յո, այդպէս էլ պիտի գրել: Մալխասյանցը կամայականորեն կտրում է բառասկզբի յ-ի գրութիւնը և գրում՝ աճախ, անկարծ, ակինթ, այդ նույն հաջողութեամբ նա կարող է բառասկզբի հ-ի գրութիւն էլ կտրել և գրել աճար, ավատաւ, ամբարձում: Ստուգարանական գրութիւնը միշտ հակառակ է հընչունականին: Եթէ Մալխասյանցը մտածում է, թե յոտնկայա-ը կոտնկայա գրելով կկորցնենք կարճութիւնը, այդ դեպքում ինչու է գրում ըմբոնել, ըմբեռանել, ընկնել, սոողել և այլն, չէ՞ որ այդ գրութիւններում կլ մթագնած են ընդբերանել, ընդկնել, զոողել, ընդբոնել ձևերը:

Արեղյանը պահանջում է գրել՝ շարոնել, կորոնի, ծովագր, նրբեռանգ՝ ելնելով հնչական գրութիւնից: Բառասկզբում այդ բառերի ո-ից առաջ վ է լսվում, ե-ից առաջ՝ յ, ուստի գրենք վ (վորոնել), յե (յերագ), իսկ բառամիջում չի լսվում, չգրենք: Եթէ բառասկզբում օ—է-ն պահենք, ապա դրանք կմտնեն և բառամեջ և օր, օգնական, էի, էջ բառերի օրինակով կգրեն նաև՝ բանվօր, սօվօրէլ, ևկէղէջի և այլն: Եթէ թույլ տանք գրել Վոսփոր, վոհմակ, կզրեն նաև՝ վոզրիկ, վորդի, Եթէ բառավերջում թույլ տանք գրել օ, կզրեն նաև՝ Մարօ, կարօ: Մրանք սխալների դոտ են բաց անում: Վերջում Արեղյանն ավելացնում է, որ այս փոփոխութիւններով չի ավարտվում ուղղագրութեան բարեփոխումը:

Այսպիսով, Արեղյանը ձայնավորների, երկբարբառների, վ բաղաձայնի գրութեան մեջ մի կողմ թողնելով ավանդական ու ստուգարանականը՝ հետևողականորեն դործադրում է մի հնչյունին մի գիր, յուրաքանչյուր գիր մի հնչյունի համար սկզբունքը: Բոլոր այն դեպքերում, երբ ծանոթութեան կարողով նա նշում է ավյալ տառի բառամիջի գրութիւնը, դարձյալ ելնում է իր հիշյալ սկզբունքից: Եթէ պահանջում է նույնիսկ, որ եմ բայի ձևերը ձայնավորով վերջացող բառին հաջորդելիս յ-ով գրվեն (գրելու յեմ, գյուղացի յենք), դարձյալ ելնում է արտասանութիւնից: Արեղյանի սկզբունքը՝ հնչյունային գրութեան, լավագույնն է, որին ձգտում են աշխարհի բոլոր լեզուները: զծած ուղղագրական համակարգը հետևողական է, գիտական հիմնավորումով: Սակայն դեռ և պակասութիւններ: Ամենից առաջ կանոններում շատ են բացառութիւնները, որոնք դժվարացնում են ուսուցումը: Արեղյանը հայերենի հնչյունային համակարգը քննելիս երբեմն նկատի է ունենում միայն արևելահայերենը, այլ կրող նա իւ, եա երկհնչյունները չէր արտահայտի յու, յա տառակապակցութիւններով, քանի որ արևմտահայերենում իւ-ն յու չէ, այլ ֆրանսերեն ւ:

Մյուս կողմից, Արևելյանը հաշվի պիտի առնելու նաև հարցի հառարակական-քաղաքական, ինչպես և տեխնիկական կողմը:

Այս դեպքում նկատի ունենք մեր մողովորդի երկու հատվածի միասնական դրուժյունը, մեր անցյալի մշակութային ժառանգությունից կտրվելու, խոթթանալու և վերջապես թուղթ ու թանաքի, ժամանակի կորստի հարցը: Չէ՞ որ 1913 թ. ինքը՝ Արևելյանն էր ընդգծում, որ պետք է ունենալ ու պահպանել գրավոր խոսքի միություն, և թե ուղղագրական բարեփոխությունը սեպ է խրելու մեր երկու հատվածների միջև, շարժի կատարել: Արևելյանը նահանգն էր թե՛ այս և թե՛ 1913 թվականի՝ փոփոխությունը աստիճանաբար կատարելու իր սկզբունքից, ըստ որի բառը չի կարելի այնքան փոխել, որ անձանաչելի դառնա, շատ սարքերով հնից: Իսկ հիմա յետոյ-ը դարձրեց հետո, յողուածը՝ հողված, Եօրը՝ յոթ և այլն:

Այս ուղղագրության դեմ արևմտահայերից շտանձնապես ակտիվ էր գործում վարդան Հաջունին: 1924 թ. «Բաղմավելի»-ում նա գրեց «Սրեանեան ուղղագրութեան դէմ» հոդվածը (էջ 394): Հաջունին պատմում է, որ Կ. Պոլսի հայ արվեստի տանը կազմակերպվել է մեծ բանալիճ, որը երկու քամարում է ունեցել, բայց կոնվենցիոն պատճառով ընդհատվել է: Բանալիճում երեք հողի են պաշտպանել նոր ուղղագրությունը. մեկը Ա. Նաչատրյանն է եղել: Անդրագառնալով նոր ուղղագրությանը՝ Վ. Հաջունին քննադատում է այն, պաշտպանում ավանդականը:

1. Լեզուն փոխվում է աստիճանաբար, ներքին օրինաչափությամբ: Մերսուլյան դրուժյան տարբերությունը այսօրվա սովորականից է գրի դործածությունն է մի քանի բառերում (եի, եիր, եիք, եաք և այլն), որոնք միջնագրում ստացան գրություն ներկա ձևը: Մյուս շեղումները տղիտություն հետևանք են:

2. Նոր ուղղագրությունը «պատուար մը կը դնէ անցեալ մասնագրութեան և սրեանեան ապագայ սերնդին մէջ» (298), նոր օրենքը հին գրականությունը թողնում է հին ուղղագրությամբ, ուրեմն մարդիկ պիտի երկու ուղղագրություն սովորեն: Սա ոչ թե թեթևացնում է ուսուցումը, այլ՝ դժվարացնում:

3. Ծաղկաբաղ կամ քաղվածքներ կատարելի: դարձյալ պիտի երկու ուղղագրություն հանգես գա: Իսկ եթե նոր ուղղագրությամբ գրեինք, յիմն պիտի դառնար տան հիմը, յամ-ը սոխի կամ ժաստորի համ պիտի տար, յայր-ը քարայրից պիտի դառնար հայր, յեղով-ը (շրջել, փոխել) պիտի դառնար ճեղով (թափել), յուս-ն (յսցի) պիտի դառնար լվացի և այլն: Եթե գրեինք «համը լեզու», նյութանին պիտի հարցնեինք, թե ծանրախո՞ս (յամը), թե՞ մունջ (համը) է

նշանակում, հարկ-ը տո՞ւրքն է, թե՞ շենքի հարկը (յարկ), հոր-ը ջրհո՞րն է, թե՞ հայր-ը, այդպես էլ հաշող—յաջող, հետ—յետ և այլ բառեր:

4. Աշխարհաբարը դրաբարի դատրիկն է և կարտտուց է ու պիտի կարտտի նրա մայրական գորդորանքին: Ուղղագրությունը մեղ պիտի անխղիչ պահե դրաբարի հետ:

5. Օր-աուր բառը հասկանալի է, քանի որ ա-ի փոխարեն է օ-ն, իսկ որ-ալուր-ը անհասկանալի է: Չի կարելի օտար անունների օ-ն օ տառով տառադարձել, որովհետև օ-ն ա-ի տեղն է գրվում:

6. Նրևանյան ուղղագրությունը շեշելով է-ն, վերացնում է նաև յոթ թվահամարի արտահայտության այդ միջոցը: Խանգարվում է կապը հնի հետ, անձանաչելի են դառնում հին բառերը: Այնուհետև Հաջունին շարադրում է ե, է, օ, ա, վ, ու, ւ, յ տառերի ավանդական ուղղագրության կանոնը: Մեր այս քաղաքական հզնամածի մեջ, գրում է վերջում, որ միությունն այնքան ստիպողական է, որ Հայաստանը պետք ունի յուր պաշտպանները բարոյապես կապելու իրեն հետ, ոչ թե ցրտացնելու և հեռացնելու, նոր ուղղագրությունը խոհեմություն չի կարելի համարել:

Մենք տեսանք, թե ինչպիսի արագությամբ ու հոանդով նախկին լուսժողովուրդը Պ. Մակինցյանը ըստ Արեղյանի նախագծի անցկացրեց ուղղագրության բարեփոխումները՝ հաշվի շառնելով իր իսկ կազմած հանձնաժողովի կարծիքը: Ընգամենը երկու տարի հետո պարզվում է, որ Մակինցյանը նպատակ է ունեցել նոր ուղղագրությամբ արտասանությունը գրությունը մոտեցնելով՝ մեր դարավոր այբուբենի փոխարեն անցկացնել լատինատառ այբուբենը: 1924 թ. նոյեմբերի 29-ի «Заря Востока»-ում (№ 140) լույս է տեսնում Մակինցյանի «0 патинском прифте» հոդվածը, որը Մտ. Մալխասյանցը թարգմանում և հրատարակում է «Մարտակոչ»-ի 1924 թ. դեկտեմբերի համարում, նրա հետևանք իր պատասխան հոդվածը՝ «Լեզվային հարցեր» խորագրով: Ի՞նչ է պրոպոզիցիան իր այդ ծայրահեղ ձևափոխ հոդվածում: 1919 թ. օգոստոսի կեսերին Մոսկվայում կայացած խորհրդակցությունում՝ նվիրված Ռուսաստանի ոչ ռուս ժողովուրդների կրթության ու լուսավորության հարցերին, Մակինցյանը դեկտեմբեր է «կատինական միատեսակ այբուբենի մասին ՌՍՖՍՌ-ի ժողովուրդների համար» թեմայով: «Жизни населения»-ի № 40-ում գրված պատասխանում ասված է, թե դեկտեմբերի առաջ քաշած հարցն արդեն արծարծվել է, մտածում են կիրքիլիցայից անցնել լատինական գրին: Ազգային փոքրամասնու-

թյունների լուսավորության բաժինը նույնպես այդ հարցը քննում է, Նիժն բոլոր ազգութայինների համար ստեղծվի միասնական այբուբեն, ասում է Մակինցյանը, այբուբենն շունեցող ժողովուրդներն էլ կարող են օգտվել, գրավոր խոսք ունենալ: Ռուսաստանում շատ ազգութայիններ կան, որ միմյանց չհասնում: Եթե այբուբենը միասնական լինի, կհեշտանա նրանց հաղորդակցությունը: Մակինցյանը տրտնջում է, որ հինգ տարի իր զեկուցումից անցել է, բայց ուղղորդվելու դարձնող չկա: Նա, տարբերություն լսեմանը լուրջ դարավոր մշակույթ ունեցող հայ ժողովուրդի և շերքեզների, կիրդիզների ու ասիականների միջև, գրում է, թե նրանք ընդունել են լատինական այբուբենը, մենք էլ պիտի ընդունենք: 1921 թ. Ռուս. հեռ. ընկ. գործերի վարիչ Բողդատիևը (մի ժամանակ գրվում էր Բաղդատյան) մշակել է տառեր, որոնք ձուլվել են և նրանցով մի երկու հոդված էլ տպվել է պանախան լեզուներով: Դրանք հայերենին հարմարեցրած լատինական տառեր էին, համապատասխանեցրած կովկասյան այլ լեզուների հետ: Ահա այդ այբուբենը՝

Aa —	Ćć —	Gg —	Jj —	Mm —	Pp —	Tt —
Bb —	Dd —	Ĝĝ —	Kk —	Nn —	Rr —	Ťť —
Cc —	Ee —	Hh —	Kk —	Oo —	Ss —	Ťť —
Çç —	Ff —	ll —	Aa —	Pp —	Šš —	Üü —
Vv —	Xx —	Yy —	Zz —	Žž —	Zz —	lev —
			la —	—	—	—

Կա նաև Մառի այբուբենը գիտական տառադարձությամբ: Բուլղարիայում, տեղեկացնում է Մակինցյանը, հրատարակվում էր մի հայերեն լրագիր լատին տառերով, հարկավոր է մի հեղինակավոր մարմին, որ այդ այբուբենը պարտադիր դարձնի բոլորին: Որևորված Մառի խոսքերով, թե «պետք էր ավելի արմատապես կատարել ռեֆորմը, այն ուղղությամբ, որ բոլոր կովկասյան աղյուսները միանային մի այբուբենի հիման վրա», Մակինցյանը ներկայացնում է լատինական այբուբենի առավելությունները, իբրև դարավոր հնություն ունեցող ու տարածված: Քիչ տառեր կան հատուկ միայն մի լեզվի. գրագետ դառնալու համար կմնա սովորել միայն այդ եզակի տառերը: Իր նպատակին հասնելու համար Մակինցյանը պահանջում է փոխել հայերենի նաև բաղաձայնական համակարգը: Եթե ուղղագրության բարեփոխումը այդքան մասնակի պիտի լինի, պետք չէր: Եվ նախկին լուսժողովուրդը, որ իր նախաձեռնությամբ իրականացրեց 1922 թվականի ուղղագրական բարեփոխումը, հարձակվում է Մ. Արեղյանի վրա: Եթե Արեղյանի ռե-

ֆորմը հավիտյան է ընդունվել, դա բացարձակ և տաղիմություն է: Արեղյանը մեզ է տանում XIII դարը: «Անձնագրես ես ոչ մի դեպքում ոչ միայն ձայն չէի տա ի նպատակ այդ ռեֆորմին, այլև չէի առաջարկի ժող. կոմ. խորհրդի քննության, և թե նրան չհամարեի մի արտիճան՝ դեպի լատինական գիրը անցնելու գործը դյուրացնելու համար», — հայտարարում է նա: Եթե ռեֆորմը պիտի թերի մնա, ավելի լավ էր հինը մնար, որ առանց Արեղյանի էլ որոշ լավով կարգավորվել էր: Մեր խորհրդային հրատարակությունները, ասում է նա, չեն տարածվում, ուղղագրության պատճառով արևմտահայությունը չի կարգում մեր գրականությունը: Այս հանգամանքը հարկադրում է մեջտեղից վերացնելու նոր ուղղագրությունը: Ենթադրում ենք, որ շատերը արդեն երկու և կես տարի միմիայն այս նոր ուղղագրությամբ կարգավորված հանդերձ՝ չեն կարողացել նրան ընտելանալ: Այստեղից էլ եզրակացնում է. «Որքան շուտ մենք արխիվը նետենք «Մահակ-Մեսրոպյան» անկյունավոր, տեղի և աչքի համար վնասակար այբուբենը՝ այնքան շուտ կազատվենք Արեղյանի ուղղագրությունից»: Առաջարկում է հանձնաժողով կազմել Մառի նախագահությամբ, որ կազմի նոր այբուբեն: Հայտատու և լատինատառ այբուբենները համասարապես գործածության տեղի, որը կտարածվի, այն էլ ընդունելու վերջում էլ ավելացնում է, թե ինքը չի կասկածում, որ կարճ ժամանակում լատինատառը կտարածվի: Հայերեն բառերի պատկերը աղավաղվելու մասին մտածող Մակինցյանն առաջարկում է այդ բառերը գրել լատինական տառերով, որ պատկերը պահպանվի: Լավ է ասել Հացունին Մակինցյանին. «Ոչ, պարտն, ձեր կարծիքը կը յարմարի արխիվին, բայց Մեսրոբեան գիրը՝ ոչ. և ձեր անկիւնատար ակնոցներն են, որ այդպես կը ցույցեն Հացեկացուն գիտոր»²⁹, Հիշենք, որ լատինատառ այբուբենի դադարը գալիս է դեռ 1912 թվականի «Ընկեր»-ի էջերից:

Արեղյանն իր «Ուղղագրության ռեֆորմը» տպագրության է հանձնած եղել, երբ տպագրվել է Մակինցյանի սույն հոդվածը, ուստի գրքի վերջում, իբրև նա գրություն, մի էլ է ավելացրել այդ հոդվածի առթիվ, ուր գրում է. «Այժմ ե միայն հասկանալի դառնում, թե ինչու՞ նա (Պ. Մակինցյանը—Ս. Գ.) ուղղագրության ռեֆորմի խնդիրն ամբողջական ձևով ներկայացրեց Կոմիսարների Խորհրդին: Նա այդպես վարվել է, վորովհետև լավ գիտե և իր այդ հոդվածի մեջ մի քանի անգամ զանազան ձևերով պարզում է, վոր «հայերենի ուղղագրության կատարյալ ռեֆորմից հետո» միայն հնարավոր կլինի լատիններենին անցնելը. ուստի և նա առաջարկում

է բազաձայն տառերի ուղղագրութիւնն եւ փոխել է արտասանութեան համեմատ դարձնել, «մինչեւ ծայրը տանել ունիւրմը»: Եւս ուշ է Աբեղյանն իմացել Մակինցյանի նպատակը, այլ կերպ դժվար թէ ուրախ լինէր, որ Մակինցյանը հանձնաժողովի կարծիքը հաշի շատով և իր նախագիծը լրիվ ու միանգամից ներկայացրեց ժողկոմիտոյին՝ հաստատութեան: Եվ դժվար թէ նրա այդ քայլի մասին գրեր. «Յեւ այժմ տեսնում եմ, վեր իրավունքը լուս. ժող. կոմի-կոզմն Լը, վերոպէսեւ 1500 տարվա հետաքննութեան ունեցող մի ուղղագրութեան փոխելու համար՝ միշտ չի լինի հարմար ժամանակ, իսկ 1922 թվականը հենց այդպիսի հազվագեայ վայրկյաններից մեկն էր» (անդ էջ 6): Աբեղյանն ավստոսում է, որ Մակինցյանն այն ժամանակ իր նպատակը սպարզ չի ասել: «Ես կարծում եմ,— գրում է նա այդ ես գրութեան մեջ,— վեր ավելի լավ կլինէր, որքան նախկին լուս-ժողովում ուղղագրութեան դեկրետի սկզբում հենց այն գրած լինէր, ինչ որ ինքն իբրև գաղտնի նպատակ ունեցել և, այսինքն լատինի-րեն տառին անցնելու նպատակը: Այն ժամանակ զուցե ժող. կոմի-տարներից մեկը կամ մյուսը, գուցե և մեծամասնութիւնը ձայն չէր տա ուղղագրութեան ունիւրմին, և գուցե չէր լինիլ այն զվարճալի դրոպիւտներ, մորի մեջ ընկած մէ բնկ. Պ. Մ.-ը, գրեւոր, վեր եթի լատիններն տառերը չընդունվին, այն ժամանակ «ավելի լավ է հին ուղղագրութեանն անցնել», վերոպէսեւ արտասահմանի հայերը Միրիայում, Կ. Պոլսում և այլուր չեն անցել նոր ուղղագրութեանը և նույնիսկ հակառակ են դրան» (էջ 113): Ուղղագրական հանձնաժողովը գրել է, որ արտասահմանյան հայութիւնը դեմ կլինի նոր ուղղագրութեանը, ինքը նույնպէս հիշեցրել է, որ մի 25—30 տարի պետք է, որ նորը տարածվի, իսկ արեւմտահայութեան մեջ ավելի ուշ կտարածվի, բայց Մակինցյանը դրան բանի տեղ չի գրել, ավելացնում է Աբեղյանը:

Ինչպես ասվեց, Մալխասյանցը Մակինցյանի սույն հոգւածի հետ գնտնդել է նաև իր հոգւածը՝ «Լեզվային հարցեր» խորագրով: Հոգւածագիրը զարմանում է, որ Մակինցյանը արդի տառերի ձևը Մաշտոցին է վերագրում և այն համարում անկյունաքար, տղի ու աչքերի համար վնասակար: Մի՞թէ նա չգիտի, որ այսօրվա տառա-ձևերը միջնագրից են, որ Մեսրոպի տառերը իրենց գեղեցկու-թյամբ կարող են մրցել ցանկացած արդի այբուբենի հետ, բայց հիմա այդ տառաձևերը չենք օգտագործում, այլ՝ միջնագրի դե-րը:

Չներգններն ու ամիսազները գիր շունեին, դիմեցին լատինե-րին, թուրքերի (աղբրեջանցիների) համար էլ արաբական այբու-

րենք լի էր պակասութիւններով: Այլ է հայերի ու վրացիների հար-ցը, նրանց այբուբենները լիակատար են ու պատշաճ, հեշտ յու-րացվող և ոչ մի ներքին անհրաժեշտութեան չկա դրանք վերացնել: Մերն ավելի հարուստ է, քան լատինական կարկատած այբուբենը: Միասնական այբուբենի դուրսում այն օգտագործող ազգերը միան-գամից անգրագետ կդառնան: Ավելի լավ է օտար այբուբենը սո-վորել և նրանց ժառանգութեանը կարգալ, Լատինատառ այբուբե-նին անցնելը մի կատարելալ աղետ է: Միայն է Մակինցյանը, թէ լատինատառ գիրը կատարելալ է: Կան տառեր, որ իրարից դժ-վար են տարբերվում (C—G, I—j): Մի գիրը մեկից ավել հնչում ունի: Թրինակ՝ c-ն կարողացվում է կ և g (corpus > փորփոս, cedo > ցեղո), l-ն՝ տ և g (tabula > տարուլա, puntilio > պուն-տիլոս, Venecia > վենետիկ), s = u և z (sanctus > սանկտոս, rosa > ռոզա) և այլն: Ավելի փառնաշփոթ է լատինական այ-բուբենը օտար լեզուներում: Z-ն արտասանվում է՝ q, g, ժ, g-ն՝ q, ժ, ջ, c-ն՝ կ, g, u և այլն: Schröder անունը կարգացվում է Շրեդեր, Շրջոդիս, Սքրոդիս, schkola-ն՝ սխոլա, աքոլա, շկոլա և այլն: Իսկ լա՞վ է, որ Եվրոպական ազգերից շատերը լատի-նական այբուբենն են օգտագործում: Ահա թէ ինչ է գրում Մարկ-վարտն այդ մասին. «մինչև այսօր ալ արեւմտյան, եվրոպական ը-լոր լեզուներու վրա, սպանիերենն ու իտալերենը դուրս թողնով, հոմեական գրին անեծքը ու իրանց մասնավոր պետքերուն համա-պատասխանող սեփական գրի և ուղղագրութեան մը պակասը կը ծանրանա տակավին ուժգին»³⁰,

«Հայերենն ունի բազմաթիվ ու դժվարին հնչյուններ, որոնց ուշ մի այբուբեն չէր կարող արտահայտել»,— գրում է Մարկվարտը նույն տեղում: Հայերենն ունի 39 գիր, լատինը՝ 25, որոնցից միայն 22-ն են պիտանի: Հրոջմանի, Մառի և մյուսների այբուբենները գիտական տառագրութեան համար են և ոչ թէ մասսայական գործածման: Մառը 12 տառով է արտահայտում հայերենի այբու-բենը, Մեյին՝ 11, Հրոջմանը՝ 14, մեր մնացած հնչյունները նրանք արտահայտում են հրջալ տառերին զանազան նշաններ ավելաց-նելով: Այդ այբուբենները գիտնականների համար են, ոչ մասսա-յական ընթերցողների ու գրողների համար, քանի որ դրանք դժվար են գրվում, տպագրվում և ընթերցվում: Աթն լատինատառ այբու-բենը, վերջացնում է իր խոսքը Մալխասյանցը, անսրուպյան այբու-բենի հետ մրցութեան մեջ դնենք՝ երկուսն էլ գործածելով, անշուշտ լատինատառը դուրս կլինի, կամ նա միայն տպագրութեան ծախ-ալ և մեկ էլ մի երկու ըլարով լատինատառ հայերեն գրքույկ:

Մակինցյանին քննադատեց նաև Վ. Հացոսեհին «Բաղմալեպիս»-ի 1925 թ. № 2-ի և № 3-ի էջերում: Քաղաքակիրթ ազգերը, ասում է նա, իրենց սեփական պրով ու գրականությունը են ցույց տալիս իրենց քաղաքակրթության վաղեմիությունը, հայի ձեռքից ինչո՞ւ խլել այդ փառքը: Եթե հայ գիրը չպիտի սովորեցնենք, ուրեմն ասպանաքար դնենք անոր վրա: Երևի մենք վերջինն ենք, որ Հացեկացու գրով ենք պրելու: Մեզ մնում է գիտել մեր ուղղագրության հուղարկավորությունը և սպասել վաղվան, երբ կհուղարկավորի հայոց լեզուն և նրանից կմնան միայն «հայոց լեզու» բառերը: Իհարկե, Հացոսեհին շտապում էր հուսահատվել: Հայոց լեզուն լինթացավ ձախություն մեջ ընկած առանձին մարդկանց դժած ուղիով: Այսօր էլ նա գարդանում է ու հարստանում:

Սեդրակ Քառայանի, Պողոս Մակինցյանի, Բոգրատիևի ըստ էության հակահայկական, հակաժողովրդական առաջարկները լատինատառ ալբուրենի մասին ժողովուրդը լինդունեց, և մնացին իրրև ձայն բարբառո հանապատի:

Հայերենի ուղղագրության պատմությունը հար և նման է եվրոպական շատ լեզուների (հունարեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուղղագրության պատմությանը: Մինչև Յակով Գրիմմը Գերմանիայում ընդհանուր ուղղագրություն կար, բայց այդ ուղղագրության մեջ սխալ և անհետևողական բաներ տեսնելով՝ Գրիմմը փոփոխության առաջարկ մտցրեց նրանում, գոթական տառերը փոխարինեց լատինական տառերով: Գերմանացիները չեն թաքցնում, որ գերմաներեն գրականության մեջ դժվար է դառնել երկու գիրը, որ ուղղագրությամբ իրար նման լինեն (H. Foor, 189)¹: 16-րդ դարում գրում էին vundt, Thoch, Jhedenn, որ հետո դարձան und, Tuch, jeden: 19-րդ դարում verlohren դարձավ verloren, Bluhme > Blume, Wohl > Wol, Seegen > Segen, Schaaf > Schaf, loos > los և այլն: Բայց սրանք մասնակի փոփոխություններ էին: Գրիմմի աշակերտները պահանջում էին որեւ ըստ արտասանության, կատարել lügen > liegen, betrügen > betriegen, Schöpfer > Schepfer, erschöpfer > erschepfer և այլ փոփոխությունները: Նշվածները ihm, ihn բառերը գրում էր im, in ձևով:

70—80-ական թվականներին գերմաներենում իշխում էր ուղղագրական երկու ուղղություն՝ ավանդական և հնչյունային: Ուղղագրության հարցը քննվում է ուսուցչական խորհրդակցություններում, մամուլում, առանձին տեղական իշխանություններ հրապարակում են ուղղագրական կանոններ ուսումնարաններ և հատուկ դպրոցների համար: Բայց այդ բոլորը գերմաներենի ուղղագրությունը միասնական չեն դարձնում: Փորձ է արվում պատմական և

հնչյունային ուղղագրությունը հարեցնել, ընթանալ միջին դժով: 1876 թ. նորից էլ շարժում սկսվում հանուն միասնական ուղղագրության: Պրուսիայի լուսավորության մինիստրը ստեղծում է հատուկ հանձնաժողով, ուր հրավիրվում է նաև պրոֆ. Ռաուսերը: Ռաուսերի նախագիծը շանցավ: Հանձնաժողովը իրենը կազմեց, որը հաստատեց մինիստրը և հրատարակեց: Բայց սա էլ ուժ չունեցավ գործածվելու, գրվեցին բանավեճային նոր գրքեր, նույնիսկ սկսեց լույս տեսնել «Zeltschrift für orthographie» հանդեսը:

Նույնպիսի բանավեճերով ու պայքարով է ընթացել նաև անգլերենի ուղղագրության պատմությունը: Անգլերենի ուղղագրությունը բառի բուն իմաստով արտահան է: Հնագույն գրավոր նշանները դեռ ուժի մեջ են և կարծես չեն հակասում բանավոր խոսքին: Բառերի մեծ մասի գծադրական պատկերը պայմանական արտահայտություն է բանավոր արտաբերման, նույնիսկ անկախ՝ բառի առանձին տարրերից: Դա բառային և ոչ թե հնչյունային ուղղագրություն է: Նրանք գրում են Gloucester, Brougham, Colonel, բայց կարդում են Gloster, Brum, Kœniel, որից երևում է, որ ոչ թե խոսքի հնչյուններն են արտահայտում գրավոր, այլ բառի գրաֆիկական պատկերն են տալիս: Նույն հնչյունը դանադան տարբեր է արտահայտում, չորաքանչևոր ձայնավոր, երբեմն և բաղաձայն, ունի զանազան հնչումներ, չկա մի օրենք, որ որտեղ, թե չորաքանչևոր դեպքում տվյալ հնչյունը ինչ տառով պիտի արտահայտել: Օրինակ՝ snow, low կարդացվում են sno, lo, իսկ bow, low > bou, lou, bear-ը արտասանվում է ber, իսկ hear-ը՝ hir:

Քիչ փորձեր չեն եղել գրությունն այս վիճակից հանելու համար: 1843 թ. Բիրմինգհամում մի ինչ-որ Հիլ (Hill) գրեց հսակայական կապիտալ (phonetic found) և հիմնեց պարոց: Այդ Բիրմինգհամում ամեն տարի հնչյունային տոն է լինում: Գործում է հնչյունաբանական ամսագիր: Սկսում են մշակել անգլերենի ուղղագրությունը (Իսահակ Պիտման, էլիս), լույս են տեսնում հնչյունային ուղղագրությամբ գրքեր: 1862 թ. վեց ամսագիր էր լույս տեսնում հնչյունային ուղղագրությամբ: է. Ջոնսը գոյություն ունեցող տառերը պահելով՝ աշխատում էր նրանց տալ հնչյունային որոշակի արժեք, նշանակություն, Առաջարկը քննվում է Լիվերպուլում: Բայց նրա դեմ ենում է էլիսը և պնդում, որ մասնակի բարեփոխումը օգուտ չի տա, պիտի արձատարական փոփոխություն կատարել: Պիտի վերականգնել նախնիների, երկու վարդերի պատերազմից առաջ եղած հնչյունային ուղղագրությունը: Ոմանք էլ արտասանական հիմունքի հետ հաշվի էին առնում նաև ստուգա-

բանականը: Բայց այդ բոլոր առաջարկները շանցան: Ժողովրդական սովորույթի ուժը հաղթեց: Իր բոլոր թերություններով հանդերձ՝ անդլերենի ուղղագրությունը միասնական է՝ սմբողջ Անգլիայում և սլարոնադիր բոլոր անգլիացիների համար, զրանում է նրա սուժը և մեծագույն առավելությունը:

Ֆրանսերենի գրավորում ևս հետևողականություն չկա, հակասություն կա և միևնույն տառի զանազան արտասանություն: Բայց դա ոչ թե նախնիների արտասանությունը պահպանելուց է, այլ գիտնականների միջամտությունից: Ֆրանսերենի ուղղագրությունը զարդացել է մեծ մասամբ արհեստական ճանապարհով: Նրա հիմքում ոչ թե պատմական, այլ ստուգաբանական սկզբունքն է ընկած, թեև ոչ միշտ հետևողական ու ճիշտ: Մինչև 13-րդ դարը ֆրանսերենում հնչյունային ուղղագրությունն էր իշխում: Հետագայում բարանազիր կիտրեն իր բարձրանի նախաբանում պատմ է, թե ֆրանսիացիների մեջ գրավորում ու արտասանությունը ժողովրդական պայքարող ուժեր են իրար դեմ: Թեև 17-րդ դարի կեսերին Պոր Ռոյալը առաջարկեց, որ յուրաքանչյուր տառանիշ նշանակի մի հնչյուն, շարտասանվող տառ չպիտի լինի, և յուրաքանչյուր հնչյուն պիտի մի տառապատկեր ունենա, միևնույն հնչյունը մեկից ավելի տառապատկեր չպիտի ունենա, բայց ստուգաբանական ուղղագրությունն ավելի արմատավորվեց 1694 թ., երբ վերահրատարակվեց 1635 թ. հրատարակված ակադեմիայի բարձրանը, որը առավելությունը տալիս էր հունա-լատինական գրավորի ձևերին առաջնություն տվող ուղղագրությունը: Ուղղագրական հանձնաժողովի անդամներ Կորնելյը և Բոսսյունը, որոնք առաջարկում էին ուղղագրության արմատական փոփոխություն, մնացին փոքրամասնություն: 1835 թ. այդ բարձրանի հրատարակության ժամանակ ֆրանսիական ակադեմիան ընդունեց Վոլտերի ուղղագրությունը՝ *oi* տառակապակցության փոխարեն *ai* français, avais և նրան բառերում: Նրա մյուս առաջարկները ակադեմիան չընդունեց: Առանելի է, որ ստար բառերը գրում են ըստ իրենց հնչման: *l'ologie* գրում էր *philosofe*—*filosofe*, *encyclopedie*, *tipografe*, *teologie*, *metaislique*, *historiografe* *bibliotegue* և այլն³²: Հունական բառերի այս ուղղագրությունը գալիս է 16-րդ դարից: Գիտնականները պնդում էին, որ եթե հունական բառը երկար ժամանակ ապրում է ֆրանսերենում, պիտի գրվի ֆրանսերեն: Հնությունը պիտի հարգել, բայց յուրաքանչյուր լեզու պիտի իր տեղը լինի: Ֆրանսիական ակադեմիան հարգեց այս սկզբունքը, բայց միայն որոշ բառերում *ph*-ի փոխարեն գրեց *f*, *lh*-ի փոխարեն՝ *l*, Շատ

բառեր նույն արտասանությունն ունեն և միայն գրավորով են տարբերվում, ինչպես և տարբեր քերականական իմաստները: Ֆրանսիացի գիտնականները (Բերնար Ժյուզե) գրում են, թե ով տառարկում է հնչյունային ուղղագրություն, նա ֆրանսերեն չգիտի և կարծում է, թե ֆրանսերենը մնացել է իր նախնի մակարդակին: Հնչյունային գրություն կարող են ունենալ չիրթված, գրականություն չունեցող ժողովուրդները: Հնարավոր չէ շուտ տալ գլխի վրա ֆրանսիական այդ խոսքը, կարելի չէրթան այն անցյալի հետ, որ ստեղծել է ազդային ուժին, ազգը: Ֆրանսերենի ուղղագրությունը ղեկավարում է ակադեմիան և ոչ ոք չի համարձակվում զուրս գալ նրա սահմանած օրենքներից: Նույնիսկ բարձրանադիրները, որ ընդհատում են այդ օրենքները, բարձրաններում չեն շեղվում նրանցից: Պակասավոր, բայց ողջ ազգի համար միասնական ու պարտադիր ուղղագրությունն ավելի լավ է, քան ճիշտ ու ամբողջական, բայց ազգի միայն առանձին հասովածների կողմից ընդունված ուղղագրությունը, ասում է Ռաուսները: Անգլերենի նման ֆրանսերենի ուժն էլ ուղղագրության, միասնական լինելու մեջ է:

Ավելի լավ միևնույն չի եղել ռուսերենի ուղղագրությունը: Տրեդյակովսկին ձգտում էր ուղղագրությունը փոխել հնչյունային սկզբունքով, իսկ Լոմոնոսովը դեմ էր, պահանջում էր հաշվի առնել նաև ափսոսանքի գրությունը: 1748 թ. Տրեդյակովսկին հրատարակեց «Разговоръ между чужестраннымъ человеком і россияниномъ объ орфографіи старинной і новой» գիրքը, որ, ինչպես ասում ենք, ստաներն *и*-ի փոխարեն սլավոնործում է լատինական *i*-ն, այգպես էլ *э*, *и*, *о*, *э* տառերի փոխարեն սլավոնործում է *e*, *и*, *о*, *э* տառերը: Դրանով կատարում էր Պետրոս Բ-ի կամքը, ստաներնի այբուբենը մոտեցնում էր լատինականին: «Исать по звонамъ» սկզբունքով գրում էր, *порятку*, *свицкой*, *обраси*, *извисной*, *кресьяне*, *скупино*, *куишка* և այլն: Սրան դեմ էր Լոմոնոսովը: Եվ զարդաների մի մասում Լոմոնոսովի գրքերով էին սովորում, մյուսում տրեդյակովսկան ուղղագրությունն էր տարածվում: Շատերը (Դերժավին, Համբուլդ) պահանջում էին այբուբենից հանել ավելորդ տառերը, հատկապես *ъ*-ն: Զուտադիպեց 1871 թ. պահանջեց հանել այբուբենից *ъ*, *ь*, *п*, *и*, *н*, *и*, *э*, *ю*, *ж*, *и*, *ч*, *ш*, *щ*, *ѳ* տառերը, մտցնել լատինական *h*-ն *и* *h*-ն, գրել *Гомер*, ոչ՝ *Гомер*, *Юлка*, *майо*, *поют*, *я*, *ю* տառերը փոխարինել *ja*, *ju* կապակցություններով: Նա գրում է *jakop*, *cto]anka*, *predjavlenie*, *ob]avit*, *raz]acnit*, *lin]a*, *per]a* և այլն: Լատինական այբուբենին անցնելու միտքը Պետրոս Բ-ից

անցավ Բելիստոն, հետո Կեդինսկոն և Չասչաբլոյին: 1862 թ. Եվեղանի բասարանում սահմանափակվեց Ն-ի կիրառությունը և հանվեց Թ սառը:

Սկանդինավյան ժողովուրդները նույնպես (Գանիա, Եվեղիա, Նորվեգիա) մտածել են ստեղծել միասնական դրավոր խոսք, որովհետև նրանք բունավոր իրար հասկանում են: Ռասկը, նրա աշակերտ Պետերսոնը ձգտեցին կարգավորել այդ հարցը: 1869 թ. Ստոկհոլմում աղղաչին-անտեսական համագումարում առաջարկվեց գրավել նաև ուղղագրության հարցով: Տևողի ունեցյալն ներկայացուցչական ժողովներ, կազմվեցին կոմիտեներ, բայց յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ձգտում էր իր խոսքն անցկացնել, դանիացիները պահանջում էին Ռասկի, Պետերսոնի առաջարկներն իրականացնել, որ մյուսները մերժում էին: Այդպես էլ սալլը տեղից ջլարժվեց:

Եվրոպայում միայն իտալերենի, իսպաներենի և սլոբոտուպլիերենի ուղղագրությունն է առաջնորդվում հնչյունային սկզբունքով:

XVI դարի իտալական քերականները (Լ. Սալվիտաի) դրավոր համաձայնեցրին բանավոր խոսքին, գրեցին մի հնչյունին մի գիր սկզբունքով և այդպես էլ տարածվեց: Իսպանիայում 1492 թ. Անտոնի դե Ներբիխան ընդունեց հնչյունային գրությունը, որանշանները համապատասխանեցրեց հնչյուններին: 1741 թ. ուղղագրությունն իր ձևերն է վերցնում Ֆրիչի V-ի հիմնադրած ակադեմիան: 1815 թ. Մադրիդի ակադեմիան վերջնականապես հաստատում է հնչյունային ուղղագրությունը:

Այսպիսի ճանապարհ է անցել նաև հայերենի ուղղագրությունը: Հասկացվեց 19-րդ դարից սկսում են բարեփոխումների առաջարկություններ անել: Հանդես են գալիս արևմտահայ հատվածում Գր. Օտյանը, Մ. Զեթալը, Ն. Ռոստինյանը, արևելահայ հատվածում՝ Գ. Աղսլյանը, Մ. Մալխասյանցը, Մ. Մանդինյանը, Մ. Թառայանը, Մ. Արեղյանը և ուրիշներ: Բայց, ինչպես եվրոպական շեղումներում, հայերենում էլ մինչև 1922 թվականը մնում էր ավանդական ուղղագրությունը, Աստվածաշնչի, Հայկազյան բառարանի ուղղագրությունը: 1922 թ. խախտվեց համահայկական միասնական ուղղագրությունը և ստացվեց մի ժողովուրդ՝ երկու լեզվով, երկու ուղղագրությամբ: Թառայանը Տրեդյակովսկու, Չասչաբլոյի օրինակով ուզում էր կրճատել Մևսրոպի այբուբենը, բայց ինչպես որ այդ բարենորոգիչ մտավորականները հանգիստեցին ուսու ժողովրդի գիմարությունը, այնպես էլ Թառայանի ա-

առաջարկությունը մնաց իրրև սոսկ պատմական փաստաթուղթ: Այս նույն բախտին արժանացավ նաև նույն այդ Թառայանի, ապա Բոզդատիևի, Մակինցյանի ցանկությունը՝ հայերեն այբուբենի փոխարեն ընդունել տալ լատինատառ այբուբենը: Թառայաններն ու մակինցյանները առաջադեմ երևալու և նորարարության մտքերով տարված՝ չէին տեսնում, որ եթե մի այնպիսի հլուր թաղավոր, ինչպիսին Պետրոս Առաջինն էր, չկարողացավ ժողովրդին դեմ գնալ և լատինատառ այբուբենն ընդունել տալ, ուրեմն այդ դադափարը նուրջ չէր, ուստի և ժողովրդին ձեռնտու չէր:

Հնչյունային ուղղագրությունը այն լավագույնն է, որին ձրգտում են աշխարհի բոլոր լեզուները, իրրև սկզբունք հիանալի է ու անթերի, բայց նա իրականությունը հակադր է և դժվար իրականանալի: Մենք տեսանք, որ Եվրոպայի շատ ազգերում առաջավոր մտավորականությունը ձգտել է ավանդական ուղղագրությունը փոխել հնչյունականի՝ Վոլանբը Ֆրանսիայում, Գրիմմը Գերմանիայում, Ռասկը Դանիայում, Լոմոնոսովը, Պավսկին Ռուսաստանում, Էլլիսը Անգլիայում, բայց նրանք մեծ արդյունքի չեն հասել, առանձին դեպքերում լուծվել է միայն մեկ-երկու տառի գրության հարցը: Պրոֆ. Բրյուկենն տարված էր բոլոր լեզուների համար հնչյունային այբուբեն կազմելու հրազանքով, ասում է Գրոտը, իսկ Բրյուկենին Տաուլինգը հարցնում է՝ ընդունենք, թե հաջողվում է այդ այբուբենն ստեղծել, բայց ի՞նչ միտք ունի մեր ազգային գիրը փոխարինել թեկուզ լավագույն հնչյունային գրով, չէ՞ որ միևնույն է, լեզուներն իրենց հետագա փոփոխությամբ չէին կանգնի այդ գրի վրա: Ինչպիսի՞ քառս, հակասություններ ու շփոթ կառաջանային: Դա Եվրոպայի համար գործնական նշանակություն էլ չէր ունենա:

Իսկապես, եթե յուրաքանչյուր դարի մտավորականություն իր լեզվի գրությունը փոխի իր դարի արտասանության համապատասխան, ի՞նչ կմնա այդ լեզվի նախնական վիճակից, ի՞նչ կժառանգեն սերունդները իրենց նախնիների ստեղծած դարավոր մշակույթից: Քսանկերոզ դարի անգլիացին չէր հասկանա Ենքայի իրեն, ուստի՝ Լոմոնոսովին, Ֆրանսիացին՝ Ռոյալին, հայը՝ Խոբենացուն:

Անհաշտ պայքար պիտի մղել ուղղագրական կամայականությունների դեմ, դրանից է առաջանում դրավոր խոսքի քառքը: Ավելի լավ է ունենալ դժվար, բայց միասնական, ազգի համար պարտադիր ու համընդհանուր ուղղագրություն, քան հեշտ, բայց ոչ ընդհանուր, կամայական Անգլերենի, Ֆրանսերենի, գերմա-

ված, ուր նա դարձյալ շարադրում է իր սկզբունքները, պահանջում ուղղադրական փոփոխություններ. «Լուսավորության տարածման համար ուղղադրության հարցը քաղաքական հարց է», — գրում է նա: «Հայ լեզուի ուղղագրութեան ու հարմարի խնդիրը Հայաստանի հեղափոխական իշխանության հերթական խնդիրներից մինչ է», — կրթկնում է նա լուստոլկոմատի գրածը: Այդ հոդվածի շարունակություն մեջ («Ս. Հ.», 25/2) գրում է, թե նոր ուղղագրությանը ամենից շատ կդիմադրեն արևմտահայերը, բայց նրանք քիչ են. այս խնդրի նկատմամբ արժևք չունի նրանց դիմադրությունը, բավական է, որ Հայաստանի կառավարությունը որոշում կայացնի, իսկույն կտարածվի: 1922 թվականին գրել է «Ռեդեցույցը»՝ ձիշտ կլինե՞ր հակառակը մտածել. Արեդյանն է սկսել ու արագացրել այդ գործը, գուցե և իր երկաթյա տրամաբանությամբ ճնշել հանձնաժողովին:

Հայրապետյանի պատմածի մեջ ոչ մի խոսք չկա Պ. Մակինցյանի մասին, մինչդեռ մենք տեսանք, թե ինչպես այդ փոփոխությունների մասին որոշումը կայացվել է ժամանակի լուստոլկոմ Մակինցյանի գործուն մասնակցության և եռանդուն ջանքերի շնորհիվ: Այն ժամանակ Մուսվեյանը չէր զուտովում, նա չի հարցը ժողովախորհ մտցրել: Եվ վերջապես, Աշոտ Հովհաննիսյանը նույնպես Արեդյանին է համարում այդ նախագծի հեղինակը³³:

Թեև նոր ուղղագրությունը կառավարության ղեկից սարտադիր էր և Միություն մեջ ամենուրեք այդ ուղղագրությամբ էին հրատարակում ու ուսուցանում, նրա նկատմամբ մի ժողովական վերաբերմունքը շարունակվում էր, չէր լռել քննադատությունը: Արտասահմանում լույս են տեսնում հայերենի ուղղագրության մասին նոր դրքեր, որոնք մասսայականացնում և ուսուցանում են ավանդական ուղղագրությունը: Հենց 1923 թ. վենետիկում լույս է տեսնում Արսեն Ղազիկյանի «Հայոց լեզուի ուղղագրութեան դասեր» գիրքը: «Ուղղագրութեան հարցը, — ասված է դրքի սկզբում, — առաջ կարևորություն ստացաւ մանաւանդ Երեւանեան ձեռնարկէն վերջ, որ կը ձգտի ոչ թե ուղղագրութեան դժվարութիւններէ հարթելու, այլ նոր ու նոր խոշոր յարուցանելու եւ ազատազիտ լեզուն իր հիմքերէն, տասնեակից դարեան գրութեան մեր ոճն ու ձևը վերիվայր տապալելով եւ այլանդակելով: Սահակի եւ Մեծորայի հարազատ զաւակները՝ տածելով հանդերձ առ երեսնեան կառաւարութիւնը ամէն համակրանք ու սէր, պիտի զոլուանան անշուշտ այդ ազճատ հեթանոսութենէն» (էջ 48):

Ըստ «Ճայնք»-ի № 1099-ում լույս է տեսնում Թեքեյանի «Հայ պոլշեփեկերէն»³⁴ եւ հ. Արսեն Ղազիկյանի մեղմ մենամտութիւնը»

խորապրով հոգովածը: Այդտեղ Թեքեյանը քննադատում է ոչ միայն նոր ուղղագրութիւնը, այլև նոր հապավումները՝ ֆինեժուզիւմ, դավկում, կենտրոնակում և այլն: Թեքեյանը գրում է, թե ուսահայերը տարօրինակ են: Այս առթիվ Ղազիկյանն ասում է՝ թրքահայերս էլ 50—60 տարի առաջ ունեցել ենք մեր ուսուցանանքը, չերգները, մենք ենք այդ տարօրինակության առաջին օրինակը: Դրանից շատ առաջ ունեցել ենք Դավիթ Անհաղթ, որ ձգտել է մեր լեզուն հոսոմցնել, ունիթորները ձգտել են լատինացնել: Պիտի շարժել, — ասում է Ղազիկյանը, — որ պ. Թեքեյան նորէն իր սիրած փայտէ ձին ասպարէզ հանէր ու արշաւէր ուսահայերուն վրայ» (էջ 63): Թեքեյանի տողերը, թե «Թող խորհրդային Հայաստանը շարունակէ իր կրթածն ընկն հայ ժողովուրդը պահպանելու, լեզուն պահելն ալ մենէ», Ղազիկյանն ավելացնում է. «Թիչ մը շարունակել կը գտնեմ: Խորհրդային Հայաստանի վարիչներուն գործերէն այն տպավորութիւնն ունինք, թէ ան ընդունակ է պահպանելու հայ ժողովուրդը, բայց թէ «Բարձրավանք»-ի միաբանները հաւատք ներշնչեն մեզի, թե ատակ (կարող) են հայ լեզուն անվթար պահելու, ատոր քիչ մը կը տարակուսիմ» (65): Եվ բերում է այդ միաբանների անհարկի օգտագործած օտար բառերի մի ամբողջ ցուցակ՝ իտեալ, ռիթմ, թէքիթ, դիշէ, քոնֆերանս, թրածիթ, ֆրագ, բոմանթիթ, լէքրամ, պիսա, ֆարս, տրամաթիթական, տիալոկ և այլն: Ղազիկյանը, ինչպես տեսնում ենք, լեզվի մաքրության, ավանդական ուղղագրության պահպանության հարցում անկողմնակալ է, անաչաք քննադատ:

1926 թ. Բեյրութում լույս է տեսնում Խ. Պ. Քարտաշյանի «Խորհրդային Հայաստանի նոր ուղղագրությունը» գրքուկը: Այդ գրքուկում քննելով ե—է, յ—ի, ոյ, յ, վ—ու, օ տառերի ուղղագրության հարցը՝ հեղինակը եզրակացնում է, որ 1. Արեդյանի ուղղագրությունը իր այնպիսի ձևով չէր լեզուն դեմ է: Անճանաչելի են դարձել լեզու, վոր, հայտնության, այտորվա, պաշտոնյա, չե, վոլ, յիթե, յիրեվվա, Հակոբյան, Յեղիշե և այլ բառերը: 2. Յ-ի ոսկեդարյան հնչումը կեղծորեն հիմք բռնելով՝ խաթարել է աշխարհաբարը (յիրկու, յիրեվալ, յեվ): 3. Հակոբճուկյան փոխարեն հավելումներ է կատարել (հոգի, վոր, լույս): 4. Անջրպետ է ստեղծել արևմտահայ և արևելահայ լեզուների, այսօրվա ու երեկվա գրական աշխարհաբարների միջև: 5. Մի քայլով լայնացրել է աշխարհաբարի ու գրաբարի միջև եղած անջրպետը: 6. Նմանաձայն բառերը բազմապիսի է փոխել, ի վնաս հստակության (համառություն, համար, հաշտ, հոլով, յաջող, յետ, յար, յետին և

այլն), 7. Ե-ն և-ի փոխելով մթաղնվում են դեմ—գիմադրել, բեմ—բեմադրել, գեր—գիրուկ, ծեր—ծերութուն, պետք—պիտանի, պետ—պետութուն, դետ—դիտակ, գետ—գետակ փոփոխությունները, չի իմացվում, թե երբ է Ե-ն Ի-ի փոխվում:

Նոր ուղղագրության գիրքերը գեւ չէին ամրացել, դեւ նա համապարփակ ընդգրկում լուներ, թեև պաշտոնական դրույթուն էր: Ինքը՝ Արեղյանն իր 1925 թ. լույս տեսած հիշյալ գրքի 6-րդ էջում գրում է, թե ասարիակեւովա բնթացքում Հայաստանի Հանրապետության սահմաններում արդեն մեծ մասամբ հաղթահարված են դրապետների հարուցած դժվարությունները: Մինչև այդ տասնամյակի վերջը և այնուհետև էլ այդ դժվարությունները ոչ ամբողջովին են հաղթահարվում, ուստի և տրտուները ու բողոքները կային, ըստ որում ոչ միայն գիտնականներն էին բողոքում, այլև ուսուցչությունը, տպագրական գործի մարդիկ:

Իր «Հուշեր»-ում (էջ 128) Աշ. Հովհաննիսյանը պատմում է, թե «քսանական թվականների կեսերին հասունացել էր Մ. Աբեղյանի նախադրի հիման վրա 1921 (իմա՝ 1922) թվականին տեղի ունեցած հայ ուղղագրական ակֆորմի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը»: Անհրաժեշտ համարվեց մտքերի լայն փոխանակում կազմակերպել Հայաստանի գիտություն և արվեստի ինստիտուտում: Նոր ուղղագրությունից դժգոհությունը բխում էր նրանում տեղ գտած որոշ ծայրահեղություններից՝ ալվերոզ տառերի դարձածություն, այբուբենի փոփոխություն, բառապատկերի զղալի փոփոխություն, որից և՛ անցյալի ժառանգության յուրացման դժվարություններ: Հարկավոր էր ընդհանրապես օգտակար նոր ուղղագրությունն ազատել այդ ծայրահեղություններից:

Լուսավորության ժողկոմի կարգադրությամբ հիշյալ ինստիտուտի պատմական-հասարակական, դիտական և գեղարվեստական բաժինների 1926 թ. հոկտեմբերի 17-ի միացյալ նիստում ընտրվում է ուղղագրության և տառերի ձևերի բարեփոխության հանձնաժողով, հետևյալ կազմով՝ Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Թ. Ավզաղբեկյան, Ա. Բաղախանյան (Լեո), Գ. Կևոնյան, Աս. Խաչատրյան, Ստ. Կանայան, Սիմ. Հակոբյան, Գ. Ղափանցյան, Հ. Մանանդյան, Երվանդադե: Հանձնաժողովը իր աշխատանքն ըսկրսել է 1926 թ. հոկտեմբերի 21-ին, վերջացրել 1927 թ. մարտի 27-ին: Ունեցել է երեսունհինգ նիստ, մանկավարժական, տպագրական և թշկական ենթահանձնաժողովներ: Բոլոր նիստերին նախագահել է Հ. Մանանդյանը, բացի երկուսից, որ Ստ. Կանայանն է նախագահել: Քարտուղարությունը միշտ Գարեգին Լեոն-

յանն է վարել: Առաջին նիստում (21/X 1926 թ.), ուր քննվում են կազմակերպական հարցեր, կարգադրվում է Մ. Աբեղյանի հրատարականը հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու մասին, որ նա դրել է հրավիրաթերթի վրա: Այդ նույն նիստում որոշում են Թիֆլիսից հրավիրել Ստ. Մալխասյանցին իբրև ղեկուցողի և մտցնել նրան հանձնաժողով: Երկրորդ նիստում (26/X 1926 թ.) լսվում է Հր. Աճառյանի ղեկուցումը: Որոշում են դիմում հղել հայ մտավորականությանը, որ իրենց կարծիքներն ուղարկեն հանձնաժողովին: Երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ նիստերում լսվում են Ա. Խաչատրյանի, Գ. Ղափանցյանի և Ստ. Մալխասյանցի ղեկուցումները: Հազորդվում են, որ ստացվել են Հակոբ Հարությունյանի, Լևոն Բոնիսյանի, Մ. Մարտիրոսյանի, Ա. Արագածունու, Մ. Տեր-Սարգսյանի, Լ. Մելիք-Աբամյանի, Ս. Չիթյանի, Ս. Գավթյանի, Հ. Գաղարշյանի, Խ. Քարաշյանի, բժիշկ Ա. Ղազարյանի կարծիքները, որոնք, սակայն, չեն տպագրվել: Որոշվում է կազմել ուղղագրական համադրական տախտակ:

Տասնչորսերորդ նիստում (28/XII 1926 թ.) որոշում են կազմել տառաձևերի համադրական տախտակ, որը հանձնարարվում է Լեոյին, Աճառյանին և Լեոնյանին: 25/I 1927 թ. (18-րդ նիստ) որոշում են ընտրել պրոֆեսորների ղեկուցման հիման վրա կազմված ուղղագրական համադրական տախտակը կարծիքի ուղարկել հետևյալ հայազետներին՝ Ն. Աղոնց, Մ. Գավթ-թեկ, Թորգոմ Գուշակյան (Եպիսկոպոս), Ծղ. Գուրյան (Եպիսկոպոս), Յ. Կարստ, Ն. Մառ, Ա. Մեյլե, Յ. Մարկվարտ, Մակլեր, Լ. Մսերյան, Ա. Չոբանյան, Հ. Յրբելի, Տոմսոն, Բոթթ և Վլեննայի ու Վենետիկի Մխիթարյաններ:

Նախ ժանտիմանք այդ ղեկուցումների բովանդակությանն ու ղեկուցողների սուաջարկներին:

Նշենք այն ընդհանուր դրույթները, որ արտահայտել են նրանք՝ հարցը քննելով դիտական, մանկավարժական և տեխնիկական տեսանկյունից:

Գրությունային սկզբունքը մնում է միակ ճշմարիտն ու գիտականը և պիտի ձգտել, որ այն դեթ բավարար չափով կատարվի: Այս իմաստով ուղղագրության բարեփոխման պահանջն զգում են գրված բոլոր լեզուները, բայց ամենաքաղաքակիրթ ժողովուրդներն էլ չեն կարողանում այդ հարցը լուծել: Դրան խանգարում են երեք հանգամանք. 1. Բառի ընդունված ձևի որե՛նք փոփոխություն քանդում է բառապատկերը, դանդաղեցնում մտապատկերի վերարտադրությունը, խանգարում իմաստի հետ զուգորդություն կազմելուն, այդ պատճառով էլ մարդը լեզվի հարցում պահպանողական

է, դժվար է ընդունում նոր ձևերը: 2. Յուրաքանչյուր գրականու-
թյուն տվյալ ժողովրդի երկար քանքերի նյութական ու բարոյական
աշխատանքի արդյունք է, լեզվական հին ձևերը մեզ կապում են
այդ հարուստ ժառանգության հետ: Փոխել հին ձևերը, աղղազրու-
թյունը, նշանակում է խզել կապերը հին գրականությունից, որը
ցանկալի չէ, ահա թե ինչու ավանդականությունը զորեղ ուժ է: 3.
Յուրաքանչյուր լեզու խոսվածքներ ու բարբառներ ունի, ուստի և՛
ոչ միասնական արտասանություն: Այս դեպքում ժողովրդին միաց-
նողը միասնական գրական լեզուն է՝ իր միասնական ուղղադրու-
թյամբ:

Գրական լեզուն, սակայն, կտրված չէ կենդանի լեզվից, նրա-
նից թարմություն ու կենսունակություն է ստանում: Երբ մեծանում է
արտասանության և գրության տարբերությունը, կարիք է զգացվում
փոխել վերջինիս կանոնները: Ծիշտ է, հին սերնդին դժվար է ավան-
դականից հրաժարվել, բայց կա մի զորեղ ուժ՝ նոր սերնդին դու-
րություն ընծայելու պահանջը, հասարակության շահը: Ուղղագրա-
կան քարեփոխումները, սակայն, շարիտի միանգամից կատարել, չի
կարելի քառայատկերը անճանաչելի դարձնել, ինչպես արել է
Աբեղյանը: Բարեփոխելիս պիտի հաշվի առնել նաև ստուգաբանու-
թյունը, գրության տեխնիկական կողմը: Աբեղյանն իր առաջարկ-
ները փաստարկել է դիտական, մանկավարժական և հնչական տե-
սակետով, ասում է Աճառյանը և հիշեցնում, որ ինքը դեռ իր ձև-
լանքելի բարբառի քննությունը (1898) և «Բարբառագիտություն»
(1911) աշխատություններում բարբառային բնագրերը հրատարա-
կել է հնչական ուղղագրությամբ, միայն թե ինքն օգտագործել է
է, օ ստանդարտ, փակ Աբեղյանը՝ Ե, ո: Աբեղյանի առաջարկներից շա-
տերը, օրինակ, բառավերջի անձայն յ-ն շարժելը, ւ-ի և վահնչյուն
ու-ի փոխարեն վ տառն օդագործելը, վաղուց են իրադրոծվում,
այնպես որ հնչական տեսակետից նրա բարեփոխության մեծ մասն
արդարանում է: Բայց նոր ուղղագրությունը, ասում են Աճառյանը և
մյուսները, այնպես է կազմված, որ հինը մոտացվում է, սա է նրա
ամենախոցելի տեղը, որովհետև դրանով ոչնչացման ենք դատա-
պարտում մեր դարերի գանձ գրականությունը, իսկ հանուն ինչի՞
կատարենք այդ դարհուրելի զոհաբերությունը, հարցնում է Աճառ-
յանը:

Իրենց առաջարկներում զեկուցողները մերժում են բառակղբի
յե (յեբուալ, յեկեւլ), վո (վոխակալ, վորբան) գրությունները, դեմ
են իւ, եա փոխել յու, յա տառակապակցություններով, Ե տառից
հետո յ գրելուն, ինչպես՝ գրելու յեմ, գրելի ձևերում: Առաջարկում

են բառակղբում ye հնչյունակապակցությունն արտահայտել է
տառով, ՎՕ հնչյունակապակցությունը՝ ա (հրազ, ռխակալ, որբան,
երևալ), Ե հնչյունը՝ է տառով, օ հնչյունը՝ օ, բառաբարդման կամ
ածանցման ժամանակ պահպանելով է-ն ու օ-ն (էական, օրական,
ամենաէական, ամենօրեա):

Համաձայն են Վ հնչյունն ամենուրեք արտահայտել Վ տառով,
բառավերջից զցել անձայն յ-ն, ույ հնչող ոյ տառակապակցության
փոխարեն գրել ույ, օտար բառերի բառակապակցի օ-ն արտահայտել օ
տառով: Առաջարկում են միօրինակություն բերել կրկնակի գրու-
թյուն ունեցող բառերը և արեւելահայ ու արեւմտահայ տառադար-
ձությունը:

Մնացած հարցերում կարծիքները տարբերվում են: Հր. Աճառ-
յանն առաջարկում է բարեփոխել նաև բաղաձայնների ուղղագրու-
թյունը: Եթե որևէ բաղաձայն երկու գրական լեզուներում և բար-
բառների մեծ մասում հնչում է մի կերպ, գրվում մի այլ կերպ,
պետք է գրությունը փոխել հնչման համապատասխան, օրինակ,
հաջել, խաբել, ամեն բառերը ամենուրեք արտասանվում են՝ հաջել,
խափել, ամմեն, որեմն պիտի առաքես էլ դրել:

Աս. Խաչատրյանը հակասության մեջ է ընկնում. հակառակ
մյուս երևքի, առաջարկում է, մի կողմից, պահպանել նախնայաց՝
Լի, Էլը, Երեի, մազաբեի, բե, երե, գրեի, գլուե, Վաչել ձևերը,
մյուս կողմից՝ բառակապակցի Ե-ն արտահայտել է տառով: Համաձայն
է բառակապակցի ՎՕ հնչյունակապակցությունն արտահայտել վո տա-
ռակապակցությամբ, ավելին, նրա կարծիքով բառամիջում էլ աչդ-
պես պիտի գրել, օրինակ, վորդաչք, վոլորել, շվոլորեց, կրվոլորի
և այլն, մինչդեռ Աբեղյանն այս դեպքում վ-ն չի գրում (չլորեց,
կլորի): Առաջնությունը տառով բառերի կարճ ձևերին՝ Խաչատրյանն
առաջարկում է օդագործել բարբառային հնչյունափոխ ձե-
վերը՝ ձուե, զեղ, քուր, լուս, բուն, աղբուր, ալուր և այլն, փոխա-
նակ ձին, դիղ, քոյր, լոյս, բոյն, աղբուր, ալուր ձևերի: Համա-
ձայն է Աբեղյանի, Մալխասյանցի առաջարկին՝ չգրել որոշ բառերի
բառակապակցի յ-ն՝ առաջաբան, աջողություն, ավելված, անձեղ, ար-
գո, արձակել, իրավի, ուշարար, ուղարկավոր, ետ, ետո, անդուզն
և այլն: Դրանք այն բառերն են, որոնց յ-ն հավելում է, արմատինը
չէ, ինչպես՝ առաջ-յառաջ, ավելված-յավելված, աջողություն-
յաջողություն և այլն: Այս առաջարկն, իհարկե, հարազատ է աշ-
խարհաբարև ոգուն, բայց ոչ բոլոր բառերն առանց յ-ի տարածվե-
ցին, մեծ մասամբ յ-ն պահեցին, որը մտավորականության ցան-
կությունն էր:

Ղափանցյանն առաջարկում է Լ-ն պահել իւ Էրկհնչյունում (այիւր) և օտարազգի Ա-ն արտահայտելու համար (Յարիս, Ման-խեն), հունարեն Պ-ն արտահայտել ու տառով (ոկիանոս, Ոսաննա, Քոմաս, Յոսեփ), փոխառյալ բառերում պահպանել կրկնակ բաղա-ձայնները, և փակագիրն օգտագործել միայն իբրև շաղկապ, ԼՖև հնարավոր է ու-ի փոխարեն ատեղծել մեկ տառ. օտարազգի Ղ-ն արտահայտել Ղ տառով, դրել Անգլիա, Գալիա, ոչ Անգլիա, Գաղիա: Ղ-ն պահել հին բառերում՝ Պողոս, Ղուկաս, Ղազար:

Մալխասյանցի կարծիքով՝ է-ն պիտի պահել նաև բառամիջում ձայնավորին նախորդող դիրքում (պաշտոնէական), բէր, գէր, գէտ, հէր, մէր, սէր բառերում, տարբերելու համար բեր, դեր, հեր, մեր, սեր բառերից, բառավերջում (բոպէ, բազէ), լայնքում (էիւր, գրէի, գրեցէք): Առաջարկում է իբրև բացառութիւն օտարազգի ՎՕ հրնչյունակապակցութիւնը բառասկզբում առաջարձել Վտ տառակապակցութեամբ (Վուղա, Վուլտեր), մշակել դիտական այբուբեն բարբառները ձիշտ գրի առնելու համար:

Այս տարակարծութիւններին և ոչ մեկը չընդունվեց, որովհետև ծայրահեղ էին: Ընդ որում չէր լինի ձեռք տալ բաղաձայնական համակարգին, այս հարցում Արեղյանն էր իրավացի: Ուղղագրութիւնը խճողող ավելորդ շեղումներ են խաչատրյանի առաջարկները ե—հ հնչյունների, բարբառային ձևերի, ՎՕ հնչյունակապակցութեան դրութեան վերաբերյալ, Ղափանցյանի առաջարկները Լ-ի և Ո-ի, օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնների դրութեան մասին, Մալխասյանցի առաջարկները ե—կ, օտարազգի հնչյունները գրութեան մասին: Գրանք հակասում են հայերենի արտասանութեանը և ավանդական ուղղագրութեանը, ուստի, բնականաբար, չընդունվեցին:

Հանձնաժողովն նիստում հայերենի ուղղագրութեան անցած ուղու մասին հետաքրքիր ղեկուցումով հանդես է եկել այրոֆ. Առաքել Բաբախանյանը (Վեն):

Ահա շորս զեկուցողների առաջարկութիւններին հիման վրա կազմված այն ուղղագրական համադրական աղյուսակը, որ հանձնաժողովի որոշմամբ ուղարկվել է վերը հիշատակված դիտականներին:

ՀԱՄԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ, ՈՐ ԱՐԵՆ ԵՆ ՉՈՐՍ ԶԵՆՈՒՅՈՂՆԵՐԸ

Հր. Անտյան, Աս. Խաչատրյան, Գր. Ղափանցյան և Ստ. Մալխասյանց 344

Առաջարկութիւն	Կողմնակից	Հակառակ
1	2	3
I. Եվրոպական օ հնչումը		
1. Բառասկզբում գրել Լ և ոչ թե Լ, ինչպես՝ էպ, էոթիւն, էդիտեմ, էրադերտ	չորսն էլ	Ահառյան
2. Բառի մեջ ձայնավորից առաջ գրել է և ոչ ել, ինչպես՝ բոպէական, մարդարէութիւն, բէլական	Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան
3. Բառավերջում գրել Լ, ինչպես՝ մարգարէ, պիտէ, հնչէ, Վաչէ	Ահառյան Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան
4. Բառի մեջ բաղաձայնից առաջ միշտ գրել Լ, ինչպես՝ հանդես, հրավեր, սեր, կետ	չորսն էլ	Ահառյան
5. Բայական քերական ժամանակ հին է-երը պահել, ինչպես՝ դիտեր, դիտեր, դիտցէք	Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան
II. Ամբողջական ցօ հնչումը		
6. Բառասկզբում գրել Խ և ոչ թե Խ, ինչպես՝ Լու, երկու, եղ	չորսն էլ	
III. Ամբողջական օ հնչումը		
7. Բառասկզբում գրել օ և ոչ ո, ինչպես՝ օդ, օդուս, օր	չորսն էլ	
8. Բարդութեանց և անանցմանց մեջ պահելով ստորագրական հշտութիւնը, գրել օ կամ ո, ինչպես՝ անօդուս, տնօրինել, միջբովական, անօդորմ, անօգոր	Ղափանցյան Մալխասյանց	Ահառյան Խաչատրյան
9. Բառամիջում գրել միշտ ո, ինչպես՝ Պողոս, կըշիկ, կուլիցիոն, կոտիկրազիա, կարոտ	չորսն էլ	
10. Բառավերջում գրել ո, ինչպես՝ Սաքո, Մկր, այր	չորսն էլ	
IV. Ամբողջական օՅ հնչումը		
11. Բառասկզբում գրել օ լ և ոչ թե ոլ, այսպես՝ օլ, օվկիանոս, օլսգիտ	Ահառյան	Խաչատրյան Մալխասյանց
12. Հունական օմեղա տառը արտահայտել օ տառով բառամիջում և օ տառով բառասկզբում և ոչ թե օվ, ինչպես՝ Քոմաս, Յոսեփ, Սասնա, օկիանոս	Ղափանցյան	Մալխասյանց հնչումները համարում են լեզվական խնդիր

1	2	3
V. Եվրոպական ՎՕ հնչումը		
13. Բառակազմում գրել ո կ ոչ թե վո. ինչպես՝ ոյ-սորդ, որդի, որ, որպիսին, սրբան, որտեղ, ոչ-եաշար	Աճառյան Ղափանցյան Մալխասյանց	Խաչատրյան (տառադար-կուս է վո)
VI. Եվրոպական V հնչումը		
14. Ամեն դեպքում գրել վ կ ոչ թե մերթ ւ, մերթ ու, մերթ վ, ինչպես՝ աճաղ, աղևիվ, հորված, նվաստ	Հորան էլ	
Մանրաբայրյուն.— և փակագրի գործածությունն ընդունել, ինչպես՝ ալեկիթ, տերև, թևե	Աճառյան Խաչատրյան Մալխասյանց	Ղափանցյան (ընդունում է և-ը միայն իրեն շաղ-կաղ)
VII. Եվրոպական uy (ույ) հնչումը		
15. Ամեն դեպքում գրել ույ, ինչպես՝ բույս, լույս, կույթ, և ոչ թե՝ բույս, լույս, կույթ Մանրաբայրյուն.— Ոյ գրությունը կարգաւ միշտ ոյ, ինչպես կոյուղի, գոյական, նոյ, իւյ	Հորան էլ	
VIII. Յ գրի մասին		
16. Յ գիրք բառակազմում վերածել հ-ի, ինչպես՝ հարմար, հղի, հուլիս	Աճառյան Խաչատրյան	Ղափանցյան Մալխասյանց (պահել յ-ն)
17. Բառակազմում զին պցի որտեղ կարելի է, ինչ-պես՝ ետ, առաջ, ևսան	Աճառյան Խաչատրյան Մալխասյանց	Աճառյան (համարում է լիզվական)
18. Բառավերջում անձայն յ շարել, ինչպես՝ վկա ծառա, պաշտոնյա	Հորան էլ	
19. Չգրել ա և ի ձայնավորների միջև, ինչպես՝ վլախի, աղղախն IX. Խ	Խաչատրյան Մալխասյանց	Աճառյան Ղափանցյան
20. Խ գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ մխո-թին, պիւշ, թիւրք, և ոչ թե՝ մխոթյուն, դյուշ, թիւրք X. Ծո	Հորան էլ	
21. Ծո գրությունը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, մեծութեան, պաշտոնեա, Մամիկոնեան XI. Ծո	Հորան էլ	
22. Ծո գրությունը վերածել եո-ի, ինչպես՝ եոթ, արդեաք, և ոչ թե՝ յոթը, արդյոք, կամ՝ եոթը.	Հորան էլ	

1	2	3
արդեօք		
XII. Բաղաձայնների մասին		
23. Եվրոպական բառերի կրկնակ բաղաձայնների ճայերների մեջ պահել, ինչպես՝ կուլեկտիվ, ագ-պարատ, մասսա, կոմմունա	Ղափանցյան	Մալխասյանց Աճառյան Խաչատրյան (համարում են լիզվա-կան)
<p>1927 թ. ապրիլի 5-ին (29-րդ նիստ) հանձնաժողովում կար-դացված է Ա. Մեյլի պատասխանը՝ Ֆրանսերեն գրված, որի թարգ-մանությունը սույազրված է «Տեղեկագրում» (էջ 164—165)։ Մեյլին գրում է, որ սկզբունքային մի հարց պիտի որոշել՝ արդյո՞ք հայերեն գրում են այնպիս, ինչպես երբեք չեն գրել։ Աղղը պիտի հաշվի առ-նի, որ 1500 տարուց ավելի է, ինչ հայերենը գրվում է։ Հաշվի պի-տի առնել ավանդականը՝ հարմարվելով արդի պահանջներին։ Ըն-թերցողը շատ անվարժ ըստի զգա իրեն՝ բարեփոխումից առաջ սույազրված գրքերը կարդալիս։ Այս ընդհանուր ճիշտ գրությունից հե-տո Մեյլին պատասխանում է հարցերին։ 1. Տարակույս չկա, որ բառակազմում պիտի գրել է։ 2. բառամիջում էլ չգրել, այլ՝ է, 3. բանի որ է տառը կա, բառավերջում նույնպես գրել է, ինչը չէ ջնջել ավանդականը, 4. համաձայն է բառամիջում բաղաձայնից առաջ գրել է (կես, հանդես), 5. դեմ է քայլերի մեջ հին է-ն պահել, պիտի հավատարիմ մնալ 4-րդ կետի սկզբունքին, ունենալ ընդհանուր կանոն, 6. բառակազմում գրել է, ոչ՝ յե, ըստ ավանդության, որը շատ սխալ է, 7. կասկած չկա, որ բառակազմում պիտի գրել օ, իսկ բառամիջում՝ օ—ո (8—9), 10. բառավերջում գրել օվ, ոչ՝ ով, 12. հա-մաձայն ընդհանուր կանոնի հոն.սկան օմեզան բառակազմում պի-տի գրել օ, բառամիջում՝ ո, 13. ավանդության համաձայն բառա-սկզբում գրել օ տառը, 14. վ, ւ տառերի տարբերությունը ալընա իմաստ չունի, ես իրերի՝ տերել և ալըն, 15. հնարավոր է ույ գրել, բայց ույ-ը պարզ է, քաղաձայնից առաջ երկիմաստ չէ։ Այս հարցում պրոֆեսորն ուզում է պահպանողական լինել, 16. բա-ռակազմում, անկասկած, պիտի և գրել, յ-ն պահելը շատ վատ կլինի, 17. բառավերջի անձայն յ-ն չգրել, 18. գրել վկա և ալըն, 19. էթե հնչում մենք vkayı, պիտի գրենք վկայի, 20, 21. իւ, եա-ն պահել անփոփոխ, 22. սկզբունքը պահանջում է եօ-ի տեղ գրել</p>		

ևս, 23. ու, խ, ես երկհնչյունները պարզ են, ուստի նոր տառերը բոլորովին ավելորդ են, 24. պետք է հետևել հայկական արտասանությանը, որտեղ պարզ է հնչում, պիտի պարզ բաղաձայն քննել: Վերջում գրում է, թե ինքը ճանաչում է հնչյունային սխալություններ, բայց ավանդականից էլ հեռանում է միայն անհրաժեշտության դեպքում:

Իր պատասխանում Ն. Մառը նախ դժգոհում է, որ հանձնաժողովը աղյուսակը կազմելիս իր հայացքները հաշվի չի առել³⁴, հետո գրում է իր առաջարկները. 1. Եվրոպական օ հնչումը կամ պահել պատմական ուղղագրությանը, կամ միշտ և ամենուրեք գրել Ե տառով, 2. Եվրոպական յօ հնչումը միշտ և ամենուրեք գրել յն տառակապակցությամբ, 3. Եվրոպական օ հնչումը գրել մեկ տառով՝ օ կամ ո, 4. Եվրոպական ՕՄ հնչումը գրել կամ օվ, կամ միայն ով ձևով, 5. Եվրոպական ՎՕ հնչումը գրել կամ միայն վօ, կամ միայն վօ տառակապակցությամբ, 6. Եվրոպական Վ հնչումը միշտ գրել վ տառով, բնավ չսպասել փակադիր և-ը, 7. Եվրոպական ԱՄ (ույ) հնչումը գրել ոյ, ու-ի փոխարեն՝ Վ տառը, 8. բառասկզբի յ-ի փոխարեն գրել Ե, 9. իւ-ն գրել իւ, 10. եա-ն գրել յա, 11. եօ-ն՝ յօ կամ յօ, 12. ատերթնել միատառ գրություն, ու-ի փոխարեն գրել Վ տառը:

Հանձնաժողովի նիստում հայտնվում է, որ վրեժնայի Մխիթարյանները երևք հմուտ միաբաններից կալմել են մասնաժողով, որի որոշումը կուղարկվի տպագրի: Մակայն այդ որոշումը, ըստ երևույթի, տեղ չի հասել: Փարիզից ստացվել է պրոֆ. Նիկ. Աղոնցի նամակը՝ մի ընդարձակ զիտականորեն հիմնավորված պատասխանով, որը, սակայն, ուշացման պատճառով չի տպագրվել: Ոյուրվել է առաջիկայում այն տպագրել Ստ. Կանայանի ղեկուցման հետ, այդ էլ չի արվել:

Այդ պատասխանը հրատարակվում է միայն 1967 թվականին, ուրոֆ. Պ. Հակոբյանի կողմից³⁵, երբ այդ հարցն արդեն վաղուց օրակարգից հանված էր, և «Հանդեսի» խմբագրությունն էլ զգուշացնում է, թե տպագրելով այդ նամակը՝ «նպատակ չունի մերթադարձել հայոց լեզվի ուղղագրության խնդրերը»: Համառոտ ներկայացնենք Աղոնցի սկզբունքներն ու առաջարկները:

Ուղղագրությունը սահմանելիս հաշվի է առնվում հնչական հավատարմությունը, միօրինակությունը և լեզվապատմական կողմը: Նոր գրական լեզվի դայակներից մեկը (բարբառները) չկա, մնացել է մեկը՝ դրաբարբ: Գրական լեզուն, իր ինքնուրույնությունը պահելով հանդերձ, բնավ պետք չունեցավ հրաժարվելու իր պատ-

մական ժառանգությունից և լայնարձակ շահավետից հին լեզուն: Արդի լեզուն կիսով չափ գրաբար դարձավ, և հին շահամարանը դեռ սղառված չէ նոր գրականի համար: Այս նկատառումով էլ խոսելի է այն ամենը, ինչ խտրոց է ծառայում հնի և նորի միջև: «Եթե աշխարհաբար սեփական ուղղագրություն մշակել, որպիսին է ավստրալիական պաշտոնական նորածն ուղղագրությունը, բնական է, որ արտաքուստ պիտի անջատվի իր մորից, պիտի զժվարեցնե հնի ուսուցումը, որով ամենից առաջ և մեծապես վնասելու է աշխարհաբարի շահերին» (ՊԲՀ, 158): Ահա թե ինչու չի կարելի բարեկամ լինել այն ուղղագրական հեղաշրջմանը, որը բոհոություն է: Հայերենը իր հասակակիցներից եզակիներից է, որ կարիք չունի արմատական փոփոխություն: Գրեթե բոլոր բաղաձայնիքի լեզուներում անանցանելի խորհուրատ կա գրի և հնչյունի միջև, բայց պահում են հին գրությունը, որ լեզվին լեզվի պատմական պատկերը, մոտացություն չառն այդ լեզվով ամբողջված դարավոր հարստությունը, անցյալի ճախ դրականությունը: Եթե զորավոր լեզուներն սցգրան զորույ չեն և կառույց են մեռած իրենց անցյալին, մեր տկար և անպաշտպան լեզուն, որի գոյության միակ զորեղ խարիօխը անցյալն է, ավելի իրավունք ունի: Աղոնցի իր ուրախությունն է հայտնում, որ «հանձնաժողովը ջանացել է վերականգնել Մեսրոբյան ուղղագրությունը ընդհանրապես նորամուլ ուղղագրությունների»:

Աղոնցի է 14-րդ կետը: Ապօրինի է այդ աշտուս վեզմախրությունը: Վ-ն քիչ դործածական է, և-ը՝ շատ, ինչու՞ շատ գործածականը փոխարինենք քիչ դործածականով: Անընդունելի է նաև Վ հնչում ունեցող ու-ի փոխարեն վ տառը գրելը: «Անցյալներում ուրիշների թվում ես ես կարելի էի գտնում ձայնավորից նախադասու-ն սղել և-ի»: Այս թեթև նորածնությունն անգամ ժողովրդականություն չդասվ և նախկին ու-ն պահեց իր դիրքը: Ու-երի սղումը և-երի կարծես խճողում է լեզուն նոր բաղաձայնով և վնասում նվազայնությունը: Տարբեր հնչում ունեն հատված կամ հատում և հատում բառերը, մեկը ակամայից պիտի հնչվի հատված, հատում, մյուսը՝ հատում, աս-տում: Եթե ստիպված են թողնել պապեական հատում-ը, հատում-ը դերագասելի է հատված-ից: Վ հնչյունի երևք սրով արտահայտությունը՝ բառասկզբում և ո-ից հետո վ, ձայնավորին նախորդող դիրքում ու, մնացած դեպքերում և, մեկուկես հազարամյակ իրար հետ հաշտ ապրում են: Եթե բուն ցանկություն կա տառերի թիվը կրճատելու, զոհ է պիտի վ-ն լինի, այդ դեպքում բառասկզբում գրելու է և, իսկ ո-ից հետո ու, ինչպես ֆրանսերեն ai:

հոսանքի է համարում ոչ-ը ուչ-ով փոխարինելը: Ավելի հասկա-
նալի կլիներ ուչ-ի փոխարեն ժողովրդական ու-ն գրել՝ լուս>լուս,
բոյս>բուս, գուցե և հավանելի Դժվար է համոզել, որ երեքստո
ուչ-ը երկատո ուչ-ից հաճելի է: Եթև ուչ>ուչ փոփոխությունը նրա
համար է, որ ուչ կապակցությունը միայն օյ կարգացվի, կարիք
չկա, որովհետև ուչ-ով միայն մի բառ կա՝ խոչ-ը: Հայերենը հնուց
խոսապետ է ուչ գրությունից, զենու-յ-ը դրվում է զենոյը և ոչ
զենույը: Ուչ-ը վաղուց է ուչ հնչում, ուրեմն պահենք հին հնչումը:

Հնդունելի է բառավերջի անծայն յ-ն շարելը: Բայց չի եւրելի
բառամիջում ձայնավորների միջև վաղուց յ-ն շարել: Ինչպես՝ սկարելը
է գրել վկարի, Սարոի, վկարից, Սարոից, բայց՝ վկարով, Սարովով:
Այս անհետևողականությունը սխալների գուռ է բուց անում: Հայը
չի հանդուրժում ձայնական հորանջ (hiatus), նա չի կարող երկու
ձայնավոր իրար ետևից արտասանել, նրանց միջև յ է արտասա-
նում, ինչպես որ երկու բաղաձայնի միջև ր է արտասանում: Նշա-
նակում է պիտի հրաժարվել 19-րդ կեսից և գրել վկարի, վկարից,
վկարով:

Եթև հետևողական լինենք, բառավերջի է-ն պիտի փոխարի-
նենք ե-ով, որովհետև է>եյ, վկար-ը դարձնում ենք վկա, մարգա-
րեյ-ն էլ պիտի դարձնենք մարգարե, և վկարի, վկարով ձևերի հե-
տևությունը էլ գրենք մարգարեի, բաղնի: Այս դեպքում էլ հետե-
վողականության համար պիտի գրել բաղն, մարգարե, և ոչ՝ բաղն
եթև գրաբարի սիբելի, սիբելի ձևերի նման գրենք բաղնի, մար-
գարեի, բաղնով, մարգարենով, մարգարեական, բաղնակիր, այդ
դեպքում եո (էո), եա (էա) հնչյունները պիտի շփոթի տեղիք տան,
քանի որ եո = քո, իսկ եա = քա համաձայն 21, 22 կետերի: Միակ
լուծումն է հաշտվել ավանդական գրության հետ:

Գրաբարում բայերի է, է՛ վերջավորությունները ստուգա-
բանական հիմք ունեն՝ սիրելը (նման աղայը) տալիս է սիրէր, սի-
րել-ը (նման աղայ)՝ օիրէ: Աշխարհաբարում այդ հիմքը չկա՝
աղար և ոչ՝ աղայը, ուստի՝ սիրելը և ոչ՝ սիրելը, սիրէ: Որոշակի չի
ասված՝ աղա պիտի գրել, թե՛ աղայ, եթև պիտի աղա գրել, այդ
դեպքում կգրվի սիրե, ոչ՝ սիրէ, հակառակ 3-րդ կետի: Է-երի խըն-
դիրը, մանավանդ վերջահանգ, պետք ունի վերաքննություն:

Որքան հնարավոր է կրճատել է-երի գրությունը, բայց դա այն-
քան կտրուկ շանել, որ շփոթվեն սեր և սեր, գետ և գէտ և նման բա-
ռերը: Մի շարք բառեր բարվոք է ե-ով գրել, ինչպես՝ երբեք, մեկ,
հեկ, աղետ, քեբես և այլն:

Տանձնակերորդ կետը ծանր վճիռ է մի հատիկ ով դերանվան
նկատմամբ: Քանի որ ուլ-ը բացտրձակ եզակի է, կարելի է թողնել
հին գրություններ:

23-րդ կետի միատառ դրերը, ու, իւ, եա հնչյունների համար,
ինչպես և և փակագիրը ավելորդ են: Պիտի գրել՝ եւ, ու, իւ, եա, նոր
տառի կարիք չկա:

«Ո՛չպետ ընդվադիտական, ո՛չ մանկավարժական և ո՛չ անգամ
դորձնական որևէ լուրջ հիմք չեմ տեսնում շեղվելու ավանդական
ուղղագրության սկզբունքներից: Եթև արդի մանուկ լեզվի շահը
պահանջեր, կանցնելի առանց տատանվելու բոլոր հիշյալ կամուրջ-
ների: Սակայն հենց այդ շահի ղիտակցությունն է, որ հակառակն
է թելադրում: Պահել, պահպանել ամեն կարգի կապեր մայր լեզ-
վի, հին գրական լեզվի հետ՝ աշխարհիկ լեզվի կենսական շահերից
էականն է: Նոր գրականում չկա ոչ մի հնչյական տարր, որ անծա-
նոթ լինի գրաբարին: Այս մի հաստատուն հիմ է ուղղագրական հա-
մերաշխույթան»: «Արդի ուղղագրության մեջ ներելի են այնպիսի
սրբագրություններ և գուցե հարկավոր, որոնք ընդունելի են նաև
գրաբարի տեսակետից, որոնք չեն խախտում, չեն կտրում նորը հնի
հետ կապող օղակները: Միայն ծալրահեղ ստիպողական հարկը
կարող է արդարացնել այս սկզբունքի խաթարումը» (էջ 162): Բա-
ռասկզբի յ-երի ղեղը կամ փոխարինումը ե-ով (16 և 17 կետեր),
ինչպես և սեր—սէր, հօտ—հոտ և նման հոմանունների հավասարե-
ցումը (4 և 9 կետեր) հետևանք են շարունակականության, ուր իմաստն
անգամ զոհվում է ձևին:

Անդրադառնալով օտար բառերի ուղղագրությանը՝ Արոնցը
դժգոհում է, որ հայ բառերը չխոնարհվում են եկվորների առաջ, որ
նրանց հաճույքով միևնույն գիրն ստանան: «Հաճելի լին, —ասում
է նա,— ցուցակի վերնագիրները՝ «Երոպական» այս կամ այն հըն-
չունը, որ կարող է կարծել տալ, իբր թե վերաքննությունը նպա-
տակ ունի համակերպել, հարմարացնել հայ այբուբենը եվրոպա-
կան հնչյուններին» (էջ 163): Մինչդեռ քննվում է հայ հնչյունների և
նրանց գրիի փոփոխությունը և ոչ թե օտար հնչյունները: «Յուրա-
քանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ սխտեմ կարող է մշակել
միայն իր սեփական բառամթերքի հնչական շրջանում: Օտարա-
մուտ բառերը եթև միջամտեն ուղղագրական կանոններ մշակելիս,
շփոթ կառաջացնեն, քանի որ ծագում են ուրիշ լեզվական և հնչա-
կան մթնոլորտից և կարող են հաճախ անմարսելի լինել հյուրըն-
կայող լեզվի համար: Օտար բառը պիտի հնչել այնպես, ինչպես նե-
րում է սեփական լեզվի կարողությունը: Երբ օտար բառը ծո-

դովորեց է անցնում դրականություն, տաշվում, հզկվում է, հայաց-
վում, ինչպես հունարեն *Ευαγγελιον* բառից հայերեն եկեղեցին,
իսկ էթե գրականության միջոցով է անցնում լեզվին, սահայանում է
իր օտար տարալը: Պիտի փոխառյալ բառերը հայացնել, ենթարկել
հայերենի օրենքներին: Այսպես, ֆրանսիացիք կարող են արտասա-
նել շ, ց տառեր, բայց իրենց նեղություն չեն տալիս և *Черноец*-ը
արտասանում են շերևովիչ, իսկ մենք ուզում ենք *Горький* արտա-
սանել Գորկիյ, ծամածնելով մեր լեզուն, մինչդեռ եվրոպացիք բա-
վականանում են *Gorki* ձևով:

Օ, e դրերի տառագրությունը քմահաճույքի նյութ է դարձել
գրողների պըլի տակ: Շատերը խարժելով օտար ո-ի և հայերեն
օ-ի (= աւ) նմանությունից, ամեն տեղ դրում են օ: Կարծելով, թե
ե-ն յե հնչյունի տառն է, օտար e-ն ամեն տեղ դարձնում են է:
Այս խառնակ դրությունը վերջ տալու համար պիտի հիմք ընդունել
հայերեն բառերի համար հանձնաժողովի առաջարկությունը՝ բառա-
սկզբում գրել օ, է, բառամիջում՝ ո, ե, բառավերջում՝ ո, է: Եթե
հայերեն բառերի համար սա ինչ-ինչ շարժով վիճելի է, ապա օտար
բառերի համար անխոցելի է: Մեր նախնիք դրում էին եկեղեցի,
Եպարֆոս, Եպիսկոպոս, Նդեսիա, Նդիսէ, այժմ էլ կարելի է ե-ով
գրել, բայց ղզուշացնել, որ կարդան էդեսիա, էպարբոս, էդիսն,
թեև հանձնաժողովն առաջարկում է գրել էվրիպիտ, էվտիբետ
Դպրոցն է բառակզբի վո և յե հնչումն ստեղծել, ժողովուրդը խու-
սափում է դրանից, նա նախընտրում է օ և է հնչումը: Պիտի գրել՝
Եղմեդ, Եարուսկ, Որմիդը, Ողիսես, Որիդեն, Որեստ կամ Ովրեստ,
Որիոն կամ Ովրիոն, ինչպես և սրդուն, ոպերացիա, կոսպերացիա
և այլն:

Վերջում Ադոնցն ղզուշացնում է հաշիլ առնել նուև մի հանգա-
մանը, նոր սղղագրությունը արևմտահայությունը շրջոնեց, նույ-
նիսկ մի հետևող շունեցավ, կասկած չկա, որ աշխատ է վարվելու
նաև այժմ: Ենտրապես ցավալի է, եթե այն պահին, երբ հայերենիք
իր կառավարչական և հասարակական ուժերով ջանալու է իրեն
քաշել աշխարհահայած զավակները, ուղղագրության խնդիրը նոր
անշրպետ հանգիստանար և փոխանակ մերձեցնելու երկու գրական
լեզուները, ուղղագրական սեպով ընդլայնեք եղած պառակտումը՝
(էջ 165): Նոր սղղագրությունը ընտանեղի է, եթե շահել է հանրու-
թյան հավանությունը: Այս բոլորից հետո Ադոնցը եղբակացնում է:

1. Նորալուր ուղղագրությունը... ջնջելու է իսպառ և վերա-
կանգնելու ավանդականը: Այս անկասկած է:

2. Հանձնաժողովի աշխատանքի արդյունքը շարժի սահպո-
ղական լինի, պետությունը նույնպես ձեռնպահ պիտի մնա վաղա-
ժամ միջամտությունից: Ուղղագրությունը միայն մասնագետների
դործ չէ, այլև համայն մտավորականության, ընթերցող և գրող
հասարակության: Հանրության վերաբերմունքը պիտի որոշի գործի
ելքը:

3. Անհրաժեշտ է հրատարակել մի ժողովածուի մեջ բոլոր գե-
կուցումները, կարծիքները և այն հիմքերը, որոնցով հանձնաժողո-
վը Լղրակացության է եկել, հանձնել հասարակության, հանրու-
թյան քննությունը և լսել նրա կարծիքը:

Հանձնաժողովի հարցերին պատասխանել է նաև բնյութահայ
բանասեր Խ. Պ. Քարտաշյանը, որը Խարբերողի հայրենակցական
միությունը վարչությունը հրատարակել է առանձին գրքուկով³⁶, Հե-
ղինակը՝ 1. անընդունելի է համարում բառամիջում բաղաձայնից
առաջ միջտ և գրելը, որովհետև իր կարծիքով հաճախ բառամի-
ջում ե-ն ու է-ն հնչումով տարբերվում են: Է-ն թեքման ժա-
մանակ ի-ի է փոխվում: Քանի որ օ-ով սկսվող բառերը բար-
դության կամ ածանցման ժամանակ բառամիջում պահպանում
են օ-ն, թող է-ն էլ պահպանվի: Ունենք օր—միջօրե, ունե-
նանք նաև էջք—վայրէջք: 2. Պահպանել բայերի մեջ էք. էի, էիր
(խոսելի, խոսել, նստել, նստեք) և մյուս ձևերը: 3. Ընդունելով պարզ
բառերի օ-ն օ-ով փոխելու առաջադեղը, քննադատում է Վենետիկի
միաբանության հանձնաժողովի (Ք. Վ. Նահապետյան, Վ. Հացու-
նի, Ա. Ղազիկյան) առարկությունը, թե պիտի պահել նաև այն
օ-երը, որոնք աւ-ից են գոյացել, ստուգաբանական ճշտությունը
պահելու համար: Բառամիջում օ-ն ու ա-ն միատեսակ են հնչում,
կօշիկ և կոշիկ միանման են կարդացվում, օգուտ ձեից անօգուտ
գրելը երեխային էլ է հասկանալի, դրան օգնում է տեսապատկերը:
Իսկ կօշիկ գրելու համար երեխան պիտի հիշի հնագույն՝ կաշիկ
ձևը, որը երեխային անծանոթ է. մի անծանոթ քան՝ կօշիկ, մի այլ
անծանոթ բանով ինչպե՞ս սովորեցնել: Միայն իրավացի են Վե-
նետիցիները՝ պահանջելով, որ հոգնակի գործիական հոլովը գրվի
օ-ով (աթեօք, ընտանեօք): Օտար բառերի սկզբի օվ-ը, հունական
օմեգան բառակզբում օ-ով, բառամիջում ո-ով արտահայտելու Վե-
նետիցիները սրան առարկում են, թե հարկ չկա միևնույն հնչյունը
(օ) երկու տառով արտահայտելու:

4. Առաջարկում է բաղաձայնական ու-ի փոխարեն գրել ւ տա-
ռը (նւեր): Դրանով կազատվենք ուու կուտակումից (գրուում >

գրում): Վենետիկցիների առարկումը, թե զրանով բառի ստուգաբանությունն է մթազնվում, ճիշտ չէ: Իս հնչոտ է բացատրել հընչունափոխության օրենքով: Ճիշտ են Վենետիկցիները այս ու-ի փոխարեն վ գրելուն (աստված, լեզվական, թթված, հերվան) դեմ լինելով: Վենետիկցիները դեմ են ույ > ույ փոփոխությանը, բայց ճիշտ չեն: Սթե ույ-ը միայն այդ հնչման համար գործածենք (խոյ), այդ դեպքում նոր սերունդը նախնայաց գրքերի ույ-ն էլ ույ կկարդա. կարծելով, թե նրանք ույ չեն ունեցել: Այս խզումը լավ չէ: Կողմ է ույ-ը ույ դարձնել:

5. Սխալ է համարում բառասկզբի յ-ն և դարձնել:

6. Վենետիկցիները բառասկզբի յ-ն գրելը թողնում են հեղինակի հայեցողության, ինքը համաձայն է գցելուն (ուր որ կարելի է), դեմ են բառավերջի անձայն յ-ն գցելուն՝ պատճառաբանելով յ-ով վերջացող բառերի սահմանափակությունը և դարավոր պատմությամբ: Քարտաշյանը չի ընդունում այս պատճառները, կողմ է գցելուն, նույնիսկ բառամիջում, ինչպես ը-ն:

7. Նա-ի փոխարեն նոր տառ չի կարելի ստեղծել, ճիշտ են Վենետիկցիները: Հակառակ Վենետիկցիների ինքը համաձայն է ու-ի և իւ-ի տեղ միատառ նշան հնարելուն: Դեմ է եօ > եո փոփոխությունը:

8. Համաձայն է Վենետիկցիների հետ՝ օտար կրկնակ բաղաձայնի հարցը թողնել գրողի հայեցողությանը:

Հեղինակն առանձնակի անդրադառնում է Վենետիկցիների առարկումներին և հակառակություն տեսնում նրանցում: Օտար լեզուները օրինակ ֆրեյու, բաղամարյան սովորությամբ պատճառաբանելու միջոցը շարաշահում են նրանք, բացառություններից խուսափելով՝ իրենք թույլ են տալիս բացառություններ կամ ընդունում են հնից եկած բացառությունները: Արեղյան և Վենետյանները երկու ծայրահեղ բևեռներ են, — գրում է նա (էջ 24): Վերջում բերված են արևմտահայ մտավորականներից մի քանիսի կարծիքները: Վեր ուղղագրութիւնը որքան որ լեզուական խեղաթիւրում մը ըլլայ, ունի իր բարիքը... ան իր ժամանակաւոր վնասներէն զատ պիտի ունենայ իր օգտակար մասերը: (Հ. Ս. Երամյան): Անուղանալի է, որ մեր հայերէնի արդի ուղղագրութեան մեջ սրբագրելի կետեր կան» (Բարզէն եպիսկ.): «Պ. Մ. Աբեղեան ուզած է պարզելու դիրացնել հայերէնի կնճոտ ուղղագրութիւնը, նպատակը շատ գովելի է, այլ գործադրութիւնը շատ պակասաւոր» (Մինաս Զեբազ): Ուղղագրության բարեփոխությունը ոչ թե մասնագետների համար է, այլ ժողովրդի, նրա մանուկների:

Հեղինակը բուն վտանգը հայերենի բաղաձայնների եռաստիճանի կորուստն է համարում, հին ստառագրությունից շեղվելու Սրա մասին պիտի մտածել, առում է նա:

1926 թ. նոյեմբերից սկսել է գործել վերը նշված մանկավարժական ենթահանձնաժողովը՝ նախագահությամբ Մ. Տեր-Մարտիրոսյանի, քարտուղարությամբ Արշակ Մեհրաբյանի:

Երկրորդ նիստում որոշվում է՝ ամեն դեպքում օ լսելիս գրել ա, բառասկզբում լավող վ-ն գրել (վոր, վորքան):

Երրորդ նիստում՝ բառասկզբում է լսելիս գրել է (էջ, էգուց, էշ), իսկ յն լսելիս՝ ե (Երևան, Երես, Երեխա, Ես, Երբ), պարզ բառերի բառամիջում գրել ե, կարգալ է (խենթ, չինք, բազե, չինք, թեք): Օժանդակ բայը գրել ե-ով, եղակի երրորդ դեմքում պահել է-ն (եմ, ես, է, եի, եիր, էր, եինք, եիրք և այլն): Հանել Արեղյանի առաջարկը՝ ձայնավորին հաջորդելիս եմ, ես օժանդակ բային յ ավելացնելու մասին, որևէ՝ զնալու եմ, դյուրացի էս, փոխանակ՝ անալու յեմ, գյուղացի յես ձևերի:

Չորրորդ նիստում միաձայն (18 հոգի) որոշում են՝ ամենուրեք ա բաղաձայնի փոխարեն գրել վ տառը, և-ն թողնել միայն ու և իւ տառակապակցություններում, և-ը թողնել իբրև շողկապ և սղագրության նշան, տողադարձի ժամանակ, սակայն, գրել եվ (Թեւավոր, բայց թե-վավոր): Վահնչուն ու-ի փոխարեն գրել վ տառը (աստված, նվեր): Ա-ն պահպանել այն դեպքում, երբ պահպանում է իր ձայնավորական հնչյունը՝ երկուական, տիրացուական, վերջարկուի, վերակացուի և այլն:

Ույ հնչող ույ-ի փոխարեն գրել ույ տառակապակցությունը (լույս, հույս, կույս), ույ-ը գրել միայն խոյ և նման արտասանություն ունեցող բառերում: Մի շարք բառերում ույ-ի փոխարեն գրել ու, նկատի ունենալով արտասանությունը՝ գզուշ, մեղուշ, ուժ, անուշ և այլն: Բառասկզբի հ հնչում ունեցող յ-ի փոխարեն գրել ց տառը: Ընդունել նախաոճֆորմյան եա, իւ, եւ գրությունը (փոխանակ եօ-ի):

Հաջորդ նիստում որոշվում է բառամիջում ա, օ ձայնավորներից հետո յ-ն գրել, իսկ ե, ի, ու տառերից հետո չգրել: Գրել՝ մարգարեական: Բառավերջի անձայն յ-ն չգրել:

Տեխնիկական տեսակետից հետաքրքիր ղեկուցում է կարգացնել Գարեգին Ասնյանը՝ «Նախադասության հարցը հին և նոր ուղղագրական սխառմաների մեջ» թեմայով:

Արեղյանը «Արտիստ»-ի 16 էջը հաշվել է՝ համեմատելով հին և նոր ուղղագրությունը, ստացվել է հետևյալ պատկերը: էջը 30

տող ունի, տողը 30 տառ: Տասնվեց էջում ավելացել է վ տառը 66 հատ, յ-ն (յև) 89 և չ-ն էջի, էջու, չու կապակցություններում 50, ու-ն (լույս, փոխանակ լույս) 26, ընդամենն ավելացել է 231 տառ: Պակասել են՝ յ-ն (ծառայ—ծառայ) 36 հատ, ու-ն (զուարթ—ղվարթ) 65, ընդամենը 101 տառ: Ուրեմն ավելացել է ընդամենը 130 տառ, որ հավասար է 4 1/2 տողի: Բառամիջում նա-ի փոխարեն յա գրելը շահեկան է, նույնպես և ու-ի փոխարեն վ գրելը (աստված), բայց յ-ի փոխարեն և գրելը շահեկան չէ, ինչպես և ւ-ի փոխարեն վ գրելը:

Ք. Լևոնյանը նույն հաշվումները կատարել է «Նորհրդալի» Հայաստանի 1926 թ. № 262-ում, Ստացվել է, որ այդ համարում ավելի են օգտագործվել 844 յ, 395 վ, 93 ւ, ընդամենը 1332 տառ: Նորով յ և և տառերը պակասել են 52-ով (բառավերջի յ-ն և ես երկհնչյունի ե-ն): Մնում է ավելի օգտագործված 1280 տառ: Թերթերն ունի 4 էջ, էջը՝ 7 սյունակ, այսինպես՝ 140 տող, տողը՝ 27 տառ: Ուրեմն թերթն ունի 28 սյունակ, 3920 տող, 105,640 տառ, դրանց մեջ ավելորդ է 1280 տառ, որն անում է 47 տող 11 տառ, դա կազմում է թերթի 1/83 մասը, նշանակում է յուրաքանչյուր 83-րդ համարը հին, նախաքերականական ուղղագրությանը ձրի կլինեն: տարեկան 3—4 համար: Քրաշարը 1000 տպանշանը շարում է մեկ ժամում, ուրեմն 1280 ավելորդ տպանշանը կշարի 1 ժամ 17 րոպեում, 19 րոպե կորչում է սրբագրության համար, ընդամենը 1 ժամ 36 րոպե: 25 օր աշխատելիս բանվորը կորցնում է 40 մամ, աշխինքն 5 օր, որի դիմաց ստանում է լրացուցիչ 20 օտարի, որը տարեկան անում է 480 ժամ կամ 60 օր, 240 ու (ժամը 50 կոպեկով): Ահա թե ինչու Մաշխատյանցը թուղթ ու թանաքի և ժամանակի հարցեր էլ է առաջ քաշում:

Ուղղագրության և տառերի բարեփոխության հանձնաժողովի Երկրորդ հարցը տպանիշաների բարեփոխումն է եղել: Այս առթիվ լսվել են Լեոյի, Ք. Լևոնյանի, Հր. Աճառյանի ղեկուցումները, կազմված են բժշկական հանձնաժողովի և գրաշարներին առաջարկությունները: Այս հարցի մանրամասներին կարելի է ծանոթանալ հիշյալ «Տեղեկագրի» էջերում:

Այս բոլոր ղեկուցումներից ու ընթերցումներից հետո կազմվել է ուղղագրության համարական աղյուսակ, որը և քվեարկվել է հանձնաժողովում երկու անգամ: Ավելորդ շնք համարում հիշյալ տեղեկագրում սպագրված քվեարկության աղյուսակը ներկայացնել ընթերցողներին:

ՈՒՂՂԱԿՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովի լրիվ կազմը եղել է 11 հոգուց՝ Հ. Աճառյան, Թ. Ավդալբեդյան, Ա. Բաբայանյան (Լեո), Ք. Լևոնյան, Ա. Խաչատրյան, Ս. Կանայան, Ս. Հակոբյան, Ք. Ղափանցյան, Ս. Մալխասյանց, Հ. Մանուկյան, Երկրորդը՝ մալխին: Քաղաքից բացակա լինելու պատճառով առաջին քվեարկությանը չի մասնակցել Երվանդազն, երկրորդին՝ Ս. Մալխասյանցը, քվեարկողների թիվը երկու դեպքում էլ եղել է 10:

№	Առաջարկներ	Առաջին քվեարկությանը զեմ են եղել	Երկրորդ քվեարկությանը զեմ են եղել
	1	2	3
	<p>I. Եվրոպական օ հնչումը</p> <p>1. Բառակազմի գրել է և ոչ թե և, ինչպես՝ էր, հոսիլե, էդիտե</p> <p>2. Բառի մեջ, ձայնալորից առաջ գրել է և ոչ՝ եզ, ինչպես՝ րոպեական, մարդարեական, սեւական</p> <p>3. Բառավերջում գրել է, ինչպես՝ մարգարե, գիտե, դիտե</p> <p>4. Բայական թեքման ժամանակ հին է-երը պահել, ինչպես՝ գիտե, գիտեր, գիտցեք</p> <p>5. Բարդությունց և անանցմանց մեջ պահելով ստուգաբանական նշանները՝ գրել է կամ և, ինչպես՝ վալրեք, վերեք</p> <p>6. Այլ դեպքերում բառի մեջ գրել և, ինչպես՝ հանգե, հրավեր, կետ, պոեմա</p> <p>Մանր.— Լ-ով գրությունը պահել համաձայն բառերը դանազանելու համար՝ սեր-սեր, մեզ-մեզ</p> <p>II. Եվրոպական ye հնչումը</p>	<p>միանայն</p> <p>Խաչատրյան</p> <p>Հակոբյան</p> <p>Խաչատրյան</p> <p>Հակոբյան</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Ավդալբեդյան, Արշիստ մխայն գիտելը</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Հակոբյան</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Հակոբյան</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Հակոբյան, Ղափանցյան</p>	<p>միանայն</p> <p>Խաչատրյան, Հակոբյան, Գեորգիևս Է-ն</p> <p>մխայն ա-ից առաջ է ընդունում</p> <p>Խաչատրյան</p> <p>Հակոբյան</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Հակոբյան, Ավդալբեդյան, մի-տյան գիտելը</p> <p>Աճառյան, Քաղա-տըրյան, Հակոբյան, Ղափանցյան, Հակոբյան, Քաղա-տըրյան</p>

1	2	3
7. Բառասկզբում գրել և և ոչ թի՛յն, ինչպես՝ էթ, երկու, եղբայր	միաձայն	միաձայն
III. Եվրոպական օ հնչումը		
8. Բառասկզբում գրել օ և ոչ թի՛ն, ինչպես՝ օդ, օգուտ, օր . . .	միաձայն	միաձայն
9. Բարդութիւնք և ածանցմանց մեջ պահելով ստուգաբանական ճշտութիւնը՝ գրել օ կամ օ, ինչպես՝ անօբուս, անօրինկ, անողոր, անողորմ, հողողորի, Տուսէ որդի	Անասյան Խաչատրյան Հակոբյան	Անասյան Խաչատրյան Հակոբյան Շիրվանդադե
10. Բառամիջում աչ դեպքերում գրել օ, ինչպես՝ կոշիկ, Պողոս, կոտորածիւ, կոտորեցիւ . . . Սանտրոյուն.— Բառամիջում համաձայն բաները տարբերելու համար օ գրութիւնը պահել՝ Տօր—Տօր, աղօտ—աղտ և իմանք բառերում	միաձայն Անասյան, Խաչատրյան, Ղափանցյան, Հակոբյան	միաձայն Անասյան, Խաչատրյան, Ղափանցյան, Հակոբյան
11. Բառավերջում գրել օ, ինչպես՝ քո, այս, Ակո, Սարս, Կարս . . . IV. Եվրոպական օյ հնչումը	լեռն և Լեռնյանը կողմ են հին ուղղագրութիւնը	լեռն, Լեռնյանը և Շիրվանդադե կողմ են հին ուղղագրութիւնը
12. Բառասկզբում գրել օվ և ոչ թի՛ով, ինչպես՝ օվկիանոս, օվագիւ Սանտրոյուն.— Հայերեն օվ բառը գրել օ-ով	միաձայն Անասյանը, Ավդալբեղյանը, Հակոբյանը դեմ են բացասութիւնը	Անասյանը, Ավդալբեղյանը, Հակոբյանը դեմ են բացասութիւնը
13. Հոնական օմեղա տառը արտահայտելու օ-ով, իսկ վ տառը գրել կամ չգրել ըստ արտասանութիւն, ինչպես՝ Շովափ, Բոճա, Շոճ	լեռ, Ղափանցյան	լեռ, Ղափանցյան
V. Եվրոպական օ՞ հնչումը		
14. Բառասկզբում գրել ո և ոչ թի՛վո, ինչպես՝ որսորդ, որդի, ոսկի	Խաչատրյան	Խաչատրյան
VI. Եվրոպական օ հնչումը		
15. Ամեն դեպքում գրել վ և ոչ թի՛վ	լեռ, Կանայան, Մուլեռ, Կանայան, Լե-	լեռ, Կանայան, Մուլեռ, Կանայան, Լե-

1	2	3
մերթ վ, մերթ ւ, մերթ ու, ինչպես՝ վանկ, վնաս, ավաղ, աղեիվ, եվաստ, հողված, սև վակագրի գործածութիւնն ընդունել՝ արեւիք, տերև, վերն	ճունդյան (ձեռքնարար)	վոյան, Մանանդյան (ձեռնարար)
VII. Եվրոպական օյ (օւ) հնչումը		
16. Ամեն դեպքում գրել ուլ, ինչպես՝ րուս, լուս, կուս, կուր և ոչ թի՛րս, լոս, կոս, կուս Սանտրոյուն.— ոյ գրութիւնը կարգով միշտ օյ (օյ), ինչպես՝ կուրդի, գոյական, նոյ, խոյ	միաձայն	միաձայն
VIII. Յ գրի մասին		
17. Յ գիրը բառասկզբում վերածել Ե-ի, ինչպես՝ հարմար, հզի, հուլիս	Անասյան Խաչատրյան Ավդալբեղյան Հակոբյան	Անասյան, Խաչատրյան, Ավդալբեղյան, Հակոբյան
18. Բառասկզբում յ-ն դն քցել, որտեղ կարելի է, ինչպես՝ Ետ, առաջ, Լսան (թեև համարվում է լեզվական ինտիլի)	Ավդալբեղյան	Ավդալբեղյան
19. Բառավերջում անձայն յ չգրել, ինչպես՝ վկա, ներկա, ապագա, պաշտոնայ, խոստանա	Կանայանը (թող մեայ, խոստանայ)	Կանայանը և ուրիշ կարծիքին է
20. Չգրել ու և ի ձայնավորներ իրև, ինչպես՝ վկա, ազգահի	Հակոբյան, Խաչատրյան, Մայիսյան	Խաչատրյան, Հակոբյան
IX. Ի գրութիւնը		
21. Ի գրութիւնը պահել անփոփոխ, ինչպես՝ միութիւն, դիւ, թիւրք, և ոչ թի՛ միութիւն, գյուղ, թիւրք . . .	միաձայն	միաձայն
X. Եւ գրութիւնը		
22. Եւ գրութիւնը պահել անփոփոխ, ինչպես՝ կեանք, մեծութեան, գործունեա, Մամիկոնեան, և ոչ թի՛ կյանք և այլն	միաձայն	միաձայն
XI. Եօ գրութիւնը		
23. Եօ գրութիւնը վերածել եօ-ի՝ եօթը, արդեօք, ոչ թի՛ եօթը, արդեօք . . .	Կանայան	Կանայան

Այս տախտակից երևում է, որ միաձայն են անցել.

1. բառասկզբում օ հնչյունն արտահայտել է տառով (էջ, էակ),

2. ye հնչյունն արտահայտել է տառով (Երևան, Լրեխա, ես),

3. բառասկզբում օ հնչյունն արտահայտել օ տառով (օդ, օր, օդ),

4. պարզ բառերում օ հնչյունն արտահայտել օ տառով (կոշիկ, Պողոս, կոսպերացիա, կոսպիցիա և այլն),

5. բառասկզբում գրել օլ, ոչ թե՛ ով (օվկիանոս, օվալիս),

6. ամեն դեպքում գրել ույ (բույս, լույս, կույս, կույր),

7. իւ, եա գրությունները պահել անփոփոխ (գիւղ, միուսթին, կեանք):

Մեկ դեմ են ունեցել՝ բառասկզբում Վո-ի փոխարեն ո գրելու առաջարկը (որսորդ, արդի, ոսկի), և փակագրի գործածությունն, բառասկզբի յ-ն հնարավորին շարժելով դեմ գցելու, բառավերջի անձայն յ-ն շարժելու և եօ գրության փոխարեն եո-ն գրելու (եոթ, արդեոթ) առաջարկները:

Հանձնաժողովը որոշում է նաև մերժել լատինաձև տառեր. նոր տեսակի այբուբենն ստեղծելու առաջարկները: Պահել ընդհանրապես հայկական տառերի բնույթը, իրար նմանվող տառերի մեջ որոշ փոփոխություն մտցնել, զեղարվեստական տպագրությունների համար նոր տառանիշեր ստեղծել:

Սակայն հանձնաժողովի այս երկարատև, բաղձալուրջ և անհրաժեշտ (դիտական, մանկավարժական, տնտեսական-տեխնիկական, բրժրչկական) ու մանրալին քննությունը որոշումները, որ կայացել են միաձայն, ոչ մի հետևանք չեն ունեցել: Լուսավորության ժողկոմատը, որի հրամանով է կազմվել ու շուրջ երկու ամիս դործել այս հանձնաժողովն իր Լեիթահանձնաժողովներով, ոչ մի վճիռ չի կայացրել: Գուցե ժողկոմատը չի՞ սպասել, որ հանձնաժողովի որոշումը նպաստավոր կլինի նոր ուղղագրության համար կամ որևէ մեկը իսանդարել է, մեզ համար դա մնում է մութ: Փաստն այն է, որ հանձնաժողովի որոշումը մնում է թղթի վրա, շարունակում է գործել 1922 թ. նոր ուղղագրությունը:

1932 թ. լուսժողկոմատը նորից է անգրագետում ուղղագրության հարցերին: Առաջարկվում է, օրինակ, բոլոր դիրքերում օ հնչյունն արտահայտել օ տառով (օրոյ, Կարօ), է հնչյունը՝ է տառով (ցեղեկային, էակ, պողպատէ): Այս մասին որոշների միութունում զեկուցում է լուսժողկոմ Գր. Միմոնյանը: Ա. Բակունցը, Ե. Չարենցը, Մ. Մազմանյանը, արեղյանական ուղղագրությունը համարելով հեղափոխության նվաճումներից մեկը, առաջարկում են

օրհանդեսի այն, վերացնելով նրա սշնչին թիրուխունները», օրինակ՝ դրելու յեմ, գրելի ձեերի յ-ն³⁷:

Գր. Ղափանցյանը 1933 թ. իր «Մի սխալ ուղղություն մեր լեզվաշինության մեջ» հոդվածում, հենվելով ժամանակակից արտասանության վրա, պաշտպանում է Արեղյանի առաջարկով ընդունված՝ վորակ, վորոշ, վորոնել, վորդի, յերնույթ, յերգում եմ, յերկար ու նման գրությունները և նույնիսկ պահանջում այդ վ-ն ու յ-ն սրահայանել նաև բարդության, ածանցման ժամանակ, գրել՝ վատ-վորակ, անվորակ, անվորոշ, անյերնույթ, կյերգեմ (կամ կը յերգեմ), կյերկարեմ: Պահանջում է պահանջել օտարազգի բառերի կրկնակ բաղաձայնները՝ կուլեկտիվ, կոմունիստ և այլն: Ղափանցյանի կարծիքով՝ հետևելով ավանդական գրությանը և գրել՝ կերգեմ, անորոշ, կոմունիստ, նշանակում է հաղորդ տալ ուսուցիչին ազգայնական միտումներին³⁸:

ՀԱՍՏ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՆՆՈՒՄԻ ԵՐ ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԿՈՍԻՏԵՐ ԲՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Երեսնական թվականների սրբաբաններին ՀՄԽՀ Կենտրոնական նախագահության որոշմամբ կազմվում է ՀՄԽՀ Կենտրոնական առևտրային հայկական գրականության լեզվի նորմաների և տերմինաբանության հանձնաժողով՝ հետևյալ կազմով. Լ. Արիսյան (նախագահ), Ե. Չարենց, Մ. Արեղյան, Գ. Արտուր, Հր. Աճառյան, Հ. Պողոսյան, Գ. Ղափանցյան, Ա. Տոնոյան, Հ. Գյուլիքեմիսյան, Հ. Մանանդյան, Ա. Ղարիբյան, Լ. Հովհաննիսյան, Հ. Կարապետյան, Պ. Քալանթարյան, Գ. Սևակ (գիտ. քարտուղար): Հետո լրացուցիչ հրամանով հանձնաժողովում ընտրվել են Միմոնյանը և Արամ Եսֆենդյանը³⁹:

1936 թվականի մայիսի 10-ին կայացած նիստին (ներկա են եղել՝ Ա. Եղիազարյան, Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Ա. Ղարիբյան, Միմակ, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գառապարյան) Գ. Սևակը ներկայացրել է մի շարք բառերի ուղղագրության նախագիծ: Որոշվել են հաստատել ներկայացված բառերի հետևյալ ուղղագրությունը՝ այս, այդ, այն, այսպես, այդպես և այլն (էս, էդ և այլն թույլ տալ միայն բարբառը արտահայտելու համար), ճանապարհ, ճամփա (մերժել ճամպա, ճամբա ձևերը), ուժ (մերժել ույժ ձևը), գոյույ, սառույց և այլն (մերժել սառույց, զգույ ձևերը), ասացի, ասացիր և այլն, թույլատրել նաև ասացի, ասացիր և այլն (մերժել՝ ասի, ասավ ձևերը), աշխարհ, աշխարհք (մերժել աշխարք ձևը), վոսք:

վոտքեր, նաև՝ վոտ, հեքիաթ (մեյմել՝ հեքյաթ, հեքաթ ձևերը), Բարու (մերժել Բաղու ձևը), շնորհ, շնորհք (ոչ՝ շնորք), շեմ գնա (ոչ՝ շեմ գնալ), շեմ գալիս (ոչ՝ շեմ գալի), շոգ (ոչ՝ շոք), Էրդիկ (ոչ՝ երթիկ), վոշ վոթ, վոշ մի (մերժել վոշվոթ, ուշմի, վոշոթ ձևերը), շոթել (ոչ՝ շոգել), մի քիչ, մի քանի (մերժել միքիչ, միքանի կայսե ձևերը), փնտռել (ոչ՝ փնտրել), Համասփյուռ (ոչ՝ Համասփյուր), Վոլոդյա (ոչ՝ Վալոդյա կամ Վալոդիա), Ռուսական հատուկ անունների փառաբանական ձևերը տառադարձել յա-ով, ոչ՝ իա-ով (Սոնյա, Մանյա), գրել բոլշեվիկ (ոչ՝ բոլշեիկ), զարթնել (ոչ՝ զարթել), մի վախենա (ոչ՝ մի՛ վախենալ), հորեզբայր, աներկյոտը, տասներեք (մերժել՝ հորյեզբայր, անյերկյոտը, տասնյերեք ձևերը), անորոշ, անորակ, անողորմ (ոչ՝ անվորոշ, անվողորմ), Ռուսատրեկ միայն անվորակ⁴⁰ ձևը իբրև շատ արածված ձևի, հաղուստ, Թարուն (նաև՝ Թագուն), ատաշ, աղեկ, հառաշ, նա շի, նա զի գալիս, ունեմ (մերժել՝ ունիմ), արեմ, սեմ, բեմեռ (մերժել սե, արե, բեեռ ձևերը), և միացյալ փոքր գրել միայն այն դեպքում, երբ շարկուտ է (նաև, նա, աջև, ինչևէ), զարդարվի՛ր (ոչ՝ զարդարվի՛ր), բողկ (ոչ՝ բոխկ), բախտ (ոչ՝ բարդ)։ Առականների, հեքիաթների մեջ անծնավորված կենդանիների անունները գրել մեծատառով։ Արձանագրությունն ստորագրել են նախագահ Ա. Եղիազարյանը, քարտուղար Գ. Մեակեր⁴¹։

Հայաստանի պետական արխիվում պահպանվում է տերմինաբանական հանձնաժողովի 1936 թ. հուլիսի 22-ի նիստի արձանագրությունը՝ որոված գիտնական քարտուղար Գ. Մեակի ձեռքով նիստը վայացել է լուստողիմ Ա. Եղիազարյանի առանձնասենյակում։ Հրավիրված են եղել՝ Լ. Արիսյան, Դր. Միմոնյան, Ս. Դավթյան, Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Հ. Գյուլիբեկյան, Գ. Ղափանցյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Ղարիբյան, Հ. Պողոսյան, Վ. Կոստանյան, Ն. Մակինցյան, քարտուղար է Գ. Մեակը։ Քննվել է Հ. Հովհաննիսյանի ներկայացրած բժշկական տերմինների ցուցակը և օտար բառերում փոփոխությունը յ-ն օգտագործելու հարցը։

Որոշել են օտար բառերում յ-ն իբրև փոփոխման նշան և ձայնակապ չգործածել, գրել՝ պոետ, ալումին, ռեժիսոր, դիրիժոր և ոչ՝ պոյետ, ալյումին, ռեժիսյոր, դիրիժյոր։ Աբեղյանի բացակայության պատճառով որոշել են այս մասին հարցում անել նրան. եթե համաձայն է, համարել ընդունված և գործադրել⁴²։

1940 թ. օգոստոսի 15-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը հաստատում է տերմինաբանական նոր կոմիտեի կազմած նախագծով լուստողիմի առաջարկությունը՝ հայերենի ուղղագրության մեջ մասնակի փոփոխություն մտցնելու մասին⁴³։ Որոշման

ներածական մասում ասված է, թե կոմիտեն արձանագրում է, որ 1922 թ. ընդունված նոր ուղղագրությունը առաջադիմական մի խոշոր քայլ էր մեր ավանդական ուղղագրության քարայած անկանոնությունների վերացման և մեր ազգաբնակչության լայնագույն զանգվածներին գրագետ դարձնելու գործի հեշտացման ուղղությունում։ Իբրև քարեփոխման նվաճումներ նշված են բառավերջ անձայն յ-ի վերացումը, յ, Վ հնչյունների գրության կայունացումը, եա, եօ, իւ տառակապակցությունների փոխարեն յա, յու, յո տառակապակցությունների ընդունումը, պարզ բառերում է-ի փոխարեն և գրելը։ Կոմիտեն արձանագրում է այդ բարեփոխման նաև թերությունները։

1. Նոր ուղղագրությամբ փոփոխություն կատարվեց նաև մեր ալբերենում, գործածությունից հանվեցին է, օ տառերը, որի հետևանքով պարտադիր դարձավ բառասկզբում ե-ին և ո-ին նախորդող յ և Վ տառերը գրել։

2. Անտեսվեց ուղղագրության ստուգաբանական պահանջն ու պատմականությունը։ Ենելով սրանցից՝ կոմիտեն որոշում է ազատել այդ ուղղագրությունը ժայրահղություններից, չափավորել այն՝ վերականգնելով է և օ տառերը։ Այդ որոշումով առաջարկվում է մամուլին, հրատարակչություններին, դպրոցներին ու հիմնարկ-ձեռնարկություններին։

1. Վերականգնել հայոց այբուբենի և գրության մեջ «է» և «օ» տառերը, որպես սխալ հանված, գործածելով բառասկզբում իբրև «է» (ռուսերեն Э) և «օ» (ռուսերեն О), օրինակ՝ էպոխա, էվոլյուցիա, օր, օպերա և այլն։

Մանրություն.— Բառաձևերում և բառակերպում գործածել միայն «ե» և «օ» տառերը, ինչպես ընդունված է այժմ (տեսնել, բողե, բազե, այս, խելոք և այլն)։

2. Ե, ո տառերը բառասկզբում գործածել միայն իբրև յե (ռուսերեն е) և վո (ռուսերեն во), օրինակ՝ ես (ес), երբ (ерб), Եգիպտոս (ЕГИПТОС), ոսկի (воски), օրակ (ворак) և այլն։ Իբրև բացառություն ով, ովքեր դերանունները գրելով ո-ով։

3. Բարդ և ածանցավոր բառերում պահել ստուգաբանական գրությունը (լուսնոսկի, կեսօր, աներես, ամենաէական, չէր և այլն)։

4. Յ-ն իբրև ձայնակապ գործածել ա-ից և ո-ից հետո։ Օրինակ՝ կայանալ, գոյանալ, նայել, շոյել և այլն։

5. Մահմանեղ եմ օժանդակ քայի տարբեր ձևերի հետևյալ ուղղագրությունը՝ եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիք, էր, էիք, էին, չէիք, չէր և այլն։

Վերը հիշատակված բոլոր փոփոխությունները Գ. Սևակն առաջարկել է դեռ 1932 թ. իր «Մեր ուղղադրություն վերափոխության մասին» հոդվածում («Գր. թերթ», 1932 թ., 10-ը հունիսի):

Այս փոփոխությունը կայացնող տերմինաբանական կոմիտեի կազմում եղել են Թ. Մարտիրոսյանը (նախագահ), Ստ. Զորյանը, Գ. Գեմիճյանը, Մ. Արևելյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Մևակը, Ա. Ղարիբյանը և Ս. Ղազարյանը (գիտնական քարտուղար): Մույն կազմը հաստատվել էր 1939 թ. հոկտեմբերի 22-ի լուսժողովումստի կոլեգիայի նիստում⁴⁴:

1940 թ. հունիսի 28-ին լուսժողովումստի կոլեգիան հաստատում է տերմինաբանական կոմիտեի որոշումը հայոց լեզվում մի շարք փոխառյալ բառեր կիրառելու մասին: Որոշում են հայերեն բառերի փոխարեն գործածել հետևյալ փոխառյալ բառերը՝ պարսիա (ոչ՝ կուսակցություն), ռեպուբլիկա (ոչ՝ հանրապետություն), սովետ (ոչ՝ ստրուկտուր), սևիա (ոչ՝ նստաշրջան), լեռնային (ոչ՝ հեղափոխություն), գեղեցիկ (ոչ՝ պատվիրակություն), կոնստիտուցիա (ոչ՝ սահմանադրություն): Սրանց համապատասխան էլ գործածել սրանց բաղադրյալ ձևերը՝ ռեպուբլիկան, լեռնայինություններ, կոնստիտուցիա (նաև հակառակուսիքներ), ռեպուբլիկաններ, ռեպուբլիկական, ռեպուբլիկանական, ռեպուբլիկանություններ և այլն⁴⁵: Այս որոշումը օրենքի ուժ է ստանում Մի-նիստյանների ուղևորի 1940 թ. սեպտեմբերի 15-ի վերը հիշատակված նիստի հաստատումով:

Այժմ օգտագործվում են մեծ մասամբ հայերեն ձևերը:

Այդ նույն ամսին տերմինաբանական կոմիտեն պարզաբանում է մտցնում վերոհիշյալ տերմինների գործածության մասին: «Սովետ» բառը գործածել Սովետական իշխանության պետական-վարչական օրգանները (ընտրովի) անվանելու համար, իսկ գիտական, ուսումնական և այլ խորհրդակցական հաստատությունները կոչել «խորհուրդ» բառով, օրինակ՝ մանկավարժական խորհուրդ, գիտական խորհուրդ, պաշտ-ավիաքիմի կենտրոնական խորհուրդ և այլն: «Ենտրովի» բառի սովորական իմաստը պահպանել, օրինակ՝ խորհուրդ տալ, խորհրդակցել և այլն: Հայոց լեզվում մնում են՝ հեղափոխել, հեղափոխություն բառերը, իսկ «ռեպուբլիկա» տերմինը պիտի օգտագործել միայն այն հասարակական-պատմական իրադարձությունը նշելու, երբ պետական կյանքում արմատական հեղաշրջում է կատարվում, տառադրվում են շահագործողական կարգերը: Պետական ներքին կյանքում կատարված տեղա-

շարժերը, պետական կազմի փոփոխությունը «հեղաշրջել» բառով պիտի արտահայտել («Ստեղծարար», էջ 20—22):

Գիտության, տեխնիկայի, քննահանուր մշակույթի զարգացման հետ մեծանում է փոխառության պահանջը, նորանոր օտար բառեր են մտնում մեր բառարանը: Սակայն օտարաբան բառերը գրում էին թե՛ ըստ փոխառու լեզվի արտասանության (Տալստոյ, բաղնիկ, Գոգոլ, Հայնե, Լայպցիգ, Յվայգ, Յոյերբախ և այլն), թե՛ ըստ գրության (Տոլստոյ, Գոգոլ, Հայնե, Յվայց), Չկա, օրինակ, անպերենի ֆ-ի միասնական տառադարձություն, մերթ գրում են՝ Վաշիկոֆերն, Վիրտոն, Վիրյամ, մերթ էլ՝ Ուլյամ, Ուլյան, Ուլյու, Ուլև և այլն: Արդարև էլ մի կողմից գրում են Յիցերան, Միցիլիա, ցիլի, մյուս կողմից՝ Աեսար, կիտուն, կենտոն և այլն⁴⁶:

Ահա այդ փոփոխությունների գրությունը կարգավորելու համար կոմիտեն որոշում է, թե՛ Ե՞րբ կարելի է փոխ վերցնել օտար լեզուներից և ինչպե՞ս տառադարձել: Կոմիտեն հաստատում է տառադարձության հետևյալ կարգը⁴⁷:

1. Ռուսերեն Ե-ով (եվրոպական Ե-ով) փոխող բառերը (հայերեն արտահայտել ա տառով՝ ռադիո, ռեակցիա, ռոբոտ, նույնը բառափոխում արտահայտել Ե տառով: Երբ Ե (Ե)-ն նախորդում է արմատական լ, և հեշտուններին, արտահայտել Ե-ով (Առնոլդ, Բեռլին):

2. Բառամիջում և բառամիջում կրկնակ Ե-ն արտահայտել Ե-ով (Մառ, տեռոր): Ռուսերենից վերցրած բառերում Ե և ի ձայնավորներին նախորդող Ե-ն արտահայտել Ե-ով (տեխնոսոփիա):

3. Հունարեն Բ-ն արտահայտել ր տառով (Բարսեղ, բարբարոս): Միջին և նոր շրջանում հայերենին անցած բառերում Բ-ն արտահայտել վ տառով (Վասիլ):

4. Օտարազգի կրկնակ բաղաձայնների դիմաց (պս, կվ, սս, ըլ) հայերենում մեկը գրել (կոմունիստ, կոլեկտիվ, կլասիկ, ապարատ, ալորդ): Եթե օտարազգի կրկնակ բաղաձայնները հայերենում պարզ լսվում են, պահպանել կրկնակի ձևով՝ մասսա, կասսա, վիլլա և այլն: Բառավերջի կրկնակ բաղաձայնների դիմաց մեկը գրել (Բարբյուս):

5. Օտարազգի Լ-ն (Նե) հայերեն գրել լ տառով, առանց ապաթարցի և փափկացնող յ-ի (ապաթար, կուլտուրա, բորեիկ): Պահպանել հնուց քննարկված և մեր լեզվում մերված բառերի զ-ով գրությունը՝ Պողոս, նիկողոս և այլն: Օտարազգի լա, լու (ռուս. լա, լու) արտահայտել լա, լու տառակապակցություններով՝ լապտա, տրանսլացիա, կոլաբորատոր, ռեպուբլիկա, ինչպես նաև՝ բրոշուր, պարաշուտ և այլն⁴⁸:

6. Օտարազգի X, KS (ռուս. КС) արտահայտելի Բս դրուձյամբ՝ Մարքս, էքսկուրսիա, տաքսի, բուքսիթ և այլն: Բուն սուսերենն КС-ն տառադարձելի կս տառակապակցությամբ (Ակաակալ):

7. Հատինական լեզուների K, P, I (ռուս. К, П, Т) տառադարձելի կ, պ, տ (կոնվինտ, տերմին, պրոբլեմ և այլն):

8. Օտարազգի հ-ն հայերեն միշտ գրելի և տառով: Հատուկ անունները գրելի ըստ ընդունված արտասանության, օրինակ՝ Գերցոն, Անրի Բարբյուս և ոչ՝ Հերցոն, Հենրի Բարբյուս:

9. Օտարազգի Օ հնչյունը հայերենում բառակազմում արտահայտելի օ տառով, բառամիջում և բառավերջում՝ ո: Կրկնակ օ-ն գրելի ո-ով, եթե արտասանությունը պահպանվում է՝ կոպերացիա, կոորդինացիա և այլն: Բառակազմում օտարազգի ՎՕ-ն (ռուս. ВО) արտահայտելի վո տառակապակցությամբ՝ Վոլտեր, Վոլգա, Վորոշիլով, վոկալ, վոլտ և այլն⁴⁹:

10. Բառավերջի ա-ն պահպանելի հունա-լատինական ika վերջավորությունն ունեցող և հնուց փոխառված բառերում՝ ֆիզիկա, պրակտիկա, դիալեկտիկա: Բառավերջում ուղղ ա-ն պահելի նաև թեորեմա, դեյմա և նման ձևերում: Առանց ա-ի գրելի այն բառերը, որոնք այդպես տարածված են, ինչպես՝ պրոբլեմ, սյուսեմ և այլն: Եթե հունական բառը վերջվել է լատինականից, որտեղ նա ա է ստացել, պահել ա-ն (միոմա, սարկոմա):

11. Հատինական Շ-ն (չ և ջ) հնուց փոխառված բառերում պահպանելի հին (չ) տառադարձությամբ՝ կրկես, կինարոն, Կիկի-րոն և այլն: Նույնը նոր ընդունվող բառերում արտահայտելի ջ տառով՝ ցիկ, ցիարոն:

12. Օտարազգի Շի-ն տառադարձելի Բ-ով՝ քիմիկոս, ըլոթ, քիմիա: Մի քանի տարածված բառերում պահպանելի նույն Շի-ի թ գրությունը՝ խոլերա, միսանիդ, սիեմա և այլն:

13. Օտարազգի Նի-ն տառադարձելի Բ-ով՝ թեորեմա, թատրոն, էսթետիկա, մաթեմատիկա, տեթուոգիա և այլն:

14. Օտարազգի իձ (ռուս. ИД, Я) անշեշտ վերջավորությունն ունեցող հատուկ անուններում տառադարձելի յա, իսկ երկրների ու աշխարհամասերի անուններում՝ իա: Օրինակ՝ Վոլոդյա, Ասլա, Օֆելյա, Անգլիա, Ասիա, Գերմանիա և այլն: Ենչու ունեցող իձ (ИД)-ն տառադարձելի իա (Լիա, Մարիա):

15. Անգլերենի ՕՈ, ՏՈՈ վերջավորությունները տառադարձելի ոն, սոն, և ոչ՝ ըն, սրն (Նյուտոն, Վոլտոն):

16. Բուսերեն բառակազմի e-ն արտահայտելի ե-ով, իսկ Յ-ն՝ է-ով (Եֆիմ, Ենիսեյ, Էստոնիա):

17. Օտարազգի րի-ն տառադարձելի ֆ-ով (ֆոնոգրաֆ): Նույնը

հնուց փոխառվելի բառերում սյահելի վի դրուձյամբ (փիլիսոփա, Փիլիսոս):

18. Հին փոխառություններում թողնելի վերջավանկ ես, սս, ուա, իսս, իուս դրուձյունները (Եղնատիոս, Պետրոս, Էսքիլոս): Նոր փոխառություններում խուսափելի նման գրություններից: Առհասարակ հատուկ անունները տառադարձելի հնարավորության լավով փոխառու չեզվի արտասանության համաձայն:

19. Անգլերեն ա-ն տառադարձելի վ-ով, ոչ թե ու-ով, օրինակ՝ «Գնչի վորկեր»: Մյայն մի քանի տարածված բառերում սյահելի ա-ն՝ Ռեկա, Ռալֆ, Ռիլման և այլն:

20. Արևելյան բեղուններից հայերենին անցած տերմիններն ու բառերը տառադարձելի ըստ տեղական արտասանության՝ Թեհրան, Ղազվին, Վահագ, Ղուբան, Էֆենդի և այլն:

Կամ իրեն հետագայում այս տառադարձության մեջ մասնակի փոփոխություն մտցրեց՝ նպատակ ունենալով փոխառվելի բառը մոտեցնելի փոխառու լեզվի արտասանությանը: 1953 թ. որոշվեց օտարազգի լձ, լն (ռուս. ЛД, ЛН) հնչյունակապակցություններն արտահայտելի լյա, լյո, տառակապակցություններով, գրելի՝ ուուլյուցիա, ալյումին, տրանսլյուցիա, լյապոս, ինչպես և բրոշյուր և ոչ՝ ուուլյուցիա, ալումին, տրանսլացիա, լապոս, բրոշուր⁴⁹:

Որոշվեց գրելի օրլեկա, սուրլեկա՝ նախկին օրկլա, սուրկլա ձևերի փոխարեն:

Չորրորդ կետը, որով հնարավոր է համարվում օտարազգի բառերի կրկնակ լազաձայնը պահպանել, եթե երկար է արտասանվում, նոր տխալների տեղիք է տալիս: Եթե կրկնակ լազաձայն գրվել արտասանության հարց է, մեկը արտասանում է Ռուսսո, Բոկլաչիո և այդպես էլ գրում է, մյուսն արտասանում ու գրում է Ռուսո, Բոկաչիո: Այդ պատճառով էլ հանդիպում են Դիկկենս—Դիկկենս, Մուսսորգսկի—Մուսորգսկի, Ռուսսո—Ռուսո, Բոկլաչիո—Բոկաչիո (նաև Բոկաչո) դուզահեռ ձևերը: Նշանակում է պիտի խուսափել լազառություններից: Օրինակ՝ ի՞նչ կարիք կա բացառություն անելի և օտարազգի բառակազմի ՎՕ տառակապակցությունն արտահայտելի վո-ով և գրելի Վոլտեր, Վորոշիլով, Վոլգա, վոկալ, այն դեպքում, երբ բառակազմի ՎՕ-ն հայերենում արտահայտվում է ո տառով՝ ոճմակ, ոխակալ, ոզնի, որակ և այլն: Ինչպես որ դրում ենք Ուստանիկ, կարողում Vostanik, այնպես էլ կգրենք Որոշիլով, ոկալ, Ոլտեր, կկարդանք՝ Voroshilov, vokal, Volter: Մրանով դրուձյունն էլ միատեսակ կլինի և կհշտանա՝ ազատվելով ա-

* Նախադեր կազմել է Է. Աղայանը:

վելուրդ բացառությունից: Մանավանդ որ օտարազգի բաները հայերենի ուղղագրությամբ ենք արտահայտում:

Ինչպես միշտ, այժմ էլ փոխառյալ բաներին տրվում է հայերենի արտասանական և ուղղագրական ձևը, որը, իհարկե, չի բացառում հնարավորություն սահմաններում բառը մոտիկ պահելու փոխատու չեզվի արտասանությանը, հատկապես անձնանունները դեպքում: Ռուսերենի միջոցով այլ լեզուներից անցած բաները ընդունում են ռուսերենի ձևը, հայերենին են անցնում ռուսերենի ձևովով, թայց եթե հայերենի չեզվական միջոցները հնարավորություն են տալիս, պիտի ամեն կերպ փոխառյալ բառը մոտիկ պահել փոխատու չեզվի արտասանությանը: Օրինակ՝ ռուսերենը ի տառ շուրի և օտար ի-ն արտահայտում է Դ տառով, գրում են Гаванна, մենք ճ ունենք և գրում ենք Հավաննա, նրանք գրում են Гавнибал, մենք՝ Հաննիբալ և այլն:

Հաջորդ նիստում կոմիտեն ատիճանաբար ճշգրտում է օտար բաների տառադարձությունը, վերացնում երկակի գրությունները: Ռուսերեն յе, ше, шё, ыё տառակապակցությունները երկակի գրությամբ էին տառադարձվում, ստացվել էին նորոշում—հորոշում, էիխաշում—էիխաշեմ, Տեղեղում—Տեղեղեմ զուգադրությունները: Կոմիտեի 1955 թ. հոկտեմբերի նիստում Ար. Ղարիբյանի նախագծով որոշվել է սահմանել միասնական գրություն, այդ տառակապակցությունները տառադարձել ժո, շո, շո, շո և գրել Хрущев-ը՝ հորոշում, Лихачев-ը՝ էիխաշում, Телешев-ը՝ Տեղեղում: Պրոֆեսորի նախագծով 1957 թ. մայիսին որոշվում է ռուսերեն Ե-ն տառադարձել ին կապակցությամբ՝ Вьетнам > Վիետնամ, премьер > պրեմիեր, премьера > պրեմիերա, Поволяе > Պովոլե, Мольер > Մոլիեր, фелбетон > ֆելիետոն և այլն: Որոշվում է Ճապոնիա—Յապոնիա, Պակիստան—Պակիստան, Տաջիկական (УՍՏ)—Քաշիկական (УՍՏ), ատլետիկա—աթլետիկա, Բայադետ—Բայադետ, բացականչել—բացազանչել, պարաշյուտ—պարաշյուտ, կոլեց—կոլեթ, տոննա—տոնն, Վիլյամ—Վիլիամ, Թուրքիա—Թյուրքիա, Թուրք—Թյուրք, Թուրքական—Թյուրքական զույգ գրություններից ընդունել առաջինները՝ Ճապոնիա, Պակիստան, Տաջիկական (УՍՏ), ատլետիկա, Բայադետ, բացականչել, պարաշյուտ, կոլեթ, տոննա, Վիլյամ, Թուրքիա, Թուրք, Թուրքական: Թյուրք բառարմատում չ տառը պահել միայն պան-թյուրքիզ, Թյուրք-թաթարական, Թյուրքական (լեզուներ) և նման բառաձևերում, որոնք իրենց իմաստով վերաբերում են ոչ միայն Թուրքերին, այլև Թյուրքական ժողովուրդներին ընդհանրապես⁵⁰, Մեր

կարծիքով՝ միանգամայն ավելորդ բացառությունն է սա և միայն գրությունը զվարացնող հանգամանք:

Նույն այդ թվին դարձյալ Ար. Ղարիբյանի նախագծով որոշվում է էլեկտր փոխառյալ արմատով բարդված բաներում օգտագործել ա հոդակապը՝ էլեկտրական, էլեկտրատեխնիկա, էլեկտրացանց, էլեկտրաէներգիա: Եթե բարդության բաղադրիչները հայերենում իբրև առանձին արմատներ չեն գիտակցվում, ա հոդակապը չի դրվում, օրինակ, էլեկտրոլիզ, էլեկտրիֆիկացիա: Այս բաները հայերենում իբրև պարզ բաներ են գիտակցվում:

Տառադարձության մասին տեղեկանքանական կոմիտեի 1959 թ. որոշումից շուրջ երեասն տարի անց, էրբ արդեն նկատելի էին փոփոխություններ տառադարձության մեջ, երբ գրացվում էին հիշյալ որոշման թերի կողմերը, առանձին հոդվածով իր առաջարկություններն է անում պրոֆ. Գ. Զահուկյանը⁵¹: Հորվածում առանձնապես նշվում է, որ 1. Թերի է արեկյան լեզուներից անունների ու տեղանունների տառադարձության սահմանումը: Անհրաժեշտ է մանրամասն կանոններ սահմանել շինարներից, հնդկներից, կորեական, վիետնամական լեզուներից կատարված փոխառության տառադարձության համար: Օրինակ՝ կորեական շնչող խուլները, որոնց դուգահոն են հայերեն փ, ք, ֆ, շ, տառադարձվում են ըստ ռուսերենի՝ փխ, քխ, ֆխ, շխ (ՈՒ, ՏՒ, ԿՒ, ՎՒ), փոխանակ փ, ք, ֆ, շ: Գրում են՝ Փլանյան, Չխուշխուս—Պուկրո (փոխանակ՝ Փենյան, Չունչուն—Պուկրո), հնդկական շնչող ձայնիչները պիտի տառադարձել հայերեն բն, դն, զն, զն տառակապակցություններով, ուստի պիտի գրել՝ բնայ-բնայ, բնիլայի, զնոչ և ոչ թե՛ բխայ-բխայ, բնիլայի, զխոչ:

2. Վերջին ժամանակներս հակում կա օտարազգի բաների հատկապես անգլերենի, տառադարձությունը մոտեցնել փոխատու չեզվի արտասանությանը՝ դրանով որոշ շահով շեղվելով տեղեկանաբանական կոմիտեի այն որոշումից, թե օտարազգի ք, է, Կ-ն տառադարձվում է պ, տ, կ: Անգլիական ք, է, Կ-ն սկսել են արտահայտել փ, ք, ֆ տառերով: Երբեմն ժայռահեղության հասնելով, ֆրանսերենի, դերմաներենի ք, է, Կ-ն էլ են փ, ք, ֆ-ով արտահայտում, թեև սրանց ք, է, Կ-ն շնչող չեն: Միտում կա անգլիական Կ-ն Վ-ի փոխարեն արտահայտել ու տառով: Մյուս կողմից էլ հաճախ ռուսերենի ազդեցությամբ աղավաղում են անգլերենի հնչյունային համակարգը, բառի արտասանությունը, կամ հայերենի փ, ք, ֆ-ի փոխարեն օգտագործում են պ, տ, կ, իսկ վերջիններիս փոխարեն՝ փ, ք, ֆ, գրում են, օրինակ, էթիկա, փոխամակ էտիկա:

3. Երբեմն տեղեկանքանական կոմիտեն շեղվել է իր սկզբ-

բունքից, օրինակ՝ ԵԵ-ն (յԵ-ն) մի դեպքում արտահայտում է ին տառակապակցությունը (Վիետնամ, պրեմիեր), մյուս դեպքում՝ յն (օբյեկտ, սուբյեկտ)։ Հեղինակն անհրաժեշտ է համարում ի մի բերել տերմինաբանական կոմիտեի որոշումները, վերացնել եղած հակասությունները, միասնակ դեպքերը համադրել և կայացնել մի ընդհանուր ու կուս որոշում։

Այնպիսի վերը նշված և մի շարք այլ փաստերից՝ հողվածագիրն առաջարկում է տառադարձության ընդհանուր սկզբունքներ ու նորմաներ՝ ընդգրկելով նաև տերմինաբանական կոմիտեի մինչ այդ կայացրած որոշումները՝ որոշ կանոններ փոխելով ու լրացնելով։

Թողնելով, որ այդ կանոններին ընթացողը մանրամասն ծանոթանա հիշյալ հողվածում, տգում ենք երկու խոսք ասել նրանց մասին։ Ամենից առաջ տեղին ու ժամանակին է Ջահուկյանը տառադարձության հարցը բարձրացնում և պահանջում ստեղծել մի ընդհանուր որոշում։ Իր առաջարկներում հեղինակն ամեն կերպ ձգտում է տառադարձությունը մոտեցնել փոխատու լեզվի արտասանությանը, ուստի կանոններ սահմանելիս նկատի է ունենում առանձին լեզուների, օրինակ, անգլերենի, չինարենի, հնդկերենի, արտասանական առանձնահատկությունները և յուրաքանչյուրի համար երբեմն առանձին տառադարձություն սահմանում՝ միանգամայն արդարացիորեն քննադատելով այն հեղինակներին, որոնք օտար բառերը տառադարձում են ուսերենի հնչյունային օրենքներով։ Խրախուսելի է հեղինակի ձգտումը՝ ստեղծել տառադարձության միասնական սկզբունք։ Օրինակ, եթե օտարազգի օ, Ե տառերը տառադարձում ենք հայերենի օ, է տառերի ուղղագրության համաձայն, ապա ՎՕ-ն էլ պիտի տառադարձենք օ-ի ուղղագրության համաձայն, ուստի պետք է օտարազգի ՎՕ-ն բառասկզբում արտահայտել օ տառով, բառամիջում՝ վօ (Ռորշիլով, Ուտեր, Ռեյլ, Կովալսկի, Պետլո)։

Թեև առաջարկություններում շատ են բացատրությունները, որը զգվարացնում է գրությունը, կան և խորհելու, քննելու առաջարկներ, բայց հեղինակը արժեքավոր ուղղումներ ու լրացումներ է անում տառադարձության գործող կանոններում։

Գ. Ջահուկյանի այս առաջարկությունների շուրջը «Գրական թերթ»-ը 1972 թ. (№ № 39, 42, 48 և այլն) մտքերի լայն փոխանակություն չկապց, որը ամփոփվեց 1973 թ. փետրվարին (№ 8) բանավեճի մասնակիցների (Լ. Հախվերդյան, Ն. Մուրադյան, Ռ. Իշխանյան, Խ. Գալստեյց, Գ. Վիրապյան) հողվածներով, որոնք

կրկնում էին իրենց արդեն հրատարակված մտքերը, և Գ. Ջահուկյանի եզրափակիչ հողվածով։

Ինչպես նշում է Ջահուկյանը, հիշյալ հողվածներում երկու ծայրահեղ կարծիք է հայտնվում՝ կամ պահանջվում է ուղեցույց ընդունել առավելադուրս շափով փոխատու լեզվի նշումը, այն տարածելով նաև հնագույն փոխատուությունների վրա, կամ պահանջել ավանդական դրությունը՝ այն տարածելով նաև նորագույն փոխատուությունների վրա։

Ճիշտը, սակայն, այն կլինի, որ պահանջներ ավանդույթով ընդունված բառերի ուղղագրությունը, մի սկզբունք, որը վաղուց ընդունված է արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում։ Այլ քան է նոր փոխատուությունների գրության հարցը։ Այս դեպքում էլ ծայրահեղությունը (կամ միայն լրատ փոխատու լեզվի արտասանության, կամ միայն լրատ գրության) միայն կլինի։ Յուրաքանչյուր լեզու ձգտում է օտարամուտ բառերում պահպանել փոխատու լեզվի հնչյունային, արտասանական առանձնահատկությունները, բայց իր՝ փոխատու լեզվի, հնչյունային կազմի սահմաններում, այնպես, որ չխախտվի այն։ Այդ սկզբունքով էլ մենք պիտի առաջնորդվենք։ Եթե հայերենում բնորոշ չէ կրկնակ բաղաձայնների գրությունը, ինչո՞ւ օտար բառերում պահպանենք կրկնակ բաղաձայնները, ինչո՞ւ գրենք կոմպոնենտ, կոմպունա։ Այս հարցում ճիշտ է տերմինաբանական կոմիտեի վերը հիշատակված որոշումը։ Հայերենում վերջին շրջանում զգալի է ուսերենի միջոցով անցած բառերի քանակը, այդ տեսակետից որոշ դեպքերում, պիտի հաշվի առնել նաև ուսերենի տառադարձությունը։

Տերմինաբանական կոմիտեն աստիճանաբար միօրինակություն է մտնում երկակի ուղղագրություն ունեցող բառերի գրությունում։

Միասնական ուղղագրություն հաստատելու հարցում զգալի է Ար. Չարիբյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարան»-ի դերը, որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 1947 թվականին։

1958 թ. որոշումով շուրջ 800 աշխարհագրական տեղանունների և անձնանունների գրություն է ճշգրտվել և սահմանվել նրանց միասնական գրությունը Վ. Փոթեյանի նախագծով⁵¹։

Նրկակի գրություն ունեցող բառերում միասնական գրություն է սահմանվում նաև արևմտահայերենում։ Ս. Պալյանն իր «Ուղղագրական կանոններ» գրքում (1962 թ.) բերում է հին, հնացած գրությամբ մի շարք բառեր՝ ցույց տալով նրանց նոր, ըն-

դուրեկի ձևը: Օրինակ՝ բաղինեղ—բախեղ, բաղխում—բախում, սպան-
նել—սպանել, սպաննություն—սպանություն, շեղք—ջնգոք, յա-
ւերթ—յաւերթ, փառայեղ—փառահեղ, մանրադնեղ—մանրադնեղ,
անտերուզ—անտերուզ, երբէք—երբէք, քնքոյշ—քնքոյշ, սրտա-
կեղք—սրտակեղք, դժբաղա—դժբախտ, եթդէ՛—եթդէ՛, իտըն-
դատ—վառընդատ, ուղեցոյց—սղեցոյց և այլն:

Եկատի ունենալով, որ արտասանության մէջ դեռ հանդի-
պում են կոտայում—կասայում, կոնֆեա—կանֆետ, պոմիդոր—
պամիդոր, միկրոֆոն—միկրաֆոն, ֆիրեկտոր—գիրեկտոր, Ռոս-
տով—Ռաստով, Նասայեկոն—Նասայեկոն, Նարկով—Նարկով գոյգ
ձևերը, որը ազդում է նաև գրավորի վրա, 1963 թ. հուլիսին Հ.
Բարսեղյանի նախագծով սահմանվում է միասնական գրութային և
արտասանութային՝ աղյուսակ, կոտայում, կոնֆետ, միկրոֆոն,
մոտոր, մորալ, պոմիդոր, պրոպագանդա, բալլետիկ, սովխոզ, դի-
րեկտոր, պրոֆեսոր, սրահատոր, ռեկտոր, Սեաստոպոլ, Մոսկովա,
Վարոնեժ, Կոստիկին, Վիկտոր, Վիլսոն, Տրեստոյ և այլն:

Խախտվել էր վրացական տեղանունների հայկական ավանդա-
կան գրութայինը, որում էին Բաթում—Բաթումի, Բորժոմ—Բորժո-
մի, Ախալքալաք—Ախալքալաքի և այլն, որը հետևանք էր նույն
կոմիտեի անցյալում կայացրած սխալ որոշման: 1960 թ. սեպ-
տեմբերի որոշմամբ ի-ով գրութայինը պահպանվում է միայն
Քրիլիտի բառում, որի մասին եղել է կառավարական հատուկ որո-
շում, մնացած վրացական անունները դրվում են առանց վերջնա-
հանգույն ի-ի՝ Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Քելալ, Կարդախ,
Մցխանթ, Սուխում, Մուրամ, Քոսթախա և այլն, զրանով վերականգ-
նվում է այդ անունների ավանդական գրութայինը⁵¹:

Մեր գրութային ամենագծվար բնագավառներին մեկը բաղա-
դրյալ հատուկ անունների ուղղագրութայինն է: Մինչև 1963 թվա-
կանը գործում էր ախ գրութայինների ուղղագրութային հետևյալ կա-
նոնը.

1. Բոլոր բաղադրիչները սկսել մեծատառով՝

ա) պետության անուններում (Սովետական Սոցիալիստական
Ռեսպուբլիկանների Միություն),

բ) ռեսպուբլիկանների անուններում (Հայկական Սովետական
Սոցիալիստական Ռեսպուբլիկա),

գ) ինքնավար մարզերի անուններում (Կենսային Ղարաբաղի
Այլստնոմ Մարզ),

դ) սովետական պետության գերագույն մարմինների անուն-
ներում (ՍՄԽԿ Գերագույն Գատարան),

ե) հանրապետական դերագույն կազմակերպությունների ա-
նուններում (Հայաստանի Կոմունիստական (բուլղարիկներ) Պար-
տիա),

զ) եզակի բնույթի պետական բարձրագույն պաշտոնների ա-
նուններում (Գերագույն Գլխավոր Հրամանատար),

կ) բարձրագույն պատվավոր կոչումների անվանումներում
(Սոցիալիստական Աշխատանքի Չորոս, Սովետական Միության
Չորոս),

ը) համաշխարհային եզակի երևույթի կամ կազմակերպության
անուններում (Անվտանգության խորհուրդ, Խաղաղության Պակտ),

2. Մեծատառով սկսել միայն առաջին բառը, մյուսները գրել
փոքրատառով, եթե դա պետական կամ հասարակական հիմնարկի
անուն է (ՀԱՄԽ Լուսավորության մինիստրություն):

3. Աշխարհագրական անուններում լրացումը գրել մեծատա-
ռով, իսկ լրացյալը՝ փոքրատառով (Ան ծով, Մեծ կամ Խաղաղ օվ-
կիանոս),

4. Եթե աշխարհագրական անվան լրացյալը հատուկ անուն է,
երկուսն էլ սկսվում են մեծատառով (Մեծ Պարսի, Նոր Արաբիկի,
Հին Հունաստան և այլն)⁵⁵:

Մրանք դեռ լսիվ չեն ներկայացնում քաղաղյալ հատուկ ա-
նունները: Բայց այնքան էլ փավական է, պատկերացնելու համար,
թե որքան դժվար է, մասնավորապես գրագրականի համար, հիշել այդ
դեպքերը: Եվ ահա տերմինաբանական կոմիտեն 1957 թվականին
հրատարակում է քաղաղյալ հատուկ անունների ուղղագրութային
չորս նախագիծ՝ լսելու հայ մտավորականության խոտոր: Առա-
ջին նախագիծում առաջարկվում է⁵⁶:

Ա. Բաղադրյալ անվան բոլոր բառերն սկսել մեծատառով.

1. պետությունների ընդարձակ և համառոտ հատուկ անուն-
ներում, Օրինակ՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանե-
րի Միություն, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ
Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Չինական Ժողովրդա-
կան Ռեսպուբլիկա, Հունգարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկա,
Սովետական Հայաստան, Սովետական Միություն: Ավտոնոմ (ինք-
նավար) հանրապետությունների անուններում (Բուրյատ-Մոնղո-
լական Ավտոնոմ Ռեսպուբլիկա, Նախիջևանի Ավտոնոմ Սովետա-
կան Սոցիալիստական Ռեսպուբլիկա և այլն):

2. Սովետական Միության և միութենական ռեսպուբլիկաների
պետական ու պարտիական գերագույն օրգանների և ժողովրդա-
դեմոկրատական երկրների պարտիական գերագույն մարմինների
հատուկ անուններում: Օրինակ՝ Գերագույն Սովետ, Ազգությունների

Սովետ, Մինիստրների Սովետ, Կերպուցւոյն Սովետի նախադաշնութուն, Գերագույն Գատարան, Զինաստանի Կոմունիստական Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Քաղաքական Բյուրոն և այլն:

3. Անհատական բնույթ կրող գերադույն պաշտանների և պատվավոր կտրումների հետևյալ անուններում՝ Գերագույն Գլխավոր Հրամանատար, Գերագույն Գատարագ, Մարշալ, Հերոս և այլն:

4. Համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եղակի քաղաքական, պրոֆմիտիսկական և հասարակական մարմինների հատուկ անուններում: Օրինակ՝ Պրոֆեսիոնալ Միությունները Համաշխարհային Ֆեդերացիա, Խաղաղութիան Կազմակերպությունը Համաշխարհային Կոնգրեսի, Մշտական Կոմիտե, Միավորված Սեզերի Կազմակերպություն, Անվտանգութեան Խորհուրդ և այլն:

Բ. Միայն լրացումներն սկսել մեծատառով, լրացուցիչները գրել փոքրատառով:

1. աշխարհագրական և աստղագիտական հատուկ անուններում (Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, Մեծ Արջ համաստեղություն),

2. Սովետական Միության Կոմունիստական պարտիայի⁵⁷ և ժողովրդական ղեկավարական երկրների պարտիաների անունները (ՍՍՄԿ Կոմունիստական պարտիա, Լեհաստանի Միացյալ Բանվորական պարտիա, Զինաստանի Կոմունիստական պարտիա և այլն),

3. համաշխարհային նշանակություն ունեցող պայմանականորեն եզակի անցքերի քաղաքային հատուկ անուններում (Հայրենական Մեծ պատերազմ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիա),

4. շքանշանների անվանումներում, բացի «Շքանշան» և «ատիճան» բառերից (Կարմիր Աստղի շքանշան, Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան, Երկրորդ աստիճանի Փառքի շքանշան և այլն): Եթե շքանշանի անունը տրվում է շակերտներով, մեծատառով սկսվում է առաջին բառը «Պատվո իշան» շքանշան):

Գ. Միայն առաջին բառն սկսել մեծատառով:

1. Սովետական Միության, ռեսպուբլիկանների մինիստրությունների, նրանց դերատեսչությունների, գիտահետազոտական հիմնարկների, գրադարանների և այլ ռեսպուբլիկանների հաստատությունների հատուկ անուններում (օրինակ՝ Երևանի Պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, Հայկ. ՍՍՌ Լուսավորության մինիստրություն, Պետական հանրային գրադարան, Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիա և այլն),

2. ժողովրդա-ղեկավարական երկրների և արտասահմանյան այլ պետությունների պետական բարձրագույն հաստատությունների, հիմնարկների ու կազմակերպությունների հատուկ անուններում (Հեղինակաբեղ ժողովրդական սրահատ, ԼԺՌ Պետական խորհուրդ, Բուլղարիայի ժողովրդական Ռեսպուբլիկայի ժողովրդական ժողով): Արտասահմանյան երկրների պետական բարձրագույն հաստատությունների և պարտիաների օտարալեզու անունները դրել փոքրատառերով (գոմիսպան, չեքոսլովակների պարտիա, ռեսպուբլիկաններ, մեքսիկո, պատլամենտ),

3. լակերտներում առնված զրական երկերի, լրագրերի, ամսագրերի, հիմնարկ-ձեռնարկությունների անուններում (Մեծ տան զավակները», «Փարիզյան կոմունա» կոլտնտեսություն, «Մուրճ ու մանդաղ» գործարան),

4. ռեզյուցիոն տոների և նշանավոր թվականների հատուկ անուններում (Մայիսի մեկ, Նոր տարի, Կանանց միջազգային օրը): Բաղադրյալ աշխարհագրական անուններում մեծատառով են գրվում փոխաբերական իմաստով գործածված անունները (Կրիմյոյ Ռոս, Յատնայա Պոլյանա, Կարմիր Հովիտ, Մեծ Արջ, Մեծ Եուն համաստեղություն):

Դ. Բաղադրյալ հատուկ անունների տառային հապավումները դրել մեծատառով (ՄԼԿՊ, ՀԿԵՄ, ԱՍՌՄ և այլն), իսկ բառամասերից քաղկացած հապավումների միայն առաջին բառը (Հայմատառ, Պետպլան):

Ե. Սույն որոշումը չի տարածվում դիվանագիտական թղթերում գործածված հատուկ անունների վրա, նրանք ունեն հատուկ ուղղագրություն:

Մյուս երեք նախագծերը առանձին տարբերություններով կրկնում են այս առաջինը: № 2 նախագիծում առաջարկված է միայն պետությունների անունների բոլոր բառերն սկսել մեծատառով, մնացած անունների՝ ինքնավար հանրապետությունների, մարզերի, դերագույն մարմինների, հիմնարկների, կոլտնների և այլն, միայն առաջին բառն սկսել մեծատառով, այդ թվում և նրանցից կազմված հապավումները: Այստեղ մի ծայրահեղություն էլ կա. եթե հիմնարկ-ձեռնարկության տեղը չի նշված, պիտի սկսել մեծատառով, օրինակ՝ Երևանի պետական համալսարան, բայց՝ Պետական համալսարան, Հայկական ՍՍՌ լուսավորության մինիստրություն, բայց՝ Լուսավորության մինիստրություն: Երրորդ նախագիծում առաջարկված է փոքրատառ գրել երկրորդ քաղաքային ևս Մեծ արջ, Կրիմյոյ ռոս և նման անուններում: Զորքող նախագիծում

գծում առաջարկված է Միության և հանրապետությունների հիմնարկ-ձեռնարկությունների անունների, դերատույն պաշտոնների ու կոչումների բոլոր բառերը դրել փոքրատառով: Ինչպես տեսնում ենք, առաջին նախագիծը որևէ բանով չի հեշտացրել այդ անունների ուղղագրությունը: Քիթնացման մասին մի քիչ մյուս տարբերակները հեղինակներն են մտածել: Այդ տարբերակների հիման վրա Ա. Արքահայրն ու Հ. Բարսեղյանը նոր նախագիծ են կազմել, որ Գ. Մնակի խմբագրությամբ ներկայացվել է տերմինաբանական կոմիտեի և հաստատվել 1963 թ. հունվարին: Ըստ այդ որոշման՝ Ա. բոլոր բառերն սկսել մեծատառով.

1. Բոլոր պետությունների, Սովետական Միության միութենական և ինքնավար հանրապետությունների ու ինքնավար մարզերի բաղադրյալ հատուկ անուններում, օրինակ՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Սովետական Հայաստան և այլն:

2. Այն աշխարհագրական ու պատմական անուններում, որոնց երկրորդ քաղաքը հատուկ անուն է (Տիգրան Երկրորդ, Աշոտ Երկաթ, Փոքր Մասիս, Մեծ Պարնի, Վերին Արտաշատ, Նոր Արեշ, Մահակ Պարթև, Իվան Ահեղ և այլն):

Բ. Միայն առաջին բառն սկսել մեծատառով՝ պահպանելով քաղաքության մեջ եղած հատուկ անվան մեծատառ գրությունը.

1. Աշխարհագրական անունները՝ Սև ծով, Հրոսիսային սանուցյալ օվկիանոս, Մեծ արջի համաստեղություն, Հրո երկիր, Մերձավոր արևելք, Վայոց ձոր, Հայկական պար, Փնանկ լիճ, Կրիվոյ ռոգ և այլն,

2. գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների անուններում, որոնք առնվում են շակերտների մեջ՝ «Հացի խնդիր», «Պիտներ կանչ», «Ամբոխները խելագարված» և այլն,

3. հիմնարկ-ձեռնարկությունների, կուսակցությունների ու կազմակերպությունների և հաստատությունների, շքանշանների անուններում, որոնք առնվում են շակերտների մեջ՝ «Մուրճ ու մանգաղ» գործարան, «Պատվո նշան» շքանշան, «Մայրական փառք» շքանշան, «Նոր կյանք» արտել և այլն,

4. պետություններից շնորհվող շքանշանների անուններում՝ Կարմիր աստղի շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Փառքի առաջին աստիճանի շքանշան,

5. համաշխարհային կազմակերպությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհեստակցական միությունների անուններում (Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգություն խորհուրդ, Արգելի լիգա և այլն),

6. բոլոր երկրների, Սովետական Միության, հանրապետությունների ու ինքնավար մարզերի կառավարական ու կուսակցական ղեկավար մարմինների անուններում (Գերագույն սովետ, Միության սովետ, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի, Ֆրանսիայի Ազգային ժողով, Անգլիայի Համայնքների պալատ, պապես նաև՝ Մեչլիս, Սենատ, Պառլամենտ, Ստորտինգ, Գումա և այլն),

7. պատմա-հասարակական համաշխարհային նշանավոր անցքերի, տոների անուններում (Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Հայրենական մեծ պատերազմ, Փարիզյան կոնուս, Մայիսի մեկ, Մարտի ութ, Նոր տարի):

Գ. Վերահիշյալ կանոնների մեջ չմտնող քաղաքային անվանումները, եթե չեն տեղայնացված, դրել փոքրատառով՝ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրություն, պետական պլանային հանձնաժողով, լուսավորության մինիստրություն, սովետական քանակ, սովետական կառավարություն, կոմունիստական կուսակցություն, բանվորական կուսակցություն, գերագույն զինավոր հրամանատար, սոցիալիստական աշխատանքի հերոս, զինավոր դատախազ, հերոսների մայր և այլն:

Դ. Հասպարություններում՝

1. տառային հասպարություններն ամբողջությամբ դրել մեծատառով (ԿԿ, ՍՍՀՄ, ԱՄՆ, ՀԿԵՄ, ՄՏԿ, ՀՕՊ, ՊԱՊ և այլն): Հասարակ անուն դարձած մի շարք հասպարություններ դրել փոքրատառով (բուհ, նէպ, ֆէս, զագս),

2. բաղադրյալ հատուկ անուններ ոչ տառային հասպարությունների միայն առաջին տառը դրել մեծատառով (Կենտկոմ, Պետխորհուրդ, Ժողպայատ և այլն),

3. հասարակ անվան դործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչ առաջին տառը (Հայկինո, Հարպետհրատ, Համկոմկուս, Հայմատառ, Գրոզնեֆտ, Լենֆիլմ և այլն),

4. խառը տիպի հասպարությունների նաև առանձին բաղադրիչների առաջին տառերը (ՍՍՀՄ Միություն, ՀամԿԵՄ, Հայկական ՍՍՀ, ՀամԿ(բ) և այլն):

Ե. Գիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հղորդումների մեջ թույլատրվում է մեծատառի ազատ գործածությունը՝ ըստ ընդունած կարգի:

Եվ սա կոչվում է քաղաքացիական անունների ուղղագրութ-
յան հեշտացում, պարզեցում: Հայերենի ամբողջ ուղղագրութ-
յան կանոններն այնքան կետեր ու ենթակետեր չունեն, որքան միայն
այս անունները: Ինչպե՞ս կարող է դարձանական երկխան այս կե-
տերն ու ենթակետերը սովորել, ինչպե՞ս կարող է տարբերել, թե
այս անվան առաջին բառը մեծատառով պիտի սկսել, իսկ այս
անվանը՝ փոքրատառով, երկխայի համար հե՞շտ է որոշել տվյալ
բաղադրյալ անվան նշանակությունը՝ համաշխարհային է, տեղա-
կան է, պետական է, ղեկավար մարմին է, կրթանշան է, թե շրա-
նշան, շրջում է, բաղկում է, թե կենսակամ և այլն, և այլն: Նայեցեք
հասարակումների ուղղագրության կանոններին, ո՞ր երկխան դուրս
կհանի զրանից, մասնավանց որ կուս սկզբունք էլ չկա: Օրինակ՝
Ինչո՞ւ՝ ՄՏԿ, ՀՊԳ, ՊԱԳ մեծատառով են գրվում, իսկ բուն, զեն
փոքրատառով, չէ՞ որ դա իր հերթին զիջարացնում է գրությունը:

Հայերենում հատուկ անունները շատ ուշ են սկսել մեծատա-
ռով գրվել, մինչև 1918-19-ական թվականները փոքրատառով էին գրվում,
կան յեզուներ, որ առհասարակ մեծատառ չունեն, իսկ այսօր մենք
գասերի ու ենթադասերի ենք վերածել անունները, նրանց գրությու-
նը որոշում ենք ունեցած նշանակությամբ: Նույնիսկ խմբագրու-
թյուններում ու հրատարակչություններում այս կետերն անզիջ
ըզիտեն, իրենց զգոցում պահում են այն և հարկ եղած դեպքում
նայում են, որ չսխալվեն: Բաղադրյալ հատուկ անունների ուղղա-
գրության հարցը յուժնով չպետք է համարել: Անհրաժեշտ է թե-
թեկացնել բոլոր այդ կետերն ու ենթակետերը, ծանոթություններն
ու բացատրությունները: Ոչ մի կարիք չկա կառավարական և կու-
սակցական գերագույն օրգանների, շրանշանների, տոների անուն-
ները, որոնք անվանումներ են և ոչ անուններ, գրել մեծատառով:
Եթե տառային հարավումների բոլոր տառերը մեծատառով են գր-
վում, բուն-ը կամ զագս-ը բացատրություն չպիտի անել: Անհան-
րապես բացատրություններից պիտի խոսապիել, դա խճողում է
գրությունը:

Մեր կարծիքով՝ քաղաքացիական անուններից մեծատառով պիտի
սկսել միայն՝ 1. պետությունների անունները՝ Երկրորդ և մյուս
բաղադրիչները գրելով փոքրատառով՝ Ամերիկայի միացյալ Նա-
հանգներ, Սովետական միություն և այլն: Երկրորդ քաղաքիչը
մեծատառով սկսել միայն այն դեպքում, երբ նա ինքնին հատուկ
անուն է, ինչպես՝ Սովետական Հայաստան:

2. Աշխարհագրական անունները՝ Սև ծով, Սևանա լիճ, Ուրալ-

յան լեռներ, Եթե սրանց երկրորդ քաղաքիչը նույնպես հատուկ
անուն է, երկուսն էլ գրել մեծատառով (Նոր Արաբկիր):

3. Վերնագրերը («Սովետական Հայաստան», «Պիտեր կանչ»,
«Սովետական դպրոց»): Մնացած անունները, այդ թվում և հասար-
ակումները, գրել փոքրատառով: Մեծատառով չէ, որ պիտի հարգենք
կառավարական ու կուսակցական գերագույն մարմիններին կամ
շրանշաններն ու կոչումները:

Առհասարակ հատուկ անունների ուղղագրությունը շատ ավելի
բարդ է սփյուռահայերենում: Այստեղ բացի մեծատառի մեր եր-
կու գրական լեզուների համար քնդհանուր գրությունից՝ մերևա-
դրեր, աշխարհագրական, անուններ, անձնանուններ, վերջուկե-
տից հետո և այլն, մեծատառով են գրվում նաև՝

1. Աստված, Արարիչ, Տէր, Բարձրեալ, Նախախնամություն,
2. ազգերի անունները, երբ իրբե գոյական են գործածվում
(Հայր աշխատասէր է, Յորից խորամանկ),
3. անձնյի անունների փոխարեն անված պաշտոնի անուն-
ները (Մ. Պատրիարք, Վահագառ, Նորին Սրբազանութիւնը),
4. անձնավորված զաղափարների և իրերի անունները (Մալու-
թիւնը աղքատութեան կը մղէ, Այլքատութիւնը հաճոյքներէ կը գրկէ
մարդը),
5. ընդհանուր կողմից ընդունված մակդիրը, որ անձնավորված
զաղափար է արտահայտում (Հայրիկը ուշացաւ, Մայրիկը դուրս
դեսաց),
6. ամիսների անունները, շաբաթների օրերը (Մարտ, Զորեք-
շաբթի)՝

Նկատվում է, որ ավելուքահայ որոշ շրանշաններում որոշ մտա-
վորականներ ձգտում են ուղղագրության հարցում միջին դիժ բըռ-
նել: Եատերը բառավերջի անձայն յ-ն չեն գրում: Ղազկիչանն իր
հիշյալ գրքում հիշատակում է Լուիթի Մինասին, որն իր երկու
հատորանոց բանաստեղծություններում բառավերջի անձայն յ-ն չի
գրում (կա, աղջկա, կուլա, կիյնա և այլն): Ա. Խաչատրյանի վերո-
հիշյալ «Սովետական ուղեցույց»-ը թեև ուսուցանում է ավանդա-
կան ուղղագրությունը, բայց նրա բերած մի շարք բառերի գույդ
ձևերից երևում է միտում՝ բաղաձայնների ուղղագրությունը մոտեց-
նել տրևելաճայնների գրությանը, օրինակ՝ անհեթեթ—անհեթեթ⁵⁸,
աքցան—աքժան, առեղ—առեղ, քամբակ—քամպակ, գմբեթ—գմբեթ,
զղացում—զղածում, թոշակ—թոշակ, կաթա—կատա, կէտա-
դրութիւն—կետադրութիւն, հերիաթ—հերեաթ, ձգտում—ձկտում,

ճիշտ—ճիշտ, սրունք—սրունք, վախճան—վաղջան, տարեց—տարեց և այլն:

Գրայնորի միջոցով երկու լեզուները մերձեցնելու արտահայտություններից է նշ. Հովհաննիսյանի «Սոցիալիզմը Հայաստանի բարեփոխյալ ուղղագրությունը» գրքուկը, որ սուված է մեր ուղղագրությանը, 1945 թվականին, Հաշնպում: Հեղինակը ներկայացնում է մեր այսօրվա ուղղագրությունը, որ սովորեն սփյուռքահայերը և կարգան խորհրդային երկրի հայերեն գրականությունը: Այդ նպատակով էլ նա օգտագործում է՝ հայաստանյան, գրականություն, դյուրըմբռնելի, ամեն, շատեն, հնչյունական, փոխված, ուղղագրության, փոփոխությունները գրությունները:

Միասնական ուղղագրություն ստեղծելու նպատակով Ռուսիայահայ «Նոր կյանք» շաբաթաթերթը հետևում է Սովետական Հայաստանում 1940 թ. ընդունված ուղղագրությանը: Ի տարբերություն սփյուռքահայ մյուս թերթերի ու գրականության, նա գրում է՝ կմառած, կիշն, կեշանակ, կսպառնա, հանգիստանա, Գերմանիա, կրնա, կնանձնարարի, պոլություն, պատերազմեն, երկիրներ, Հայաստանեն, դժվար, հիվանդություն, պերճախոս, վրա, շկրցան, մոտ, կտեսնեի, թե, նվազման, երկխոսություններ, զորավոր և այլն (1971, մայիս):

Ընդարձակվում են մեր և սփյուռքահայության գրական, մշակութային կապերը, այդ հոդի վրա օրավուր հրամայական պահանջ է դառնում երկու հատվածների լեզուն մերձեցնելու հարցը: Թանավոր խոսքի միասնությունն ստեղծելը դժվար, եթե ոչ անհնարին, գործ է, ուստի մտավորականության ուղղությունն ուղղվում է գրավորի, ուղղագրության միասնության հարցին: Սփյուռքում տրպազովում են ուղղագրության վերաբերյալ բանավեճային ընդլայնումները հոգվածները: Սփյուռքահայության մի մասը պահպանում ու պաշտպանում է ավանդական ուղղագրությունը հանձին վեներելի ու վիեննայի Միսիթարյանների, մյուս մասը, հասունացած համարելով ուղղագրական բարեփոխության հարցը, կամ ընդունում է Արեղյանի առաջարկները՝ իբրև մաշտոցյան սկզբունքների հետևողական կիրառություն և կամ, ծայրահեղ համարելով այն, կողմ է մասնակի բարեփոխմանը:

1967 թ. հուլիսին Բեյրութի «Ձարթոնք» թերթում տպագրվում է ուսուցիչ Ս. Ստեփանյանի հոդվածաշարը, որտեղ հեղինակը, պաշտպանելով Արեղյանի ուղղագրությունը, նահանջ է համարում 1940 թ. ուղղագրական մասնակի բարեփոխումը: Հոգվածագիրը, սակայն, մի երկու հարցում առարկում է Արեղյանին: Նախ սխալ

է համարում Արեղյանի կարծիքը, թե է-ն ու ե-ն բառամիջում և բառավերջում նույն հնչյունն են, ընդունելով նախնայաց քաջ է գոց» և-երի գոյությունը, սխալ է համարում է-ն այբուբենից դուրս լցելը:

Հոգվածագիրը դեմ է նաև եա, իւ, եօ տառակապակցությունների փոխարեն գրել յա, յու, յա: Պահանջում է և-ը հանել կամ գործածել միայն շաղկապի դերում, գրել Աետն և ոչ՝ Աետն Այս հոգվածաշարի կապակցությունները թվով Թեպետ Ընկերները 1970 թ. գրում է «Մտերիմ գրույց ուղղագրության հարցի շուրջ» գրքուկի շրջանում ընդունելով Ս. Ստեփանյանի գրությունները՝ թվով կը գրում է, թե սփյուռքահայ ընթերցողի համար դժվարություն է ներկայացնում երկու լեզուների ոչ այնքան ուղղագրական տարբերությունը, սրբան բերականական, բառասպաշարային ու հնչյունափոխական: Մանուկ Արեղյանի ուղղագրությունը, թեև ոչ անթերի, մեծուպաշունչ է, իսկ մասնակի բարեփոխումը, ինչպես երկուսն էլ և ո-ի վերականգնումը, նահանջ է մեծուպայան սկզբունքից:

Բոլորովին անհիմն է կարծել, թե արտասահմանյան հայությունը միակամորեն դեմ է նոր ուղղագրությանը, ասում է նա, մանավանդ նոր սերնդին անհրաժեշտ է դյուրին, ուստի հնչյունային գրություն: Այս համոզմունքին եղած մաքրիկ լռել նն և խոսել են միայն ավանդական ուղղագրության կողմնակիցները: Եթե նրանք էլ խառնվեին այս հարցի ընթացությանը, գուցե նոր ուղղագրությունը լմերժվեր սփյուռքահայության կողմից:

Հեղինակը գտնում է, որ ավելի չավ կլիներ ուստի փոխարեն ընդունել օ-ն, իսկ ո-ն գործածել ու հնչյունի համար, մանավանդ որ ոչ կապակցության մեջ ո-ն ու-ի նշանագիրն է (ծոյլ, բոյս, բոյր), դրանով օգտահարուկ կըլլար «ու» երկատառ ձայնը, որ իր կազմով չի համապատասխաներ մեծուպայան սկզբունքին» եզրակացնում է նա:

Առաջարկում է «ամուսնացնել» այբուբենի ե և է տառերը, դրանք հայտարարելով մեկ հնչյուն, և բառակազմում ու վերջում գրել է տառով, իսկ բառամիջում՝ ե: Համաձայն է Մոսկովայանի կարծիքին, թե չի կարելի իւ երկհնչյունի փոխարեն գրել յու Առաջարկում է իւ-ի փոխարեն օգտագործել և տառը, գրել հեպտաբև, սևն, փոխանակ հիսիս, բիս, սին գրելու: Այբուբենում և-ը կգրավի ի-ի թողած տեղը՝ և, փ, ք, ուր և-ը կհնչի՝ ի:

Այսպիսի, ոչ գիտական առաջարկներ, ինչպես տեսանք, մեր ուղղագրության պատմության մեջ շատ են հղել, բայց հասարակ

կուսիցները շի ընդունելու ձեպեհեղանակի այս գրքին անդրադարձել է է. Աղայանը⁵⁹, Գնահատելով հեղինակի ձգտումը՝ հեշտացնել հայ ժողովրդի երկու հատվածներին պատճառ հաղորդակցության միջոցները, Աղայանը, սակայն, ընդունելի չի համարում նրա առաջարկները: Նախ սխալ է համարում 1940 թ. ուղղագրական մասնակի բարեփոխումը արտասահմանի հայության «անհաշտ գիրքով» սլաոնառաքանելը: Ե, է, ո, օ տառերի գործածության «աբեղյանական մկգրությունը ևս որոշ անպատեհությունների առիթ էր տալիս և ստեղծում էր այլ կարգի դժվարություններ ու սխալներ», խախտում էր երբեմն գրություն և արտասանության համապատասխանությունը, ստեղծում միևնույն բառի ոչ միասնակի գրություն (չերանգ—բազմերանգ, վորակ—բարձրորակ, գալիս ևմ, գալու չեմ և այլն): Մյուս կողմից էլ չի կարելի հաշվի շառնել մեր գարավոր մատենագրությունը և աղավաղել բառերը, խոզի նրանց կապը նախորդներին: Սրանցով է պայմանավորված այդ մասնակի բարեփոխումը նոր ուղղագրության մեջ: «Մենք համոզված ենք, որ այս փոփոխությունը նահանջ չէր, այլ ճշտում», եղրակացնում է Աղայանը: Անդրադառնալով ձեպեհեղանակի առաջարկներին, հողվածագիրը մերժում է ու-ի փոխարեն ո տառն օդտագործել, իւ-ի փոխարեն՝ ա-ը: Առաջարկում է և-ը իբրև առանձին տառ հանել այբուբենից, ինչպես որ չկար մինչսովետական այբուբենում⁶⁰, և-ը տառ չէ, այլ էվ կամ շէվ՝ հնչյունակապակցությունների նշան: Նա շունի իր մեծատառը և բառարաններում թյուրիմացություն տեղիք է տալիս, միևնույն բառը մեծատառով գրելիս բառարանում այլ տառից հետո է ընկնում, իսկ փոքրատառով գրելիս՝ այլ:

Չի կարելի ամբողջովին արհամարհել ուղղագրության ստուգաբանական հիմունքը և բառակազմում ու վերջում գրել է, իսկ բառամիջում՝ Ե, այս դեպքում ձեպեհեղանակի անտեսում է նաև բառակազմի ե-ի յե հնչումը:

Այս առաջարկության դեմ գրել է նաև ուսուցիչ Զ. Թորոսյանը⁶⁰ Ըստ որի՝ Հայաստանի ներկա ուղղագրությունը մշակված է Մեսրոպի այբուբենի սկզբունքով, բայց իւ, եօ տառակապակցությունների պակասը զգալի թերություն է: Տառաբարձությունը պիտի կատարել արևելահայերի նման, քանի որ նրանք հավատարիմ են մնացել Մեսրոպի այբուբենին: Անդրադառնալով Ս. Ստեփանյանի առաջարկին, թե ամենուրեք, ուր լրավում է ը-ն, պիտի գրել, մերժում է այն, իրավացիորեն նշելով, որ Մաշտոցն էլ գաղտնավանկի ը-ն չէր գրում: Առաջարկում է հին հայերի նման օտարագրի X-ն տառադարձել ք և գրել՝ քինին, քուլերա, քրոմ, քրոնիկ, քիմիա, քլոր, սքեմ, սքոլաստիկ և ոչ թե՛

խինին, խուլերա, խրոմ, խրոնիկ, խիմիա, խլոր, սքեմ, սխոլաստիկ: Բ-ն տառադարձել վի և գրել՝ Ափրիկէ, փարոս, փափոք, Ափրոդիտե, Քսենոփոն և ոչ՝ Աֆրիկա, Ֆարոս, Ֆոսֆոր, Աֆրոդիտե և այլն: Առաջարկում է Ե տառն օգտագործել ո և Ե տառերի փոխարեն, իսկ ո-ին հանձնել բաղաձայնական ու-ի դերը, ուրեմն գրել նսէր (սիոս. նոսէր կամ նեէր), աստուած (փոթա. աստուած), գրած (սիոս. դրուած) և այլն:

Նվ այսպես՝ հաճախ ենք հողվածներում հանդիպում մի խելոք, տրամաբանական առաջարկի հետ մի տարօրինակ, անտրամաբանական, լեզվի պարզացումն ու օրինաչափությունները հաշվի չառնող առաջարկի:

Իր վերոհիշյալ հողվածում⁶¹ Ս. Ստեփանյանն էլ մի նոր հարց է առաջ քաշում, իբր թե Մեսրոպի ժամանակ բառամիջի լավող բուրբ-երը գրվել են, սրովհետև Մեսրոպի սկզբունքն է եղել յուրաքանչյուր հնչյուն արտահայտել մի գրով, եթե ը-ն արտասանվել է, ուրեմն և գրվել է: Հետագայում այդ ը-ն չեն գրել, քարել են հայերենի ը-երը: Ստեփանյանի կարծիքով՝ սկզբում եղել է բազմաբաղ, ցեղրսպան, առանց ա հոդակապի, քանի որ ըստ հայերենի օրենքի, երբ հաջորդ ըաղադրելը ձայնավորով է սկսվում, հոդակապ չի ստանում, ինչպես՝ դասընկեր, նորընտիր, դուրընթեռնելի և այլն: Այդպես էլ գրվել են անըստվեր, անըստվեր, բազմաբաղ: Հայկազյան բառարանում կան բառեր որոնց ը-երը անչարդ են մնացել՝ ըստանձնել, ըստակ, ըստզրտանք, ըստերք, ըստդեռ և այլն: Նկնելով իր այս սխալ ենթադրությունից, թե Մեսրոպի ժամանակ գաղտնավանկի ը-ն գրվել է, հողվածագիրն առաջարկում է այսուհետև վերականգնել, իր ասելով, «չարդված» ը-ն, դասեր է նաև ճիշտ կարգալու համար: Կառմուռ-ը կարդում են նաև կառ-մուռ, մուրիկը՝ մու-րիկ, քուռել-ը՝ քու-ռել, ցեցվել-ը՝ ցեց-վիլ, սարկամիտը՝ ըստբկամիտ, փոխանակ կառմուռ, մուրիկ, քուռելի, ցեցրվիլ, ըստբկամիտ, այսինքն ը գնում է հնչյունափոխված ձայնավորի փոխարեն՝ ըստուկ-ըստբկամիտ: Այս առաջարկն ընդունել է նաև Թոմար ձեպեհեղանակը: Սակայն մտավորականությունը այս սխալ ու չհիմնավորված ստաջարկը մերժեց կամ իր լռությունը ու անտարբերությամբ թողեց անհետևանք:

Մենք արդեն տեսանք, որ դեռ միջնադարից որոշ գրիչներ հնչյունափոխության հետևանքով ստացված ը-ն գրում էին: Տասնութերորդ դարում դա ավելի է տարածվում, այս անգամ արդեն սպազիր գրքերում, Բագրատունին նույնիսկ կանոն է դարձնում հնչյունափոխությունից ստացված ը-ն գրել (մարնել, կտրեմ),

բայց նա տեսնում էր, որ բառերում ը-երի կոտակում կլիներ, և զգուշացնում էր՝ յուրաքանչյուր բառում մեկից ավելի ը չզրկել: Այսպես էր վարվում Երբեմն նաև Ավետիքյանը, շք. Աճառյանն էլ է գրում, որ նրբեմն ը-ն չզրկել իմաստի երկվություն է առաջացնում: Անոյի «Անիս»-ում կարգալուծ. «Կարելի չէր շարժամարձեղ պատասխանի պատկառը», մի պահ տատանվում է, թե դա պատի նման է նշանակում (պատ-ա-նման), թե՛ պատանել—պատանում բառի սևուցականն է⁶², Այդպես էլ ը-ի արտասանությունը է տարբերակվում սարգ, վարդ, կարդ, հորդ բառերի իմաստ, և թե ղ-ը է հոգ է ավելացված սար, վար, կար, հոր բառերի վրա, նրան նախորդում է անդիր ը-ն, իսկ Լթե արմատի ղ-ն է, արտասանվում է առանց ը-ի: Բայց սրանք եզակի դեպքեր են ու նախադասություն մեջ դիտակցվում են, և ը-ի բացակայությունը իմաստի խճողման պատճառ չի գտնում: Մեր նախնիներն էլ դիտակցել են, որ ը-ի բացակայությունն իմաստի վրա չի ազդում, և բառն ավելորդ տառով շժանրաբնույթի ճամար չեն գրել:

Աթե առհասարակ համեմատելու լինենք սիյուսթում գործող ուղղագրությունը մեր այսօրվա ուղղագրության հետ, կստանանք հետևյալ նույնությունն ու տարբերությունը.

1. Երկու հատվածում էլ բառակերպում օ հնչյունն արտահայտվում է օ տառով, օ-ով սկսվող բառերը այն պահանջում են անձանցման և բարդացման ժամանակ (օր, ամենօրյա—ամենօրեա):
2. Բառակերպում օ հնչյունն արտահայտվում է է տառով, որը պահանջում է նաև անձանցման ու բառաբարդման ժամանակ (էական, ամենատեական, էք, վայրէջք):
3. Բառակերպում յե հնչյունակապակցությունն արտահայտվում է Ե տառով (հրեկ, ես):
4. Բառակերպում յօ հնչյունակապակցությունն արտահայտվում է ո տառով (որակ, ռիակալ, ռհմակ, որբան):
5. Օտար բառերի օ-ն բառակերպում գրվում է օ, բառամիջում օ տառերով (Մոսկվա, օրկան, օրերա կամ Մոսկվա, օրգան, օպերա):
6. Սփյուռքահայ գրականության մեջ բառերը Ե տառով չեն վերջանում, բառակերպում սովորաբար ունենում են է տառը, իսկ մենք է-ն գրում ենք միայն մի քանի բաղադրյալ բառերում (որևէ, ինքևէ), մնացած բառերում բառակերպում գրում ենք Ե տառը:
7. Մենք բառամիջում է-ն գրում ենք միայն է-ով սկսվող բառերի անձանցման կամ բարդացման դեպքում, մնացած դեպքերում գրում ենք Ե տառը: Սփյուռքահայերը բառամիջում է-ն գրում

նաև ա. գոյականների, ածականների, մակբայների վերջնահնչյուն և-ից առաջ յովսղ Ե-ն (պարեն, Սուրեն, խստօրեն), ք. հատուկ անուններում ս և չ տառերից առաջ (Մովսէս, Արիստակէս, Սամուէլ, Մանուէլ, Արտաշէս), գ. բայերի անկատար ժամանակի ձևերում (կը խմէի, պիտի խմէի, խմելի), զ. խոնարհված բայերի Գ-ին նախորդող դիբբում (տու՛ր, կերէ՛ք, կը խմու՛ր), Ե. ձայնավորին նախորդող Ե-ն, Եթէ և հնչում ունի (թէական, լոստական), զ. առէն (յունարէն, շինարէն), աւլա (ինկաւտ, բուրումնաւտ), Եղէն (ամանեղէն), Լ՛ (չբօրհնէ՛ք, արժէ՛ք), պլս (մեծապլս), օրէն (կուսօրէն) վերջավորություններում: Մնացած դեպքերում բառամիջում գրում են Ե, մեզ նման:

8. Մենք բառամիջում օ-ն գրում ենք միայն վերը նշված բաղադրյալ ձևերում (ամենօրյա, անօգուտ), իսկ սփյուռքահայերը պահպանել են օ-ի ավանդական գրությունը՝ նախնայաց աւ երկբարբառի փոխարեն ստեղծված օ-ն: Ուրեմն նրանք բառերն ավարտում են եօլ, օն, օնլ, օրէն, օրէլ, օս, օր, օր, օս, օն տառակապակցություններով, իսկ մենք՝ յով, օն, օնլ, օրէն (համեստօրեն), օրէլ, օս, օր, օն տառակապակցություններով:

9. Մենք Վ հնչյունն ամենուրեք արտահայտում ենք վ տառով, նրանք պահպանում են ավանդական գրությունը՝ բառակերպում և ո տառից հետո գրում են վ, բաղաձայնի ու ձայնավորի միջև՝ ո՛. (աստուած), ձայնավորների միջև, բառակերպում Ե, ի, ա տառերից հետո՝ յ (թիւ, թիւ, աւաղ):

10. Մենք քառափնջի համը յ-ն չենք գրում, նրանք գրում են:

11. Մենք բառակերպում Բ արտասանելիս միշտ Բ ենք գրում, նրանք պահպանել են բառակերպի յ-ի դասական գրությունը: Մենք գրում ենք Հակոբ, Հրանտ, Հուդա, Հովհաննէս, հանճար, հատուկ. նրանք՝ Յակոբ, Հրանտ, Յուդայ, Յովհաննէս, հանճար, յստակ:

12. Մենք Եա, իւ, եօ տառակապակցությունների փոխարեն գրում ենք յա, յու, յո տառակապակցությունները, նրանք պահպանել են դրանց դասական Եա, իւ, եօ գրությունները:

13. Մենք օտարազդի ձայնեղները տառադարձում ենք ձայնեղներով, խուլերը՝ խուլերով, շնչեղ խուլերը՝ շնչեղ խուլերով, նրանք օտար խուլի դիմաց գրում են շնչեղը, ձայնեղի դիմաց խլահնչյուն տառերը՝ Ե>պ, ց>կ, մ>տ, Կ>ք, լ>թ և այլն:

Տողադարձը միատեսակ է կատարվում: Մեծատառերի կիրառության տարբերությունը նշել ենք:

Ամփոփենք. հայերենի ուղղագրությունը Ե գրում գերազանցապես հնչյունային է եղել, քացարույթյամբ երկբարբառների, ո-

որոնք մեկից ավելի տառերով են արտահայտվել: Գործել է նաև ստուգաբանական (ձևաբանական) սկզբունքը: Վաղ միջնադարում (ԺԹ—ԺԳ դար) կատարվում են ուղղագրական առաջին բարեփոխումները, Արիստակես Գրիշը սահմանում է բառավերջի համը յ-ն շարքերու քննարկը: Բաղաձայնին նախորդող դիրքում օ հնչող ալ տառակապակցության փոխարեն հանդես է գալիս օ տառը, հայերենի արտաբերում ավելանում է նաև ֆ տառը:

Սկսած վաղ միջնադարից տեղաշարժ է կատարվում բաղաձայնական համակարգում, որն արտահայտվում է փոխառույզ բառերում և միջին հայերենով գրված ստեղծագործություններում: Գրաբար դրականության մեջ պահպանվում է բաղաձայնների ավանդական գրությունը, հնչյունային ու ստուգաբանական սկզբունքներին ավելանում է և երրորդ սկզբունքը՝ ավանդականը: ԺԸ դարում կայունանում են տողադարձը և հասուկ անունները մեծատառով գրելու կարգը:

XIX—XX դարերում տեղի են ունենում երկարատև բանավեճեր և, է, վ, լ, ու տառերի գրությունը: Բանավեճողների մի խումբը հենվում է արտասանության վրա, մյուսը՝ ավանդական գրության: 1913 թ. Արեգյանը քննություն է ներկայացնում ուղղագրության բարեփոխման իր առաջարկները, որոնք լռելյայն մերժվում են: 1922 թ. գրանք կառավարական որոշումով պարտադիր են դառնում: Կատարվում է ուղղագրական երկրորդ բարեփոխումը, սակայն սփյուռքահայությունը չի ընդունում այն և պահպանում է ավանդական գրությունը: Ստացվում է երկու գրական լեզու՝ երկու ուղղագրություն:

1940 թ. տերմինաբանական կոմիտեի որոշմամբ կատարվում է հայերենի ուղղագրության երրորդ (մասնակի) բարեփոխությունը: Այստեղ նույն վերափոխումն է, որ օ, է տառերը, որոնք հանիրավի հանված էին 1922 թվականին:

Ե դարում մեր նախնիները փոխառույզ բառերը տառադարձել են ըստ փոխատու լեզվի արտասանության և որոշեցան գրությունը հնչական է եղել, տառերն էլ են համապատասխանել միմյանց՝ ժ—զ, լ—տ, Ե—բ կ—կ և այլն:

Միջին հայերենի բաղաձայնական համակարգում կատարված տեղաշարժի հետևանքով ստացվում է տառադարձության երկու սկզբունք՝ հին անունները (Աստվածաշնչի) պահպանում են ավանդական գրությունը, նոր փոխառությունները տառադարձվում են ըստ նոր արտասանության: Այս տառադարձությունը պահպանվում է նաև հետագայում արևմտահայերենում: Արևելահայերենում,

նում, սակայն, պահպանվում է ավանդական տառադարձությունը՝ ժ—զ, լ—տ, Ե—բ, կ—կ և այլն:

Այսօրվա հայերենի ուղղագրության ամենախոտելի կողմը երկփեղկվածությունն է, ոչ միասնական գրությունը: Հայաստանում ընդունված նոր ուղղագրությունը վատ չէ 1940 թ. մասնակի բարեփոխումից հետո: Վատն այն է, որ մեր սփյուռքահայ եղբայրները համառ կերպով չեն ընդունում այն: Պե՞տք էր, արդյոք, 1922 թ. ուղղագրական բարեփոխումը, կարելի՞ էր կատարել այդ փոփոխությունները: Այո՞, կարելի էր, բայց՝ ստանց ծայրահեղությունների, շփամբար, ինչքան Աբեղյանը նախատեսել էր 1913 թ. առաջին շրջանի համար, և անպայման սփյուռքահայության մասնակցությամբ ու համաձայնությամբ: Աբեղյանը չպիտի հրաժարվեր միասնական ուղղագրության իր սկզբունքից: Այժմ ի՞նչ է մընում մեղ անել մեր ժողովրդի նրկու հատվածների միջև ստեղծված բացվածքը լցնելու կամ գուցե նեղացնելու համար: Փոխադարձ վիշտաներով գրավորի միություն ստեղծել: Միասնական քերականություն, մասամբ և քառապաշար շենք կարող ունենալ, դո՛ւն գրավորը միասնական լինի: Դրա համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

- ա) հայերենի երկու գրական լեզուների համար սահմանել միասնական տառադարձություն արևելահայերենի սկզբունքով, բ) մեծատառերի միասնական գրություն, գ) վերականգնել ևա, իւ տառակապակցությունները, դ) պարտադիր դարձնել Ե—է, ռ—օ, Վ, ույ, յ տառերի՝ Հայաստանում ընդունված ուղղագրությունը, ե) պահպանել բաղաձայնների ավանդական ուղղագրությունը, զ) փոխառույզ բառերի միասնական տառադարձություն պահպանելու նպատակով ստեղծել փոխառույզ բառերի ուղղագրական քառարան՝ տերմինաբանական կոմիտեի հաստատմամբ⁶⁸: